

# ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ

N 1 (60) 2021

Հիմնադրվել է 1998 թվականին

Գիտական, տեսական, քննադատական-  
հրապարակախոսական, երաժշտական ամսագիր

Երաշխավորված է՝ ԵՊԿ գիտական խորհրդի կողմից 1996 թ.

## ԽՄԲԵԳՐԱԿԱՆ ԿՈՒԵԳԻԱ

**ՍՈՒԱ Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ** (խմբավար, պրոֆեսոր, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, ԵՊԿ ղեկավար,  
ԵՊԿ գիտական խորհրդի նախագահ)

**ԼԻԼԻԹ Վ. ԵՐԵՂԱԿՅԱՆ** (արևելագետ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, Փարիզի  
«Արարատ» միջազգային ակադեմիայի թղթակից ակադեմիկոս, ԵՊԿ կառավարման խորհրդի նախագահ)

**ԾՈՎԻՆԱՐ Հ. ՄՈՎՍԻՍՅԱՆ** (երաժշտագետ, արվեստագիտության թեկնածու, դոցենտ, ԵՊԿ գիտական գծով պրոռեկտոր)

**ՍԵՐԳԵՅ Գ. ՍԱՐԳՍՅԱՆ** (դաշնակահար, պրոֆեսոր, Լեհաստանի արվեստի վաստակավոր գործիչ,  
«ԵՊԿ հրատարակչական» խորհրդի նախագահ)

**ՕԼՅԱ Յ. ՆՈՒՐԻՋԱՆՅԱՆ** (երաժշտագետ, արվեստագիտության թեկնածու, դոցենտ, ԵՊԿ գիտական խորհրդի գիտական քարտուղար)

**ԱՐՄԵՆ Բ. ՍՄԲԱՏՅԱՆ** (կոմպոզիտոր, պրոֆեսոր, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, ամսագրի հիմնադիր-տնօրեն)

**ԳՈՀԱՐ Կ. ՇԱԳՈՅԱՆ** (երաժշտագետ, Փարիզի «Արարատ» միջազգային ակադեմիայի թղթակից ակադեմիկոս,  
«ԵՊԿ հրատարակչական» հրատարակիչ, ամսագրի հիմնադիր-գլխավոր խմբագիր)

**ՄԱՐԳԱՐԻՏ Ա. ՌՈՒՄԿՅԱՆ** (երաժշտագետ, քննադատ, արվեստագիտության դոկտոր, ՀՀ վաստակավոր գործիչ)

**ՍՎԵՏԼԱՆԱ Վ. ՍԱՐԳՍՅԱՆ** (երաժշտագետ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ և Լեհաստանի մշակույթի վաստակավոր գործիչ)

**ԱՆՆԱ Ս. ԱՐԵՎՇԱՏՅԱՆ** (միջնադարագետ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ)

**ԺԱՆՆԱ Պ. ԶՈՒՐԱՔՅԱՆ** (երաժշտագետ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ)

**ԿԱՐԻՆԵ Ա. ԶԱՂԱՅՊԱՆՅԱՆ** (երաժշտագետ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ)

**ԻՐԻՆԱ Լ. ԶՈՒՆՈՎԱ** (երաժշտագետ, դաշնակահարուհի, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր)

**ԱԼԻՆԱ Ա. ՓԱՇՏՊԱՆՅԱՆ** (երաժշտագետ-ֆոլկլորագետ, արվեստագիտության թեկնածու, պրոֆեսոր, ՀՀ արվեստի  
վաստակավոր գործիչ)

**ԴԱՎԻԹ Գ. ՂԱԶԱՐՅԱՆ** (խմբավար, պրոֆեսոր, ՀՀ մշակույթի վաստակավոր գործիչ)

**ԼԵՎՈՆ Ա. ՉԱՌՆՅԱՆ** (կոմպոզիտոր, պրոֆեսոր, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ)

**ԼՈՒԻՆԵ Զ. ՍԱՀԱԿՅԱՆ** (երաժշտագետ, արվեստագիտության թեկնածու, դոցենտ)

**ՌՈՒՋԱՆՆԱ Վ. ՍՏԵՓԱՆՅԱՆ** (երաժշտագետ, արվեստագիտության թեկնածու, դոցենտ)

**ՆՈՒՆԵ ՌՈՍՏՈՅԻ ԱԹԱՆԱՅԱՆ** (երաժշտագետ, արվեստագիտության թեկնածու, դոցենտ)

## ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԽՄԲԱԿՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԳ

**ԿՈՆՍԱՆՏԻՆ ՎԼԵԳԻՄԻՐԻ ԶԵՆԿԻՆ** (երաժշտագետ, դաշնակահար, արվեստագիտության դոկտոր, Պ. Չայկովսկու անվ. ՄՊԿ  
պրոֆեսոր, ՌԴ արվեստի վաստակավոր գործիչ, Պ. Չայկովսկու անվ. ՄՊԿ գիտական գծով պրոռեկտոր, **Մոսկվա, ՌԴ**)

**ԵԼԵՆԱ ԲՈՒՐԻՍԻ ԳՈՒԼԻՆՍԿՅԱՆ** (երաժշտագետ, դաշնակահար, Մոսկվայի Ա. Շնիտկեի անվ. երաժշտության պետական ինստիտուտի  
հիմնադիր, արվեստագիտության դոկտոր, Պ. Չայկովսկու անվ. ՄՊԿ պրոֆեսոր, ՌԴ արվեստի վաստակավոր գործիչ, **Մոսկվա, ՌԴ**)

**ՀԱՅՎ ԱՐԻՍԻ ՌԻՇԻՃԵԱՆ** (միջնադարագետ, փիլիսոփայության դոկտոր, դիրիժոր, խմբավար, **Պրահա, Չեխիա**)

**ՎԱՋԵ ՊԱՐՍՈՒՄՅԱՆ** (խմբավար, «Լարք» երաժշտական կենտրոնի հիմնադիր-տնօրեն, «Դրագար» հրատարակչության  
հրատարակիչ, Կալիֆորնիա, **Լոս-Անջելես, ԱՄՆ**)

**ՀՐԱՆՏ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ՍԵՂՈՒՅԱՆ** (երգիչ, արվեստաբան, լեզվաբան՝ անգլ., ֆրանս., ռուս. լեզուների, **Ժնև, Շվեյցարիա**)

**ՆԱՐԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ ԳԵԼԼԱՅԱՆ** (ջութակահար, Պորտուգալիայի ազգային սիմֆոնիկ նվագախմբի արտիստ,  
Դելիլյան Տրիոյի հիմնադիր-ջութակահար, «Հայրիկ Մուրադյան» ՀԿ-ի նախագահ **Լիսաբոն, Պորտուգալիա**)

**ԱՐԹՈՒՐ ՍԱՐԿՎԱԿՎ ԿԱՐԳԱՆՅԱՆ** (երգիչ, միջնադարագետ, խմբավար, դպրասպետ, **Երուսաղեմ, Իսրայել**)

Գլխավոր խմբագիր-հիմնադիր,

Համարի թողարկման պատասխանատու՝ երաժշտագետ **ԳՈՀԱՐ ԿԱՌԼԵՆԻ ՇԱԳՈՅԱՆ**

Պատասխանատու քարտուղար՝ **ՄԱՐԳԱՐԻՏԱ ԲԱԳՐԱՏԻ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ**

Գիտական խմբագիր՝ **ԾՈՎԻՆԱՐ ՀՐԱՅՐԻ ՄՈՎՍԻՍՅԱՆ**

Գիտական խորհրդական՝ **ՍՎԵՏԼԱՆԱ ԿՈՐՅՈՒՆԻ ՍԱՐԳՍՅԱՆ**

Խմբագիր՝ **ՍՈՖՅԱ ՄԱԹԵՎՈՍԻ ԱԶՆԱՌՈՒՅԱՆ** (ռուս. տեքստերի),

Թարգմանիչ՝ **ՆԱՐԻՆԵ ԼԵՆԻՆԻԳԻ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ** (անգլ. տեքստերի)

Կազմի մտահղացումը և ձևավորումը՝ **ՄԱՐԻԱՄ ՎԼԵԳԻՄԻՐԻ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ**

Գեղարվեստական խմբագիր (ձևակերպ, էջադրում, ձևավորում)՝ **ԳՈՀԱՐ ՎԵԼԵՆԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

Ամսագիրն ընդգրկված է ՀՀ ԲՈԿ-ի «Ատենախոսությունների արդյունքների տպագրման համար  
ընդունելի ամսագրերի ցուցակում»

Արտատպումը միայն «Երաժշտական Հայաստան» ամսագրի գրավոր արտոնությամբ:

Խմբագրությունը միշտ չէ, որ համամիտ է հեղինակների կարծիքներին կամ տեսակետներին: Նյութերը չեն վերադարձվում:

Գիտական հոդվածները ենթակա են գրախոսման կամ երաշխավորման:

**Учредитель:**  
осуществляющий информационную деятельность  
“ЕРЕВАНСКАЯ ГОСУДАРСТВЕННАЯ КОНСЕРВАТОРИЯ ИМ. КОМИТАСА”  
государственная некоммерческая организация

Свидетельство N03U 059505,  
дата регистрации 07.04.2003

# МУЗЫКАЛЬНАЯ АРМЕНИЯ

N 1 (60) 2021

**Научно-теоретический,  
критико-публицистический журнал**  
Основан в 1998 году

Рекомендован к изданию Ученым советом ЕГК с 1996 года

## РЕДАКЦИОННАЯ КОЛЛЕГИЯ:

**СОНА ОГАНЕСОВНА ОГАНЕСЯН** (хормейстер, профессор, Заслуженный деятель искусств РА, ректор ЕГК, председатель Ученого совета ЕГК)

**ЛИЛИТ ВАРДЕСОВНА ЕРНДЖАКЯН** (востоковед, доктор искусств., Заслуженный деятель искусств РА, членкор-академик Парижской международной академии “Арапат”, профессор, председатель Управленческого совета ЕГК)

**ЦОВИНАР ГРАЙРОВНА МОВСИСЯН** (музыковед, к-т искусств., доцент, проректор ЕГК по науке)

**СЕРГЕЙ ГЕОРГИЕВИЧ САРАДЖЯН** (пианист, профессор, Заслуженный деятель культуры Польши, председатель издательского совета “Издательство ЕГК”)

**ОЛЯ ЮРЬЕВНА НУРИДЖАНИЯН** (музыковед, к-т искусств., доцент, ученый секретарь Ученого совета ЕГК)

**АРМЕН БАГРАТОВИЧ СМБАТЯН** (композитор, профессор, Заслуженный деятель искусств РА, директор-основатель журнала)

**ГОАР КАРЛЕНОВНА ШАГОЯН** (музыковед, членкор-академик Парижской международной академии “Арапат”, главный редактор-основатель журнала)

**ЖАННА ПЕТРОВНА ЗУРАБЯН** (музыковед, доктор искусств., профессор, Заслуженный деятель искусств РА)

**СВЕТЛАНА КОРЮНОВНА САРКИСЯН** (музыковед, доктор искусств., профессор, Заслуженный деятель культуры РА, Заслуженный деятель культуры Республики Польша)

**АННА СЕНОВНА АРЕВШАТЯН** (медиевист, доктор искусств., профессор, Заслуженный деятель искусств РА)

**ДАВИД ГАРСЕВАНОВИЧ КАЗАРЯН** (хормейстер, профессор, Заслуженный деятель культуры РА, председатель АМО)

**ЛЕВОН АЛЕКСАНДРОВИЧ ЧАУШЯН** (композитор, профессор, Заслуженный деятель искусств РА, председатель АМА)

**КАРИНЕ АЗАТОВНА ДЖАГАЦПАНЯН** (музыковед, доктор искусств., профессор, Заслуженный деятель искусств РА)

**МАРГАРИТА АШОТОВНА РУХКЯН** (музыковед, музыкальный критик, доктор искусств., Заслуженный деятель искусств РА)

**ИРИНА ЛЕОНИДОВНА ЗОЛОТОВА** (музыковед, пианистка, доктор искусств., профессор)

**АЛИНА АШОТОВНА ПАХЛЕВАНЯН** (фольклорист, музыковед, к-т искусств., профессор, Заслуженный деятель искусств РА)

**ЛУСИНЕ ЗАВЕНОВНА СААКЯН** (музыковед, к-т искусств., доцент)

**РУЗАННА ВАЧАГАНОВНА СТЕПАНИЯН** (музыковед, к-т искусств., доцент)

**НУНЭ РОМЕОВНА АТАНАСЯН** (музыковед, к-т искусств., доцент)

## МЕЖДУНАРОДНЫЙ РЕДАКЦИОННЫЙ СОВЕТ:

**КОНСТАНТИН ВЛАДИМИРОВИЧ ЗЕНКИН** (музыковед, пианист, доктор искусств., профессор, проректор по научной работе МГК им. П. И. Чайковского, Москва, РФ)

**ЕЛЕНА БОРИСОВНА ДОЛИНСКАЯ** (музыковед, доктор искусств., профессор, Заслуженный деятель искусств России, основатель Московского государственного института музыки им. А. Г. Шнитке, Москва, РФ)

**АЙК АРИСОВИЧ УТУДЖЯН** (музыковед, медиевист, доктор искусств., дирижер, дьякон, Прага, Чехия)

**ВАЧЕ ПАРСУМЯН** (дирижер, издатель, директор-основатель музыкального Центра “Lark”, издательства “Дразарк”, Лос-Анджелес, США)

**ГРАНТ ОГАНЕСОВИЧ ХАЧИКЯН** (певец, искусствовед, филолог (англ., франц., русск. яз.) Женева, Швейцария)

**НАРИНЕ АРУТЮНОВНА ДЕЛЛАЛЯН** (скрипачка, артистка Национального симфонического оркестра Португалии, основатель-скрипачка Трио Деллалян, председатель ОО “Айрик Мурадян”, Лиссабон, Португалия)

**АРТУР Дьякон ВАРДАНИЯН** (медиевист, певец, хормейстер, директор Духовной семинарии, Иерусалим, Израиль)

Главный редактор-основатель, музыковед, издатель, Ответственный за выпуск номера: **ГОАР КАРЛЕНОВНА ШАГОЯН**  
Ответственный секретарь: **МАРГАРИТА БАГРАТОВНА КИРАКОСЯН**

Научный редактор: **ЦОВИНАР ГРАЙРОВНА МОВСИСЯН**

Научный консультант: **СВЕТЛАНА КОРЮНОВНА САРКИСЯН**

Редактор: **СОФА МАТЕОСОВНА АЗНАУРЯН** (рус.)

Переводчик: **НАРИНЕ ЛЕОНИДОВНА МИКАЕЛЯН** (англ.)

Автор идеи и дизайн обложки: **МАРИАМ ВЛАДИМИРОВНА ПЕТРОСЯН**

Художественный редактор (макет, верстка, дизайн): **ГОАР ВИЛЕНОВНА ОГАННИСЯН**

Журнал включен ВАКом РА в Список научных изданий для публикации результатов диссертаций.  
Перепечатка материалов производится исключительно с согласия редакции журнала “Музыкальная Армения” в письменном виде. Редакция не всегда согласна с мнением авторов. Материалы не возвращаются.  
Научные статьи рецензируются или рекомендуются к изданию.

**Founder, information provider**  
**"YEREVAN STATE CONSERVATORY AFTER KOMITAS"**  
**State non-trade organization**

**Certificate # 03 A 059505,**  
**date of registration 07.04.2003**

## MUSICAL ARMENIA

N 1 (60) 2021

**Established in 1998**

*Scientific, critical and publicistic musical journal*

*Since 1996 publishing by the warranty of the Scientific Council of YSC*

### EDITORIAL BOARD:

- SONA H. HOVHANNISYAN** (Conductor, Professor, Rector of the YSC, Honored Art Worker of RA, Chairman of the Scientific Council of the YSC)
- LILIT V. YERNJAKYAN** (Musicologist, Dr. Sci. [Arts], Professor, Honored Art Worker of RA, Corresponding Member Academic of the International Academy of Sciences "Ararat" of Paris, Chairman of the Management Board of the YSC)
- TSOVINAR H. MOVSISYAN** (Musicologist, PhD (Arts), Docent, Vice-Rector for Science)
- SERGEY G. SARAJYAN** (Pianist, Professor, Honored for Polish Culture [Poland], Chairman of the Publishing Council of YSC)
- OLYA Y. NURJANYAN** (Musicologist, PhD [Arts] for Science, Docent, Scientific Secretary of the Scientific Council of YSC)
- ARMEN B. SMBATYAN** (Composer, Professor, Honored Art Worker of RA, Founder-director of Journal)
- GOHAR K. SHAGOYAN** (Musicologist, Corresponding Member Academic of International Academy of Sciences "Ararat" of Paris, Founder-Editor-in-chief, Publisher-Founder "YSC Publishing House")
- ZHANNA P. ZURABYAN** (Musicologist, Dr. Sci. [Arts], Professor, Honored Art Worker of RA)
- SVETLANA K. SARKISYAN** (Musicologist, Dr. Sci. [Arts], Professor, Honored Culture Worker of RA Honored for Polish Culture [Poland])
- ANNA S. AREVSHATYAN** (Musicologist, Medievalist, Dr. Sci. [Arts], Professor, Honored Art Worker of RA)
- DAVID G. GHAZARYAN** (Conductor, Professor, Honored Culture Worker of RA)
- LEVON A. CHAUSHYAN** (Composer, Professor, Honored Art Worker of RA)
- KARINE A. JAGHATSPANYAN** (Musicologist, Dr. Sci. [Arts], Professor, Honored Art Worker of RA)
- MARGARITA A. RUKHKYAN** (Musicologist, music critic, Dr. Sci. [Arts], Honored Art Worker of RA)
- IRINA L. ZOLOTOVA** (Musicologist, Pianist, Dr. Sci. [Arts], Professor)
- ALINA A. PAHLEVANYAN** (Musicologist-Folclorelist, PhD [Arts] for Science, Professor, Honored Art Worker of RA)
- LUSINE Z. SAHAKYAN** (Musicologist, PhD [Arts] for Science, Docent)
- RUZANNA V. STEPANYAN** (Musicologist, PhD [Arts] for Science, Docent)
- NUNE R. ATANASYAN** (Musicologist, PhD [Arts] for Science, Docent)

### INTERNATIONAL EDITORIAL COUNCIL

- KONSTANTIN V. ZENKIN** (Musicologist, Pianist, Dr. Sci. [Arts], Professor, Choirmaster, Vice-Rector for Science in MSC after P. I. Tchaikovsky, Honored Art Worker of RF, Moscow, RF)
- ELENA B. DOLINSKAYA** (Musicologist, Pianist, Dr. Sci. [Arts], Professor, Honored Art Worker of RF, Founder Moscow State Institute of Music after A. H. Schnittke's, Moscow, RF)
- HAYK A. UTIDJIAN** (Conductor, Deacon, Medievalist, PhD Dr., Praha, Czech Republic)
- VACHE BARSUMYAN** (Conductor, Publisher, Founder-in-chief of "Lark" Musical Center, "Drazark" Publishing House, Californian, Los Angeles, USA)
- HRANT H. KHACHIKYAN** (Singer, Art critic, Philologist of languages, Geneva, Switzerland)
- NARINE H. DELLALYAN** (Violinist, Artist of the National Symphony Orchestra of Portugal, Founder of Dellalyan Trio, President of SO "Hayrik Muradyan", Lisbon, Portugal)
- ARTUR Deacon VARDANYAN** (Singer, Choirmaster, Deacon, Jerusalem, Israel)

Founder-editor-in-chief, musicologist, Publisher,  
Responsible of the published issue: **GOHAR K. SHAGOYAN**  
Responsible secretary: **MARGARITA B. KIRAKOSYAN**

Scientific Editor: **TSOVINAR H. MOVSISYAN**  
Scientific Consultant: **SVETLANA K. SARKISYAN**  
Ruussian text Editor: **SOFA M. AZNAURYAN**  
English text Translator: **NARINE L. MIKAELYAN**  
The concept and design of the cover: **MARIAM V. PETROSYAN**  
Artistic editor (modeling, layout, design): **GOHAR V. HOVHANNISYAN**

The publication is entered into the List of the issues accepted by the Supreme. Certifying Commission of RA for publishing the results of theses. Re-printing is possible only on written permission by "Musical Armenia" journal. The publishing house does not always share opinions or points of view of authors. Materials are not returned from the publishing house. Scientific articles are reviewed or recommended.

Музыкальная культура XX века ознаменована множеством событий, ставших историческими. Многие из них получили общепризнанное значение, некоторые остались событиями локальными. Однако есть события, которые не укладываются в названные категории. Возникнув как локальные, они становятся международными. К ним относится создание крупных научно-образовательных и музыкальных учреждений, деятельность которых расширяется с течением времени: их начальное устройство подвергается изменению, возрастает функциональность составных компонентов, усиливается среда воздействия на общество, на иные культуры, на мир в целом. К таким музыкально-образовательным учреждениям относится Ереванская государственная консерватория им. Комитаса, отмечающая в этом году 100-летие со дня основания.

Присвоение ей в 1946 году снискавшего международную известность имени Комитаса — одной из дорогих святынь армянского народа — обосновано уже в те годы активным формированием в Армении интегрированной музыкальной действительности, в то же время этот факт был связан с горестной утратой великого композитора, заповедовавшего потомкам всестороннее — научно-познавательное, этнографическое, этномузыковедческое, медиавистское, музыкально-творческое и музыкально-исполнительское-изучение и распространение национальной музыкальной культуры.

Вся история Ереванской консерватории за истекшее столетие видится как насыщенный, многослойный процесс, сочетающий усвоение традиций прошлого и тенденций современности, армянской музыкальной науки, образования одновременно с достижениями западноевропейской и российской школ. С первых десятилетий Ереванской консерватории опора на передовую методику обучения в разных областях исполнительского искусства обеспечила прогрессивность и, как следствие, — международный авторитет армянских музыкантов-исполнителей. Творческие связи между консерваториями на уровне общих преподавателей, практика совершенствования выпускников в ведущих российских учреждениях способствовали воспитанию нескольких поколений армянских ученых и композиторов, получивших признание за пределами Армении.

Сегодня Ереванская государственная консерватория им. Комитаса занимает свое почетное место в общей системе вузов республики благодаря постоянному продуцированию новых музыкальных кадров, обогащающих культуру как Армении, так и многочисленных стран мира.

**СВЕТЛАНА САРКИСЯН**



доктор искусствоведения,  
профессор Ереванской государственной  
консерватории им. Комитаса

ԱՐԱՄ ՍՈՒՐԵՆԻ  
ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Երևանի պետական համալսարանի մագիստրանտ  
E-mail: aramok1999@gmail.com

ՌՈՄԱՆՈՎՆԵՐԻ ԵՐԵՎԱՆՅԱՆ «ԲԵԽՇՏԱՅՆ» ՍՊԻՏԱԿ ՌՈՅԱԼԻ  
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ՔԱՂԱՔՈՒՄ ԳԱՇՆԱՄՈՒՐԱՅԻՆ  
ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐԻ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

**XX** դարի երրորդ տասնամյակը Հայաստանի նորագույն պատմության էջերում մնաց ի մասնավոր իբրև հանրապետությունում ակադեմիական երաժշտական կրթության սկզբնավորման ժամանակաշրջան: ՀԽՍՀ լուսավորության ժողովրդական կոմիսարիատի հրավերով 1926 թ. հայրենիք եկած կոմպոզիտոր Անուշավան Տեր-Ղևոնդյանը դարձավ Երևանի երիտասարդ կոմսերվատորիայի երրորդ ղեկավարը (1. էջ 60, 62): Բյուր հոգսերի հետ մեկտեղ նորանշանակ ղեկավարի առջև ծառայած էր նաև որակյալ երաժշտական գործիքներ հայթայթելու խնդիրը: Այսպես, իր պաշտոնավարման սկզբնական շրջանում Տեր-Ղևոնդյանը երաժշտանոցի դահլիճի համար ձեռք բերեց մի համերգային ռոյալ, որը բացառիկ էր թե՛ իր «իշխանական» անցյալով, թե՛ որակով և թե՛ արտաքինով: Գործիքի հայտնությունը Երևանում կարժևորվի թերևս նախապատմության, այսինքն՝ քաղաքում դաշնամուրային ավանդույթների աստիճանական զարգացման հետ ծանոթության միջոցով:

Երևանում դաշնամուրային ավանդույթների ձևավորման ընթացքը հանգամանորեն ներկայացված է անվանի երաժշտագետ, հայկական դաշնամուրային արվեստի անդրանիկ հետազոտող, արվեստագիտության թեկնածու, պրոֆեսոր Շուշանիկ Ափոյանի աշխատություններում՝ XIX դարի երկրորդ կեսի և XX դարասկզբի երևանյան պարբերական մամուլի, այդ շրջանի գործիչների հուշագրական ու նամակագրական ժառանգության ուսումնասիրության հիման վրա (2. էջ 65): Հայտնի է, որ Երևանում երաժշտական կրթություն տվող առաջին հաստատությունը 1850 թ. հունվարի 2-ին հիմնադրված Հռիփսիմյան օրիորդաց վարժարանն էր (3. էջ 601) (մինչև 1884 թ. տարրական դպրոցի կարգավիճակ ուներ, 1884-1898 թթ.՝ պրոգիմնագիայի, 1898-1918 թթ.՝ յոթամյա, ապա ութամյա գիմնագիայի) (4. էջ 399): Ըստ Ծ. Ափոյանի հեղինակած «Հայկական դաշնամուրային արվեստի պատմություն (1850-1920)» դասագրքի՝ սկսած 1870-ական թվականներից այդ վարժարանում դաշնամուր նվագել էին ուսուցանում (5. էջ 75), ուստի վարժարանը երևանյան առաջին դաշնամուրների հանգրվան կարելի է համարել, քանի որ քաղաքում գործիքի առկայության վերաբերյալ ավելի հին տվյալներ չկան: Պետք է նշել, որ դաշնամուրը մուտք էր

գործել Հարավային Կովկաս դեռ XIX դարասկզբին: Գործիքն ի սկզբանե տարածվել էր խոշոր մշակութային կենտրոն Թիֆլիսում (5. էջ 63): Ոգեշնչվելով տարածաշրջանում հետզհետե զարգացող երաժշտական անցողիարձից ու մտածելով հեռանկարների մասին, 1866-ից իրականացվող կրթական բարեփոխումների թվում Հռիփսիմյան վարժարանը նախաձեռնեց ներմուծել երաժշտական կամ ընտրական կրթական բաղադրիչ (3. էջ 601): Այսպիսով, 1870-ական թվականներին վարժարանում արդեն գործում էին դաշնամուրի վճարովի դասընթացները, ուսանողուհիներն էլ մասնակցում էին դրանց՝ ըստ ցանկության: 1882 թ. մայիսի 1-ին երևան է գալիս քաղաքում դաշնամուրի գոյությունը հաստատող առաջին տպագիր արձանագրությունը (2. էջ 68): «Պսակ» թերթի 1882 թ. 10-րդ համարի «Տեղական լուրեր» բաժնում հրատարակված է հետևյալ բովանդակությամբ հայտարարություն. «Ապրիլի 23: Երևանի քաղաքային կյուրի դահլիճում տեղի ունեցավ սիրողների համերգ (կոնցերտ) ի նպաստ Երևանի ուսանողաց օգնող ընկերության և Կովկասեան Տեխնիկական-արհեստաւորաց ուսումնարանների կրթութեան նպաստող ընկերութեան: [...]»: Ապա բերված է հիշյալ համերգի կազմակերպման ընթացքում կատարված դրամական ծախսերի մանրամասն ցուցակ, որն այսպիսի կետ է պարունակում. «Դաշնամուրի երկու անգամ տեղափոխուիլն 8 ռ[ուբլի]» (6. էջ 3): Քաղաքական ու մշակութային ուղղվածություն ունեցող «Պսակ» շաբաթաթերթը Երևանի առաջին պարբերականն էր, այն ընդհատաբար լույս է տեսել 1880-1884 թվականներին՝ Վասակ Պապաջանյանի խմբագրությամբ (7. էջ 13, 44-45):

Արդեն XX դարասկզբին դաշնամուրը վստահաբար երևանցիների շրջանում ամենից գնահատված երաժշտական գործիքն էր: Քաղաքում դաշնամուրի նկատմամբ ձևավորված համընդհանուր հետաքրքրվածության մասին փաստում են «Эриванские объявления»\*

\* («Երևանի յայտարարություններ» մեջբերենք, որ 2005 թ. դեկտեմբերից լույս է տեսնում ԵՊԿ պաշտոնական մամուլ «Երածիշտ» ամսաթերթը, որտեղ ամսաթերթի հիմնադիր Գոհար Ծագոյանի հեղինակությամբ փոխառվել է վերոհիշյալ թերթի անունով խորագրով հայտարարությունների էջ. -խմբ.):

«Երաժշտական Հայաստան» ամսագրի խմբագրական խորհրդի երաշխավորությամբ՝ Ծովինար Հրայրի Մովսիսյանի 20.5.2021 թ., ընդունվել տպագրության՝ 10.6.2021 թ., ներկայացրել է հեղինակը՝ 26.4.2021 թ.

թերթի 1906-1917 թթ. համարները: Հարկ է նշել, որ 1883-1885 թթ. լույս էր տեսնում քաղաքային հայտարարությունների այդ թերթի հայալեզու տարբերակը («Երևանի յայտարարություններ»), որտեղ դաշնամուրների վերաբերյալ հաստուկենտ հաղորդումներ կային միայն (տե՛ս, օրինակ, 8. էջ 2): Հետագայում թերթը գրաքննչական աղճատման է ենթարկվել ու 1900-ից մինչև 1917 թ. հրատարակվել ռուսերեն (մասամբ հայերեն)՝ շաբաթական 1-3 անգամ (թերթի թե՛ հայալեզու, թե՛ ռուսալեզու տարբերակի հիմնադիրն ու խմբագիրը Էմին Տեր-Գրիգորյանցն էր) (7. էջ 73, 80-82, 91): Ու սհա ռուսալեզու համարները թերթելիս անընդհատ տեսնում ենք դաշնամուրների և ռոյալների առքուվաճառքին վերաբերող հայտարարություններ: Պարզ է դառնում, որ զգալիորեն աճել էր տներում պահվող գործիքների թիվը. վաճառքի էին հանվում «J. Becker», «C. M. Schröder», «F. Mühlbach», «Smidt & Wegener», «Diederichs Frères», «Offenbacher» ու այլ ֆիրմաների արտադրության դաշնամուրներ: Ի դեպ, այդ հայտարարություններից շատերը բավականին զավեշտական են. մի դեպքում գործիքի հետ մեկտեղ վաճառվում էր «մեծ արմավենի» (9, էջ 2), մյուսում՝ «խալիներ» (10. էջ 1), երրորդում, գուցե նկատի ունենալով ստեղնաշարային գործիքի հետ զուգահեռը, վաճառողը նշել էր. «դաշնամուր և գրամեքենա» (11. էջ 1): Դաշնամուր լարող վարպետների և դաշնակահար-մանկավարժների շրջանակում էլ աստիճանաբար առաջացավ մրցակցային մթնոլորտ, թեև այդ մասնագետներից շատերի այցը Երևան կարծես թե դիպվածական բնույթի էր: Հաճախ «Эриванские объявления»-ի միևնույն համարում զետեղված է գովազդային ռճի երկու տեղեկություն քաղաքում դաշնամուր լարող-նորոգող վարպետների գտնվելու առթիվ (թիֆլիսցի և պետերբուրգցի) կամ երկու երեք մանկավարժի հայտարարություն: Հետաքրքիր է 1910-ին Երևանում հաստատված երաժիշտ Ռուդոլֆ Շպերլինգի գրությունը գուգահեռաբար դաշնամուրի, ջութակի, մանդոլինի, կիթառի ու բալայայկայի մասնավոր դասեր անցկացնելու մասին (12. էջ 1) (գերմանացի Շպերլինգների երաժշտական հանրահայտ գերդաստանի այդ ներկայացուցիչը Ռուսական կայսերական բանակի զինծառայող-կապելմայստեր էր. 1910-1914 թթ. նա ղեկավարում էր Երևանի կայագործի ու քաղաքի ամենախոշոր ուսումնական հաստատության՝ արական դասական գիմնազիայի փողային նվագախմբերը) (13. էջ 6-7): Որոշ ուսուցիչներ լրացուցիչ վարձատրության դիմաց դասավանդում էին նաև օտար լեզուներ կամ երաժշտատեսական առարկաներ, մեկն անգամ «մեղր ու ընկույզի հրաշալի մուրաբա» էր վաճառում (14. էջ 33):

1920 թ. Հայաստանում մեկնարկեց ակադեմիական երաժշտական կրթությունը: Հակիրճ ասենք, որ դեռ 1920 թ. փետրվարից Հայաստանի Հանրապետության նախարարների խորհուրդը քայլեր էր ձեռնարկում կոնսերվատորիա հիմնելու համար: Այդ նպատակով հանգանակություններ էին կատարվում, որոնց հաշվին, մասնավորաբար, գնվել էր երկու դաշնամուր (15. էջ 145): 1920 թ. օգոստոսի 9-ին նախարարների խորհուր-

դը հաստատեց հանրային կրթության և արվեստի նախարարի օրինագիծը «երաժշտական բարձր դպրոցի շտապի մասին» (16. էջ 535), սակայն հաստատության բացումը կայացավ Հայաստանի խորհրդայնացումից հետո միայն: 1921 թ. դեկտեմբերի 22-ին կոմպոզիտոր Ռոմանոս Մելիքյանը Երևանում կազմավորեց երաժշտական ստուդիա, որը երկու տարի անց՝ 1923 թ. հոկտեմբերի 1-ին վերածեց պետական կոնսերվատորիայի (17. էջ 1, 3): Երաժշտական նոր հաստատության գոյացումը խորթին էր թերևս որակյալ երաժշտական գործիքների, մասնավորապես՝ դաշնամուրների պակասության պատճառով նաև: Բազմաթիվ են ժամանակակիցների հուշերն այն մասին, թե ինչպես էր ստուդիայի համար Ռ. Մելիքյանն անձամբ դաշնամուրներ հավաքագրում քաղաքի հարուստ տներից: Կոմպոզիտոր, ՀԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ Միքայել Միրզայանի համաձայն «[...] Ռոմանոսը զանազան տեղերից իրեր էր հավաքում, բայց շատ բան պակասում էր: Նրան տեսնողը վախենում էր, թե սհա իրենից էլ մի բան պետք է վերցնի: Երևանում 1921 թ. առանց այն էլ քիչ դաշնամուր կար, եղածն էլ նա էր բռնագրավում» (18. էջ 143-144): Արձակագիր Ստեփան Ջորյանի հուշերից էլ պարզ է դառնում, որ Մելիքյանն այդ հարցում չէր խնայում անգամ ֆիզիկական ջանքերը. «[...] Նա այդ գործով խանդավառ էր այն աստիճան, որ բեռնակիր մշակների հետ անձամբ ոչ միայն մանր իրեր, այլև դաշնամուր, սեղաններ ու աթոռներ էր տեղափոխում իր դպրոցը... և կարճ ժամանակում ստուդիան դարձրեց ամենաօրինակելի հաստատությունը Երևանում՝ իր կաավորումով, մաքրությամբ, կարգապահությամբ» (19. էջ 308): Ինքը Մելիքյանը պնդում էր. «Չորս ամիս պայքարել եմ սրանց [դաշնամուրների] համար, հանել եմ մասնավոր տներից: Այժմ ունեմ չորս դաշնամուր՝ քաղաքում եղած բոլոր պիտանի դաշնամուրների 25 տոկոսը» (20. էջ 177): Պարզաբանման համար հարկ է նշել, որ 1920 թ. դեկտեմբերի 31-ին ՀԽՍՀ լուսավորության ժողովրդական կոմիսար Աշոտ Հովհաննիսյանը հրաման էր արձակել, որի համաձայն հանրապետության տարածքում գտնվող բոլոր երաժշտական գործիքները պետք է ցուցակագրվեին, սպա հաշվառվեին գալատական հեղկոմների լուսավորության բաժանմունքների կողմից: Հաշվառված գործիքները կարող էին բռնագրավել «բացառապես հիմնարկությունների ու միությունների կարիքների համար»: Ընդ որում, առաջնահերթ բռնագրավվում էին սեփականատերերի կողմից չօգտագործվող գործիքները, սպա նաև այն գործիքները, «որոնց տերերը զբաղում են երաժշտութեամբ որպես սուս սիրողներ», իսկ պրոֆեսիոնալների ու երաժշտության ուսուցիչների գործիքները չէին բռնագրավվում (21. էջ 45): Երևանում բռնագրավումն ու բաշխումը տեղի էր ունենում բացառապես ՀԽՍՀ լուսավորության ժողովրդական կոմիսարիատի արվեստի բաժնի թույլտվությամբ (22. էջ 73):

1926 թ. կոնսերվատորիայի ռեկտոր դարձավ կոմպոզիտոր, հետագայում ՀԽՍՀ ժողովրդական արտիստ Անուշավան Տեր-Ղևոնդյանը: Տեր-Ղևոնդյանը հանձն առավ կոնսերվատորիան նոր ու բարձրորակ

երաժշտական գործիքներով համալրելու գործը. իր նախաձեռնությամբ արտասահմանից գնվեցին փողային (23. էջ 43) և լարային (24. էջ 6) գործիքներ, դաշնամուրներ (25.): Եղիշե Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի (ԳԱԹ) Ռ. Մելիքյանի ֆոնդում պահպանվող որոշ անտիպ նյութերի բովանդակությունից կարելի է եզրակացնել, որ դաշնամուրների ձեռքբերման հարցում Տեր-Ղևոնդյանին Թիֆլիսից աջակցել է Մելիքյանը: Մելիքյանին ուղղված 1927-ի փետրվարի 16-ի նամակում Տեր-Ղևոնդյանը գրում է. «Կուլտուրայի տան համար անհրաժեշտ է լավ համերգային ռոյալ, իսկ մերը տեղափոխում ենք Կոնսերվատորիա: [...] Մեզ պետք է «Սթենվել» կամ «Բեխշտայն» ֆիրմայի համերգային ռոյալ, զուցե կարելի է գտնել Թիֆլիսում, օգնեք մեզ այդ հարցում» (26. էջ 1): Ա. Տեր-Ղևոնդյանի դուստրը՝ անվանի դաշնակահարկոնցերտմայստեր, ՀԽՍՀ վաստակավոր արտիստ Հեղինե Տեր-Ղևոնդյանը հիշում էր (27. էջ 140), որ իր հայրը կոնսերվատորիայի դահլիճի համար ձեռք էր բերել «Բեխշտայն» («C. Bechstein») գործարանի արտադրության ռոյալ, որը «պատկանել էր Ռոմանովների արքայական ընտանիքին և գտնվել նրանց գեղեցիկ պալատում՝ Բորժոմի կուրորտի մոտակայքում տեղակայված գեղատեսիլ այգու կենտրոնում» (14. էջ 40): Նշված նամակում, հավանաբար, խոսքը հենց այս գործիքի մասին էր (Հ. Տեր-Ղևոնդյանը հիշատակում է 1926 թ., սակայն, ըստերևույթին, ռոյալը Երևան են բերել 1927-ին): Գերմանական «Բեխշտայն» գործարանը կոտ հարաբերություններ ուներ Ռուսական կայսերական տան հետ: Ու, փաստորեն, Երևանի այդ նշանավոր «Բեխշտայնը»՝ ոսկեզույն մեղալիոններով ու երիզվածքով զարդարված սպիտակ ռոյալը, նախքան քաղաք տեղափոխվելն, արդեն իսկ օժտված էր հարուստ կենսագրությամբ: Հ. Տեր-Ղևոնդյանի պատմածից բխում է, որ գործիքը պատկանել էր մեծ իշխան Նիկոլայ Միխայլովիչին (Նիկոլայ I-ի թոռն էր ու Նիկոլայ II-ի հորեղբայրը) և տեղադրված էր իշխանի համար կառուցված պալատի սրահներից մեկում: Գեղարվեստի կայսերական ակադեմիայի ակադեմիկոս Լեոնտի Բենուայի նախագծած մավրիտանական ճարտարապետության այդ նմուշը Վրաստանում է՝ Բորժոմի քաղաքի արվարձանում գտնվող Լիկանի ավանում, Կուր գետի ափին (պալատի նախագիծն իրականացվել է 1892 թ. մայիսին, իսկ կառուցումը՝ 1893-1894 թթ.) (28. էջ 150-151): Հետաքրքրական է, որ Բենուաների ընտանիքի հետ բարեկամական կապ ուներ ՀԽՍՀ ժողովրդական ճարտարապետ Ալեքսանդր Թամանյանը: Թամանյանի կինը՝ Կամիլյա Էդվարդս-Բենուան թոռնուհին էր անվանի ռուս ճարտարապետ Նիկոլայ Բենուայի (29. էջ 573): Վերջինիս որդիների՝ ճարտարապետ Լեոնտի Բենուայի ու նկարիչ և արվեստաբան Ալեքսանդր Բենուայի հետ էլ առանձնակի մտերիմ էր Թամանյանը: Այսպես, 1914 թ. հունվարի 27-ին Լեոնտի Բենուան (համատեղ Ալեքսեյ Շչուսևի և Ֆյոդոր Բերենշտամի հետ) Գեղարվեստի կայսերական ակադեմիայի ժողովի ժամանակ ակադեմիկոսի կոչմանն արժանացնելու համար ներկայացրել էր Թամանյանի թեկնա-

ծությունը (Թամանյանն ակադեմիկոս ընտրվեց 1914 թ. հոկտեմբերի 27-ին) (30.): Իսկ 1924 թ. հունվարի 17-ին Լ. Բենուան ՀԽՍՀ կենտրոնական գործադիր կոմիտեին նամակ էր ուղղել, որտեղ հայտնում էր իր պատրաստակամությունը մասնակցելու հանրապետությունում (մասնավորապես՝ մայրաքաղաք Երևանում) կառուցվելիք խոշոր շինությունների նախագծման և շինարարության գործընթացների ղեկավարման աշխատանքներին (29. էջ 583):

Ամենայն հավանականությամբ հիշյալ իշխանական պալատում անվանի երաժիշտների մասնակցությամբ միջոցառումները հազվադեպ չեն եղել: Ճանաչված ռուս բանաստեղծ, արձակագիր Անդրեյ Վոզնեսենսկին մի քնարական բանաստեղծություն է գրել Նիկոլայ Միխայլովիչի լիկանյան սիրավեպի մասին, որտեղ արտացոլված է իշխանի հակվածությունը հատկապես դաշնամուրային երաժշտության հանդեպ: Վոզնեսենսկու տողերում հիշատակվում է նաև Պյոտր Չայկովսկին, սակայն դա բանաստեղծական երևակայության արգասիք կարելի է համարել, քանի որ մեծանուն կոմպոզիտորը վախճանվել էր մինչև պալատի կառուցումը (1893 թ.): Բերենք բանաստեղծության բնագիրն ամբողջությամբ (31. էջ 71-72):

**Два дворца в Ликани**

Здесь князь пьянел от фортепяно.  
 Поньше вспоминает сад  
 и замок в накладных румянах  
 его романа аромат.  
 Он пренебрег державным саном  
 во имя женщины простой.  
 Он рядом ей построил замок  
 над все смыывающей Курой.  
 В халатах красных и ковровых  
 они прощались на заре.  
 И призрак сломанной короны  
 горел над ними на горе.  
 За это царь его чихвостил.  
 И останавливался бал.  
 И очарованный Чайковский  
 на подоконнике играл.  
 И попадаем мы невольню,  
 идя из дома во дворец,  
 в волшебно-силовое поле  
 меж красных каменных сердец.  
 Пред этой силою влюбленной,  
 что выше власти и молвы,  
 за неизмением короны  
 снимаю кепку с головы.

Այսպիսով, 1926 կամ 1927-ից սպիտակ «Բեխշտայնը» Երևանի պետական կոնսերվատորիայի դահլիճի հիմնական համերգային ռոյալն էր: Հայտնի է, որ 1921-ին այժմյան Արամի 44 հասցեում գտնվող շենքի երկրորդ հարկի երեք սենյակների բնակիչներն ազատել էին իրենց կացարանը և տարածքը տրամադրվել էր նոր կազմավորվող երաժշտական ստուդիային (23. էջ 12): Այնուհետև ստուդիան աստիճանաբար զբաղեցրեց ամբողջ շենքը (այն կառուցվել էր 1910-1911 թթ. և ի



**Նվիրվում է ԵՊԿ հիմնադրման 100-ամյա հորելյանին**



Երևանի կոնսերվատորիայի դահլիճը, 1930-ական թվականներ (Եղիշե Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի ֆոնդերից)



«Բեխտայն» այժմ պահպանվում է Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի ռեկտորի աշխատասենյակում



Առնո Բարաջանյանն ու սպիտակ Բեխտայնը, 1951 թվական (լուսանկարը «Սովետական Հայաստան» ամսագրի 1951 թվականի 7-րդ համարից)



Դասախոս Աննա Անթակույանն և ուսանողուհի Բրինա Մանուկյանը (2-րդ կուրս) Երևանի կոնսերվատորիայում, 1953 թ.



Թավջութակահար Յուրի Եղիզարյանն ու դաշնակահար Յուրի Հայրապետյանը Երևանի կոնսերվատորիայում, 1955 թվական (լուսանկարը «Սովետական Հայաստան» ամսագրի 1955 թվականի 10-րդ համարից, հեղինակ՝ Վ. Սևոյան)

սկզբանե պատկանել Երևանի քաղաքային դումայի իրավասու, վաճառական Ֆադեյ Թադևոսյանին) (32. էջ 79): 1923-ին հիմնադրվեց կոնսերվատորիան. այդ առիթով նախատեսվում էր վերակառուցել երկհարկ շինությունը, ավելացնելով երրորդ հարկ (20. էջ 179): Մակայն, ինչ-ինչ պատճառներով, վերակառուցումը հետաձգվեց մոտ տասը տարով ու երրորդ հարկն ավելացվեց 1930-ական թվականների սկզբին միայն (33.): Սպիտակ «Բեխշտայնը» երրորդ հարկի անկյունային մասում տեղակայված դահլիճում էր: Այս տեղադրությունը երևում է Եղիշե Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի տրամադրած եզակի լուսանկարում՝ դահլիճի պատուհանների ուրվագծերը շենքի ճակատի լուսանկարի հետ համեմատելիս (34.): Փաստորեն քաղաք էր ժամանել մի ռոյալ, որն ակներևաբար առանձնանում էր մնացած գործիքներից՝ մի քանի ցուցանիշներով: Նախ և առաջ, անկասկած, տպավորիչ էին նրա գույնն ու շքեղ արտաքին տեսքը: Բացի այդ, բացառիկ էր գործիքի ձայնային հատկությունների որակը. հնչողությունը հարթ էր, գուրկ անհարմարություն առաջացնող էֆեկտներից (14. էջ 40): Բնական է, որ տարբերվող գործիքն իսկույն երաժիշտների համար ոգեշնչման աղբյուր պետք է դառնար: Այս առումով առավելապես հետաքրքիր են դաշնակահար, մանկավարժ, ՀԽՍՀ վաստակավոր ուսուցիչ Յակով Չարգարյանի հուշերը, ամփոփված «Белый роан» պատմվածքում, որ Չարգարյանը պատմում է այն մասին, թե ինչպես իրեն՝ պատանի դաշնակահարին սպիտակ «Բեխշտայնը» լուրջ հաջողություն բերեց 1939 թ. սպրիլի 21-ին կոնսերվատորիայի դահլիճում կայացած դպրոցական մրցույթի ժամանակ (35.):

Կոնսերվատորիայի գլխավոր ռոյալը գործի էր դրվում քննությունների (տես, օրինակ, 36. էջ 22), տարատեսակ մրցույթների, փակ և բաց, ցուցադրական համերգների, նաև հատուկ միջոցառումների ժամանակ: 1920-1950-ական թվականներին Երևան էին ժամանում ինչպես Խորհրդային Միությունում, այնպես էլ արտասահմանում ճանաչում ձեռք բերած դաշնակահարներ: Նրանց երևանյան համերգների մասին ժամանակի պաշտոնական մամուլից քաղված համապարփակ տեղեկատվությունն ամփոփված է երաժշտագետ Ռուզաննա Մազմանյանի հեղինակած «Սովետահայ երաժշտական կյանքի տարեգրության» երկու հատորներում (37., 38.): Հաճախ այդ նշանավոր դաշնակահարներն այցելում էին նաև կոնսերվատորիա: Այսպես, 1938 թ. հունվարի 31-ին կայացավ Դաշնակահարների համամիութենական առաջին մրցույթի երրորդ մրցանակի նորաթուխ դասիներին, Մոսկվայի կոնսերվատորիայի ուսանող Արամ Թաթուրյանի հանդիպումը Երևանի կոնսերվատորիայի պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողության հետ, ինչից հետո Թաթուրյանը հանդես եկավ մենահամերգով (39.): 1941 թ. փետրվարի 21-ին (40. էջ 4), 23-ին և 24-ին (41. էջ 4) Հայկական պետական ֆիլհարմոնիայի հրավերով Երևանում երեք մենահամերգ ունեցավ լեհ անվանի դաշնակահար Լեոպոլդ Մյունցերը, զուգահեռաբար ելույթ ունենալով նաև կոնսերվատորիայի դահլիճում (14. էջ 40): Կոմպոզիտոր,

ՀՀ ժողովրդական արտիստ Վլադիլեն Բայլանը կոնսերվատորիայի կոմսորգն էր (կոմերիտ-կազմակերպիչը) 1940-ական թվականների վերջին: Իր օրագրում Բայլանը պատմում է, թե այդ տարիներին ինչպես էր հաջողվում նախաձեռնել Երևան հյուրախաղերի եկած դաշնակահարների այցը կոնսերվատորիա: Արտիստները երբեմն հեշտ չէին համաձայնում ու համոզելու կարիք էր լինում: Այնուամենայնիվ հանդիպումները հետաքրքիր ու հաճելի էին թե՛ լսարանի, թե՛ կատարողի համար: Բայլանի համաձայն, ՌԽՖՍՀ վաստակավոր արտիստ Մարիա Գրինբերգի այցի ժամանակ (հավանաբար 1947 թ. հունիսին) (42. էջ 4, 43. էջ 4) աշխույժ մթնոլորտ էր լեւի-լեցուն դահլիճում դաշնակահարուհին պատասխանում էր ուսանողների հարցերին, սպա երկար նվագում (27. էջ 140-141): Այսերպ սպիտակ «Բեխշտայն» դաշնամուրով նվագեցին խորհրդային խոշոր դաշնամուրային դպրոցների հիմնադիրներ, ԽՍՀՄ ժողովրդական արտիստ Կոնստանտին Իզումնովը (1942 թ. Իզումնովը տարհանվել էր Երևան ու մինչև 1943 թ. հոկտեմբերը դասավանդում էր Երևանի կոնսերվատորիայում) (44. էջ 33) և ՌԽՖՍՀ ժողովրդական արտիստ Հենրիխ Նեյխաուզը, սպա նաև սպազա ԽՍՀՄ ժողովրդական արտիստներ Լև Օրորինը, Յակով Ֆլիերը, Սվյատոսլավ Ռիխտերը (հավանաբար 1953 թ. փետրվարին) (45.), Էմիլ Գրիլլան ու Վիկտոր Մերժանովը (14. էջ 40):

Ահա այսպես արդեն իսկ հարյուրամյակից ավելի ձգվող կենսագրություն ունեցող ռոյալն իր դերակատարումն ունեցավ երևանյան երաժշտական կյանքում: Իսկ ժամանակի հետքը, ցավոք, անխուսափելի է: Բազում տասնամյակներ Երևանի կոնսերվատորիային ու հայ երաժշտական մշակույթին ծառայած սպիտակ «Բեխշտայնն» այժմ պահպանվում է Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի ռեկտորի աշխատասենյակում:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. Գիլինա Ե. Բ., Անուշավան Տեր-Ղևոնդյան, Եր., Հայպետհրատ, 1962 թ., 117 էջ: Gilina E. I., Anushavan Ter-Ghevondyan, Yer., Haypethrat, 1962 th., 117 ej.
2. Apoyan III. A., Из истории фортепианной культуры Армении /Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա. երաժշտագիտական աշխատությունների ժողովածու, գիրք Բ, Եր., 2003 թ., էջ 65-76: Apoyan Sh. A., Iz istorii fortepiannoj kul'tury Armenii /Yerevani Komitasi anvan petakan konservatoria. Erashshtagitakan ashkhatuthtyunneri zhoghovatsu", girq B, Yer., 2003th., ej 65-76.
3. Հակոբյան Թ. Խ., Երևանի պատմությունը (1801-1879 թթ.), Եր., Երևանի համալսարանի հրատ., 1959 թ., 672 էջ: Hakobyan Th. Kh., Yerevani patmuthyun' (1801-1879 thth.), Yer., Yerevani hamalsarani hrat., 1959 th., 672 ej.
4. Հակոբյան Թ. Խ., Երևանի պատմությունը (1879-1917 թթ.), Եր., Երևանի համալսարանի հրատ., 1963 թ., 607 էջ: Hakobyan Th. Kh., Yerevani patmuthyun' (1879-1917 thth.), Yer., Yerevani hamalsarani hrat., 1963 th., 607 ej.
5. Ափոյան Ը. Հ., Հայկական դաշնամուրային արվեստի պատմություն (1850-1920). դասագիրք, Եր., ԵՊԿ հրատ., 2006 թ., 168 էջ: Aphoyan Sh. H., Haykakan dashnamurayin arvesti patmuthyun (1850-1920). dasagirq, Yer., YPK hrat., 2006 th., 168 ej.
6. //Պսակ, 1882 թ., 1 մայիսի, թիվ 10: //Psak, 1882 th., 1 mayisi, thiv 10.

7. Նազարյան Ս. Ս., Երևանի պարբերական մամուլը (1880-1917 թթ.), Եր., ՀՍՍՀ ԳՄ հրատ., 1986 թ., 205 էջ: *Nazaryan S. S., Yerevani prberakan mamul' (1880-1917 thth.), Yer., HSSH GA hrat., 1986 th., 205 ej.*
8. //Երևանի լայտարարություններ», 1883 թ., 3 սեպտեմբերի, թիվ 60: //Yerevani yaytararuthiunner, 1883 th., 3 septemberi, thiv 60.
9. //Эриванскія объявленія, 1910, 24 июля, #56. //Erivanskiya ob'yavleniya", 1910, 24 iyulya, #56.
10. //Эриванскія объявленія, 1909, 13 мая, #28. //Erivanskiya ob'yavleniya, 1909, 13 maya, #28.
11. //Эриванскія объявленія, 1914, 29 апреля, #35. //Erivanskiya ob'yavleniya", 1914, 29 aprelya, #35
12. //Эриванскія объявленія, 1910, 9 октября, #72. //Erivanskiya ob'yavleniya, 1910, 9 oktyabrya, #72.
13. *Будяган А. Г., Машлян Г., Вильгельм Шперлинг, Եր.: Артдрук, 2016, 128 с. Budagyan A. G., Mailyan G., Vil'gel'm Shperling, Yer.: Artdruk, 2016, 128 s.*
14. *Апоян Ш. А., Страницы истории фортепианной культуры Армении /В кн.: Апоян Ш. А., Незабываемые имена, очерки о пианистах-армянах, Եր.: Изд-во ЕГК, 2008, 228 с. Aroyan Sh. A., Stranitzki istorii fortepiannoj kul'tury Armenii /V kn.: Aroyan Sh., Nezabyvaemye imena, ocherki o pianistakh-armyanakh, Yer.: izd-vo YGK, 2008, 228 s.*
15. *Վարդանյան Գ. Վ., Մշակույթը Հայաստանի առաջին Հանրապետությունում (1918-1920 թթ.), Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2003, 156 էջ: Vardanyan G.V., Mshakuyth' Hayastani arajin Hanrapetuthyunum (1918-1920 thth.), Yer., NH GAA "Gituthyun" hrat., 2003, 156 ej.*
16. Հայաստանի Հանրապետության կառավարության նիստերի արձանագրություններ. 1918-1920 թթ., Եր., Հայաստանի ազգային արխիվ, 2014, 628 էջ: Hayastani Hanrapetuthyan kar'avaruthyan nisteri ardzanagruthyunner. 1918-1920 thth., Yer., Hayastani azgayin arkhiv, 2014, 628 ej.
17. *Յերեմյան Ա., Հ.Ս.Ս.Հ. Կոնսերվատորիան (հնգամյակի առթիվ) //Արվեստ, 1927 (Բ տարի), հունվար-փետրվար-մարտ, թիվ 3-4, էջ 1-5: Yeremyan A., H.Kh.S.H. Konservatorian (hngamyaki ar'tiv) //Arvest, 1927 (B tari), hunvar-phetrv-ar-mart, thiv 3-4, ej 1-5.*
18. *Միրզայան Մ., Ռոմանոսը, /Ռոմանոս Մելիքյան. հոդվածներ, նամակներ, հուշեր, Եր., ՀՍՍՀ ԳՄ հրատ., 1977, էջ 142-144: Mirzayan M., Romanos', /Romanos Meliqyan. Hodvatsner, namakner, husher, Yer., HSSH GA hrat., 1977, ej 142-144.*
19. *Ջորյան Ստ., Հուշերի գիրք, Եր., Հայպետհրատ, 1958, 345 էջ: Zoryan St., Husheri girq, Yer., Haypethrat, 1958, 345 ej.*
20. *Աթանասյան Ա. Ն., Հուշեր /Ռոմանոս Մելիքյան. հոդվածներ, նամակներ, հուշեր, Եր., ՀՍՍՀ ԳՄ հրատ., 1977, էջ 177-190: Athanasyan A. N., Husher /Romanos Meliqyan. Hodvatsner, namakner, husher, Yer., HSSH GA hrat., 1977, ej 177-190.*
21. Հրաման թիվ 70 «Երաժշտական գործիքների ցուցակագրման, հաշվառման և բռնագրաման մասին» /Հ.Ս.Ս.Հ. դեկրետների և հրամանների ժողովածու, պրակ I. 1920 թ. նոյեմբերի 29-1921 թ. փետրվարի 18, Էջմիածին, 1921, էջ 45: Hraman thiv 70 "Erzhshhtakan gortsiqneri tzutzakagrmn, hashvarqi ev br'nagravman masin" /H.Kh.S.H. dekretneri ev hramanneri zhoghovatsu, prak I. 1920 th. Noyemberi 29 - 1921 th. Phetrvari 18, Ejmiatsin, 1921, ej 45.
22. Հրաման թիվ 100 «Երաժշտական գործիքների բռնագրաման մասին» /Հ.Ս.Ս.Հ. դեկրետների և հրամանների ժողովածու, պրակ I. 1920 թ. նոյեմբերի 29 - 1921 թ. փետրվարի 18, Էջմիածին, 1921, էջ 73: Hraman thiv 100 "Erzhshhtakan gortsiqneri br'nagravman masin" /H.Kh.S.H. dekretneri ev hramanneri zhoghovatsu, prak I. 1920 th. Noyemberi 29 - 1921 th. Phetrvari 18, Ejmiatsin, 1921, ej 73.
23. *Բերկո Մ. Ա., Կոմիտասի անվան կոնսերվատորիա, Եր., «Հայաստան» հրատ., 1973 թ., 168 էջ: Berko M., Komitasi anvan konservatoria, Yer., "Hayastan" hrat., 1973 th., 168 ej.*
24. *Սպենդիարյան Ա. Ա., Յերևանի պետ-կոնսերվատորիայի սիմֆոնիկ որկեստրը, //Արվեստ, 1927 թ. (Բ տարի), հունվար-փետրվար-մարտ, թիվ 3-4, էջ 5-6: Spendiaryan A., Yerevani pet-konservatoriayi simfonik orkestr', //Arvest, 1927 th. (B tari), hunvar-phetrv-ar-mart, thiv 3-4, ej 5-6.*
25. Կրավսին, Յերաժշտական գործիքների և նոտաների հարցը //Խորհրդային Հայաստան, 1928 թ., 10 ապրիլի, թիվ 84, էջ 4: Klavesin, Yerzhshhtakan gortsiqneri ev notaneri hartz' //Khorhrdayin Hayastan, 1928 th., 10 aprili, thiv 84, ej 4.
26. ԳԱԹ, Ռոմանոս Մելիքյանի ֆոնդ, թիվ 1137, 2 էջ: GATH, Romanos Meliqyani fond, thiv 1137, 2 ej.
27. *Бальян В., И все они были..., Եր.: Амротз груп, 2016, 312 с. Balyan V., I vse oni byli..., Yer.: izd-vo "Amrotz grup", 2016, 312 s.*
28. *Лисовский В. Г., Леонтий Бенуа (Архитекторы Санкт-Петербурга), СПб.: Белое и Черное, 2003, 352 с. Lisovskij V. G., Leontij Benua (Arkhitektory Sankt-Peterburga), SPb.: izd-vo "Beloe i Chernoe", 2003, 352 s.*
29. Ալեքսանդր Թամանյան (փաստաթղթերի և նյութերի ժողովածու), Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2000, 684 էջ: Aleqsandr Thamanyan (phastathghtheri ev nyutheri zhoghovatsu), Yer., NH GAA "Gituthyun" hrat., 2000, 684 ej.
30. Предложение членов академии А. В. Щусева, Ф. Г. Беренштама, Л. Н. Бенуа в академическое собрание Академии художеств об избрании А. Таманяна академиком архитектуры (27.01.1914, С.-Петербург) /Российский государственный исторический архив, ф. 789, оп. 12, д. И-19, л. 69. Predlozhenie chlenov akademii A. V. Shchuseva, F. G. Berenshtama, L. N. Benua v akademicheskoe sobranie Akademii khudozhestv ob izbranii A. Tamanyana akademikom arkhitektury (27.01.1914, S.-Peterburg) /Rossijskij gosudarstvennyj istoricheskij arkhiv, f. 789, op. 12, d. I-19, l. 69.
31. *Вознесенский А. А., Прорабы духа, М.: Советский писатель, 1984, 496 с. Voznesenskij A. A., Proraby dukha, M.: izd-vo "Sovetskij pisatel'", 1984, 496 s.*
32. *Гаспарян М. А., Архитектура Еревана XIX — начала XX века, Եր.: Միարձան, 2008, 200 с. Gasparyan M. A., Arkhitektura Yerevana XIX — nachala XX veka, Yer., izd-vo "Ushardzan", 2008, 200 s.*
33. Պետկոնսերվատորիայի աշխատանքները //Խորհրդային Հայաստան, 1930, 15 հունվարի, թիվ 13, էջ 4: Petkonservatoriayi ashkhatanqner' //Khorhrdayin Hayastan, 1930, 15 hunvari, thiv 13, ej 4.
34. ԳԱԹ, Երաժշտության բաժնի լուսանկարների ֆոնդ, թիվ 220/7: GATH, Yerzhshshluthyan bazhni lusankarneri fond, thiv 220/7.
35. *Заргарян Я., Белый роля /В кн.: Заргарян Я., По прочтении "Фрагментов" ЭММ (Эдварда Михайловича Мирзояна): мемуары, Եր., 2008, с. 31-43. Zargaryan Ya., Belyj royal? /V kn.: Zargaryan Ya., Po prochtenii "Fragmentov" EMM (Edvarda Mikhajlovicha Mirzoyana): memuary, Yer., 2008, s. 31-43.*
36. *Мирзоян Э. М., Фрагменты, Եր.: Амротз груп, 2005, 400 с. Mirzoyan E. M., Fragmenty, Yer.: "Amrotz grup", 2005, 400 s.*
37. *Մազմանյան Ռ., Սովետահայ երաժշտական կյանքի տարեգրություն, 1920-1945, Եր., ՀՍՍՀ ԳՄ հրատ., 1979, 321 էջ: Mazmanyan R., Sovetahay erzhshhtakan kyanqi taregruthyun, 1920-1945, Yer., HSSH GA hrat., 1979, 321 ej.*
38. *Մազմանյան Ռ., Սովետահայ երաժշտական կյանքի տարեգրություն, 1946-1960, Եր., ՀՍՍՀ ԳՄ հրատ., 1986, 449 էջ: Mazmanyan R., Sovetahay erzhshhtakan kyanqi taregruthyun, 1946-1960, Yer., HSSH GA hrat., 1986, 449 ej.*
39. *Տարաձյուլի [Կ.], В Госконсерватории., //Коммунист, (Եր.), 1938, 2 февраля, # 26, с. 4. Saradzhyun [K.], V Goskonservatorii., //Kommunist, (Yer.), 1938, 2 fevralya, #26, s. 4. Aпоян Ш. А., Памяти Арама Татуюляна., //Музыкальная армения #1(46)2014, С. 48-56. Aroyan Sh. A., Pamyati Arama Tatulyana., //Muzykal'naya Armeniya #1(46)2014., С. 48-56.*
40. //Коммунист, (Եր.), 1941, 21 февраля, N 43. //Kommunist, (Yer.), 1941, 21 fevralya, N 43.
41. //Коммунист, (Եր.), 1941, 23 февраля, N 45. //Kommunist, (Yer.), 1941, 23 fevralya, N 45.
42. //Коммунист, (Եր.), 1947, 29 июня, N 150. //Kommunist, (Yer.), 1947, 29 iyunya, N 150.
43. //Սովետական Հայաստան, 1947, 29 հունիսի, թիվ 150: //Sovetakan Hayastan, 1947, 29 hunisi, thiv 150.
44. *Գրամով Կ. Ն., Խոսք՝ ճանապարհի կեսին //Սովետական արվեստ, 1973, թիվ 10, էջ 32-33: Igumnov K. N., Khosq` dchanaparhi kesin //Sovetakan arvest, 1973, thiv 10, ej 32-33.*

45. Барсамян А. А., Концерты Святослава Рихтера //Коммунист (Ер.), 1953, 20 февраля, N 43, с. 4. *Barsamyan A. A.,*

Kontzerty Svyatoslava Rikhtera //Kommunist (Yer.), 1953, 20 fevralya, N 43, s. 4.

**Բանալի-բաներ.** Երևան, դաշնամուրային արվեստ, ռոյալ, Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա, Ռոմանոս Մելիքյան, Անուշավան Տեր-Ղևոնդյան, Նիկոլայ Միխայլովիչ Ռոմանով, «Բեխտայն»:

**Ключевые слова:** Ереван, фортепианное искусство, рояль, Ереванская государственная консерватория имени Комитаса, Романос Меликян, Анушаван Тер-Гевондян, Николай Михайлович Романов, “Бехштейн”.

**Keywords:** Yerevan, Piano Performance, Grand Piano, Yerevan State Conservatory after Komitas, Romanos Melikyan, Anushavan Ter-Ghevondyan, Nicholas Mikhailovich Romanov, “Bechstein”.

**Տեղեկություններ հեղինակի մասին.** ԱՐԱՄ ՍՈՒՐԵՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ (ծ. 18.05.1999, Երևան): Մասնագիտությամբ ֆիզիկոս-տեսաբան է: 2016-ին ավարտել է Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի Երևանի ավագ դպրոցը, 2020-ին՝ Երևանի պետական համալսարանի ֆիզիկայի ֆակուլտետը, ուսումնառությունն անցնելով ավադեմիկոս Գ. Սահակյանի անվան տեսական ֆիզիկայի ամբիոնում: Մի շարք հրատարակումների ու հոդվածների հեղինակ է, որոնց զգալի մասն ուղղված է հայկական դաշնամուրային արվեստի պատմության ուսումնասիրմանն ու քննադատի հանրայնացմանը: Հրատարակումները տեղ են գտել ինչպես էլեկտրոնային տիրույթում, այնպես էլ տպագիր մամուլում:

**Сведения об авторе:** АРАМ СУРЕНОВИЧ АРУТЮНЯН (род. 18.05.1999, Ереван), физик-теоретик. Окончил: Ереванскую старшую школу Национального политехнического университета Армении (2016), физический факультет Ереванского государственного университета, кафедры теоретической физики имени академика Г. Саакяна, (2020). Автор ряда публикаций и статей (как электронных, так и вышедших в свет в печатной прессе), в частности посвященных исследованию истории армянского фортепианного искусства и популяризации этой области.

**Information about the author:** АРАМ СУРЕНОВИЧ АРУТЮНЯН (born 18.05.1999, Yerevan). Specializing in theoretical physics. In 2016 graduated from the Yerevan High School of the National Polytechnic University of Armenia, in 2020 – from the Faculty of Physics of the Yerevan State University (Chair of Theoretical Physics after Academician G. Sahakyan). Author of a number of publications and articles (both electronic and published in the press), in particular, devoted to the study of the history of Armenian piano art and the popularization of this area.

## **Резюме**

Магистрант Ереванского государственного университета **Арам Суренович Арутюнян.** - *Ереванский «Бехштейн» Романовых: история белого рояля в контексте развития фортепианных традиций в городе.*

В страници новейшей истории Армении третьье десятилетие XX века вписано, в частности, как период основания академического музыкального образования в республике. В 1926 году третьим ректором в ту пору еще молодой Ереванской консерватории стал композитор Анушаван Тер-Гевондян. Перед новоназначенным руководителем, помимо множества забот, стояла также задача приобретения качественных музыкальных инструментов. В начальный период своего руководства, Тер-Гевондян приобрел для зала консерватории концертный рояль фирмы «Бехштейн», уникальный по своему «княжескому» прошлому, внешнему виду, а также, конечно, и качеству. В настоящем исследовании представлена история рояля, вместе с тем, для объективной оценки значения появления этого высококачественного инструмента в Ереване 1920-х годов, указаны некоторые аспекты предыстории – развития фортепианных традиций в городе, начиная с 70-х годов XIX столетия. Из ранее неопубликованных материалов фондов Музея литературы и искусства имени Егише Чаренца следует, что в деле приобретения рояля А. Тер-Гевондян помогал композитор, основатель и первый ректор Ереванской консерватории Романос Меликян. Рояль долгие годы был основным концертным инструментом главного музыкального учебного заведения Армении. Таким образом, принадлежавший ранее Великому князю Николаю Михайловичу Романову и привезенный из его Ликанского дворца (в поселке Ликани близ города Боржом, Грузия) особый белый «Бехштейн» сыграл ключевую роль в музыкальной жизни Еревана.

## **Summary**

Graduate student at the Yerevan State University **Aram Suren Harutyunyan.** - *“Romanov’s “Bechstein” - the History of the White Piano in the Context of the Development of Piano Music Traditions in Yerevan”.*

Պերպերյանի կյանքին ու գործունեությանը նվիրված ուսումնասիրության հեղինակը՝ Արտաշես Տեր-Խաչատուրեանը Երուսաղեմում անցկացրած տարիները ամենաբեղուն շրջանն է համարում Պերպերյանի ստեղծագործական կյանքում. «Իր միաթիբ հոգին կարծէք կը գտնէ իր բնական առազանը: Վանական խաղաղ մթնոլորտը, տնօրէնութեան տաղտկալից եւ մաշեցնող պաշտոնէն գերծ ըլլալը, Յ.Օշականի հետ պաշտօնակցութիւնը, Սիոն ամսաթերթին ներկայութիւնը եւ իր տարիքին լիութիւնը դաշնակցելով զինք կը մղեն ստեղծագործական աշխատանքի» (1. էջ 42): Հ. Օշականի հետ միասին Երուսաղեմի Հայ երաժշտական միության հիմնադիրը հանդիսանալով՝ նրանք նպատակ ունեին հայ և օտարազգի հանրությանը ծանոթացնել հայ երգն ու երաժշտությունը: Պատահական չէ, որ Միության առաջին գործը եղավ Կոմիտասի մահվան առիթով կազմակերպված սգո հանդեսը 1935 թ. նոյեմբերի 17-ին, որի ընթացքում բանախոսությամբ հանդես եկավ Շ. Պերպերյանը՝ արժեվորելով Կոմիտասի դերն ու նշանակությունը հայ հոգևոր ժառանգության համատեքստում: Օտար միջավայրում ծնված երիտասարդների հայեցի դաստիարակությունը և սեփական մշակութային արժեքների հետ ծանոթացնելը նպատակ ունեն. «խանդավառել անով, ժառանգորդը ընել հարստութեան, եւ առաջնորդել զանոնք այդ ժառանգութեան վրայ բան մը անելցնելու ճամբուն մէջ» (1. էջ 44):

«Սասունցի Դավիթ» քննարկատուը Հ. Օշականի հետ համագործակցությամբ ստեղծված երեք գործերից մեկն է: Բանաստեղծի գրական հիմքով են ստեղծվել նաև «Երբ մեռնիլ գիտեն...» քննարկատուը և «Աստուծոյ շունչով» օրհնատիւրները: Քննարկատուի ձեռագիրը վերջնական տեսքով հրատարակվել է Թորգոմ արք. Մանուկյանի ջանքերով՝ 1978-1983 թթ. ընթացքում: Մինչ այդ պահպանվել էին 1940-ական թվականներին Պերպերյանի նախկին սաների՝ Վահրամ Մավյանի, Տէր Առնակ քին. Գասպարեանի, Տէր Սահակ քին. Վրբ-

«Երաժշտական Հայաստան» ամսագրի խմբագրական խորհրդի երաշխավորությամբ՝ Ալինա Աշոտի Փահլևանյանի՝ 1.10.2021 թ., ընդունվել է տպագրության՝ 5.10.5.2021 թ., ներկայացրել է հեղինակը՝ 5.9.2021 թ.

թանկացանի և այլոց գրառած տարբերակները:

Պերպերյանի քննարկառաջարկները կազմված է Նախերգանքից և երեք պատկերներից: Երաժշտական համարներն ընդհանուր առմամբ 22-ն են: Նախերգանքում գերիշխող մեծամասնությամբ խմբերգային համարներ են կամ պարզապես օրհնության բացականչություններ, Առաջին պատկերում երաժշտական համարները բացակայում են, Երկրորդում ներմուծվում են երեք աշուղների մենահամարները, Երրորդ պատկերում՝ խմբերգեր, այդ թվում՝ աղջիկների խմբերգը, աշուղի գովքը և քննարկատչի վերջին՝ հաղթական, հանդիսավոր խմբերգը:

Երաժշտական համարները գրված են պարզ, հոմոֆոն-հարմոնիկ, ակորդային շարադրանքով: Մեղեդին և տենորի ձայնաբաժինը մեծ մասամբ հնչեցնում են հիմնական մեղեդին, մյուս ձայները՝ համապատասխան հարմոնիկ ներդաշնակումը: Բաս-բարիտոն ձայնաբաժինն հատուկ են կլինտա ինտերվալով ձայնառությունները՝ առավել ընդգծելով լադի հիմնական և դիմող ձայները: Յուրօրինակ է ակորդային կառուցվածքը, որում ակնառու է Կոմիտասի հարմոնիկ մտածողության անվիճելի ազդեցությունը: Այն դրսևորվում է կվարտային, սեկունդային ակորդների կառուցվածքներում՝ երաժշտական հյուսվածքի ուղղահայացներում նույնպես արտահայտելով հայկական լադերի տեսրախորդային մտածողությունը: Մեղեդիական գիծը հարազատ է ժողովրդական էպիկական-ասերգային բնույթի երգերին (Մոկաց Միրզա, հորովելներ)՝ փոքր ձայնասահմանում, հիմնականում կրկնվող հնչյունների համաչափ ռիթմական պատկերով, երբեմն խոսքի տաղաչափական առանձնահատկություններից ելնելով, հայտնվում են կետագծային, արագացված յամբ, տրիոլային ռիթմական դարձվածքներ: Չափը մեծ մասամբ կանոնավոր է (3/4, 4/4): Բացառությամբ Առաջին պատկերի վերջին խմբերգերի, որոնց չափը հեղինակը նշել է 12/8 և 5/8: 12/8 չափով է շարադրված նաև վերջին պատկերի եզրափակիչ խմբերգը՝ թեմատիկ և ռիթմական կամար հանդիսանալով Նախերգանքի հետ: Մեղեդիական և հարմոնիկ բազմազանությամբ ու հարստությամբ առանձնանում են Նախերգանքի վերջին համարները (8., 9.), Առաջին պատկերի միակ խմբերգը (10.) և Երրորդ պատկերի եզրափակիչ խմբերգերը, այդ թվում՝ Աղջիկների խմբերգը, որում ակնառու են կոմիտասյան ծիսական, հարսանեկան պարերգերի ռիթմահնտոնացիոն դարձվածքները: Երկրորդ պատկերի երաժշտական համարների առանձնահատուկ գունային լուծումները կապվում են երեք աշուղների մենահամարների հետ: Արտահայտիչ մեղեդիական գիծը մենակատարի ձայնաբաժնում ուղեկցվում է երգչախմբի թափանցիկ «գործիքային» նվագակցությամբ: Աշուղական երգարվեստին բնորոշ էլեկտրային հարստությունը և ռիթմական ազատությունը առավել չափով արտահայտվել է Երրորդ աշուղի թեմայում՝ շնորհիվ մանր տևողություններով շարադրանքի, կետագծային ռիթմական պատկերների, ֆերմատայով հնչյունների ազատ արտաբերման, նվագակցության մեջ ներմուծված գլխանդոլով արպեջոյացված ակորդների:

Այսպիսով, Շահան Պերպերյանը հայկական էպոսի երաժշտական մարմնավորման բարդագույն գեղարվեստական խնդիրն իրագործել է ազգային պրոֆեսիոնալ երաժշտության ավանդույթներին հավատարիմ, իր համար անգերազանցելի օրինակ ունենալով իր ուսուցչապետի՝ Կոմիտասի խմբերգային արվեստի բազմաձայնության և ռիթմահնտոնացիոն առանձնահատկությունները:

Խորհրդային շրջանում Էպոսի երաժշտաթատերական մարմնավորման առաջին լուրջ փորձը Հարո Ստեփանյանի՝ 1939 թ. ստեղծված «Սասունցի Դավիթ» օպերան է (լիբրետտոյի հեղինակ՝ Դերենիկ Դեմիրճյան): Ազգային օպերային արվեստում էպիկական բովանդակությամբ օպերայի ստեղծմանը նախորդել էին պատմահերոսական բովանդակությամբ Տիգրան Զուխաճյանի «Արշակ Երկրորդը», Քրիստափոր ԿարաՄուրզայի օպերային փորձերը, ավելի ուշ՝ Արմեն Տիգրանյանի «Դավիթ Բեկը»: Նշված հեղինակների փորձերը դեռևս հեռու էին օպերային ժանրի լիարժեք նմուշներ լինելուց, սակայն անհնարին է ժխտել դրանց կարևոր դերակատարումն ազգային էպիկական-հերոսական օպերայի կայացման ընթացքում: Դրանք մեծ մասամբ դեռևս դրամատիկական ներկայացումների համար ստեղծված երաժշտական բեմականացված հատվածներ էին: Նման հատվածների հիման վրա հետագայում, օրինակ, ստեղծվեց Տ. Զուխաճյանի «Արշակ Երկրորդը»: Սակայն բոլոր դեպքերում ակնհայտ է կոմպոզիտորների ձգտումը՝ ստեղծել մեծակտավ երաժշտաթատերական ներկայացումներ՝ հիմնված ժողովրդական ռիթմահնտոնացիոն դարձվածքների վրա՝ ակադեմիական ժանրի դրամատուրգիական կառույցում կիրառելով ազգային մեղեդայնության առանձնահատկությունները:

Այս համատեքստում Հարո Ստեփանյանի «Սասունցի Դավիթ»-ը առաջին հայկական էպիկական օպերան է, որտեղ ուրույն կերպով միահյուսվել են ազգային ավանդական ռիթմահնտոնացիոն դարձվածքները, ժամանակի ոգուն համահունչ, նորարարական ռեչիտատիվ-դեկլամացիոն վոկալ արտահայտչաբանակը, անշտապ, պատմողական, գրեթե ստատիկ բեմական արարի դրամատուրգիական գիծը:

Օպերան ժամանակին չհաջողվեց բեմադրել, սակայն նրա առանձին խմբերգային-սիմֆոնիկ հատվածները բազմիցս հնչել են համերգային ծրագրերում: Օպերայի հատվածներից կազմված կլավիրո հրատարակվել է 1939 թ. Մոսկվայում: Ստեղծման օրվանից ավելի քան յոթ տասնամյակ անց, 2017-ի սեպտեմբերին հայ հանդիսատեսին ներկայացվեց Հ. Ստեփանյանի «Սասունցի Դավիթ» օպերան: Այս բեմականացումը մշակութային-քաղաքական կարևոր նշանակություն ունեցող ծրագրի հերթական փուլն էր: 2014-ին Արցախի Հանրապետության Անկախության օրվա կապակցությամբ Շուշում իրականացվեց ծրագրի առաջին ներկայացումը՝ Անդրեյ Բաբանի «Արժվարեղ» օպերան, 2015-ին՝ Ավետ Տերտերյանի «Կրակն օղակում» օպերա-բալետը, 2017-ին՝ Հ. Ստեփանյանի «Սասունցի Դավիթ»-ը: Ջեկուցման շրջանակներում տեղին չենք

համարում բեմականացման որակի, գեղարվեստական արժանիքների գնահատումը:

Անկախ բեմադրության վիճելի և ակնհայտ թերացումներից, հարկ է նշել, որ իր ստեղծումից գրեթե յոթ տասնամյակ անց բեմադրված օպերան, լինելով առաջին լուրջ երաժշտաթատերական անդրադարձը ազգային էպոսին, դրսևորել է ժամանակի օպերային գեղագիտության բնորոշ առանձնահատկությունները՝ ռեչիտատիվ-արտասանական երգելատճը, բեմական գործողության անշտապ, էպիկական ծավալումը, պատմական անցյալի հերոսական պատկերների վերստեղծումը: Մինևույն ժամանակ, օպերայի երաժշտական լեզուն խոր արմատներով սերում է ժողովրդական, աշուղական երգերի, տաղերի ու շարականների, գուսանների էպիկական ասքերի ռիթմահետոնացիոն հարուստ ակունքներից: Վստահաբար, այն կարևոր ընդօրինակելի փուլ էր հայ պրոֆեսիոնալ կոմպոզիտորական արվեստում էպոսի երաժշտական մարմնավորման հետագա փորձերի իրականացման ճանապարհին:

Էպոսի քնարական բովանդակության երաժշտական մարմնավորման ուրույն օրինակ է «Խանդութ» բալետը, որը բեմադրվեց մայր թատրոնի բեմում 1945-ին: Լիբրետտոյի հեղինակներն էին ռեժիսոր Արմեն Գուլակյանը, բեմադրիչ պարուսույցներ Լ. Լավրովսկին և Վ. Վարկովիցին: Բալետային ներկայացման համար դիրիժոր Գևորգ Բուդաղյանն ընտրեց երաժշտական հատվածներ Ա. Սպենդիարյանի հայտնի և անհայտ գործերից: Այս ստեղծագործության գլխավոր արժանիքը կարելի է համարել այն փաստը, որ սա առաջին փորձն էր խորեոգրաֆիկ միջոցներով վերստեղծելու էպիկական պատումի քնարական էջերը: Ժամանակակիցների վկայությամբ, ներկայացումը չափազանց գունեղ էր ու տպավորիչ, սակայն երաժշտության մեջ ներառված հատվածներն ի սկզբանե այլ ստեղծագործական մտահաղացման, այլ կերպարային ոլորտի, անգամ այլ ծրագրային բովանդակությամբ երկերից էին համադրվել, ուստի այս բալետային ստեղծագործության լեզվաճանաչական առանձնահատկությունների մասին խոսելն ավելորդ է: Այն ուշադրության է արժանի զուտ որպես ևս մի անդրադարձ էպոսին, այս անգամ խորեոգրաֆիկ միջոցներով:

Էպոսի երաժշտական առ այսօր հայտնի և իրենց գեղարվեստական արժանիքներով նշանակալի երկու նմուշներն ստեղծվել են գրեթե նույն ժամանակահատվածում: 1976-1977 թվականներին:

1977-ին Ալեքսանդր Աճեմյանը գրեց իր հինգերորդ՝ «Սասունցի Դավիթ» սիմֆոնիան՝ սիմֆոնիկ մեծ նվագախմբի, երգեհոնի և քառամայն երգչախմբի համար: Նույն թվականին սիմֆոնիան հնչեց Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի, Երաժշտական ընկերության երգչախմբի (գեղարվեստական ղեկավար՝ Էմմա Ծատուրյան) կատարմամբ, դիրիժոր Դավիթ Խանջյանի ղեկավարությամբ:

Ժանրային իմաստով սիմֆոնիան կարելի է բնորոշել որպես օրատորիալ սիմֆոնիա, և դրանով իսկ այն լիիրավ համարում է ներկա գեղուցման մեջ ուսումնասիրվող երաժշտաթատերական գործերի շարքը, որպես

օրատորիալ և սիմֆոնիկ ժանրերի սինթեզի օրինակ: Երաժշտագետ Սվետլանա Սարգսյանը, ոճերի սինթեզի դրսևորումը համարելով XX դարի երաժշտության առաջնային բնութագրերից մեկը, նշում է երեք հատկանիշ. – «1) որ XX դարում այն պայմանավորված է ամբողջ գեղարվեստական գործունեության նոր բնույթով: Այդ բնույթը սահմանելի է իբրև գեղարվեստական տարասեռ սկզբունքներ համադրելու միտում, ընդամին համադրվող բաղադրիչներից յուրաքանչյուրն ամբողջի կառուցվածքի մեջ ֆունկցիոնալ-գործաձևական է: 2) Այդ համադրման մեջ ներառվում են գեղարվեստական ստեղծագործության բոլոր ոլորտները՝ իրենց տարատեսակներով՝ գրականություն, թատրոն... 3) Տարբեր ժանրային ոճերի գործուն փոխազդեցությունն է, հաշվի առնելով, որ դրանք բնավ միանշանակ չեն» (2. էջ 83-89):

Ա. Աճեմյանի սիմֆոնիան մեկնասանի է, սոնատային-սիմֆոնիկ ցիկլի ազատ մեկնաբանությամբ՝ ենթարկվելով գրական-բանաստեղծական տեքստի ընթացքին: Տեքստի հեղինակը բանաստեղծ Լյուդվիգ Դուրյանն է, որի հետ կոմպոզիտորը երկարամյա ստեղծագործական համագործակցություն է ունեցել: Լիբրետտոն կազմված է չորս հիմնական մասերից: Առաջինում նկարագրվում է Սասնա երկիրը, գովերգվում են նրա բնությունն ու քաջերը: Երկրորդում փառաբանվում է Դավիթի կերպարը՝ որպես ժողովրդի ամենամիլիրական արժեքների կրող: Կերպարն առավել արտահայտիչ դարձնելու նպատակով Դավիթին համեմատում են արևի հետ, որը կենսատու ուժի և ջերմության խորհրդանիշն էր: Նրան հակադրվում է Մորա Մելիքը՝ արևախում վիշապի կերպարանքով, որպես խավարի, չարության ու դաժանության խորհրդանիշ: Երրորդ մասում Դավիթի և Մելիքի բախումն է, Չորրորդ մասը նկարագրում է Դավիթի ժամանակավոր անկումը և դրան հաջորդող փառավոր հաղթանակը, որը ձեռք է բերվում Սասնա ժողովրդի անսպառ հավատի ու հաստատականության շնորհիվ: Սիմֆոնիայի ծավալման ընթացքում զարգանում և լիարժեք դրսևորվում է ժողովրդի կերպարն՝ ի դեմս երգչախմբի, որն իրադարձությունների զարգացման գլխավոր մասնակիցն ու մեկնաբանողն է:

Սոնատային-սիմֆոնիկ կառույցի բաժինների եզրագծերը ենթարկվում են գրական հիմքի ենթաբաժինների՝ Նախաբան, Էքսպոզիցիա, Մշակում, Ռեպրիզա, որոնք միմյանց հաջորդում են շղթայման սկզբունքով. նախորդ մասի վերջը հանդիսանում է հաջորդի սկիզբը: Դինամիկ զարգացման այս հնարքն իրականացվում է բանաստեղծական տեքստի բովանդակության իմաստային նշանակության և երաժշտական կառույցների ֆունկցիաների համատեղման արդյունքում:

Սիմֆոնիայի թեմատիզմը հագեցած է հայ երաժշտության ինտոնացիոն և լադային մտածողությանը բնորոշ արտահայտչամիջոցներով՝ փոքր և մեծ սեկունդաներով քայլերը, փոքրացված կվարտայով թռիչքը, թեմայի ծավալումը կվինտայի ձայնասահմանում, դամի հնարք հիշեցնող ձայնառությունները: Դրա հետ մեկտեղ կոմպոզիտորն առատորեն կիրառում է XX դարի երաժշտությանը բնորոշ հնարքներ. պոլիհարմոնիա,

պոլիտիքմիա, հազեցած խրոմատիզմ, եռատոների սահմանում ծավալվող սուր ռիթմահնտոնացիոն դարձվածքներ ևն: Բրադարծությունների գլխավոր մեկնաբանողի և անմիջական մասնակցի՝ ժողովրդի կերպարը, նրա անմիջականությունն ու անկեղծ ապրումները վերստեղծելու համար կոմպոզիտորը կիրառել է խմբերգային երգեցողության արտասանական ոճը, ինչպես նաև «երգչախմբային սոնորիստիկայի» հնարքներ:

Ա. Աճեմյանի սիմֆոնիկ ստեղծագործությունների ինքնատիպ մտածողությունը, գունային վառ երանգապնակն առավելապես դրսևորվում է նվագախմբային միջոցների բազմազան կիրառման շնորհիվ: Անդրադառնալով այս ժամանակահատվածի նվագախմբային մտածողությանը, Ս. Սարգսյանը պարզաբանում է, որ յուրաքանչյուր հեղինակի յուրօրինակ մտածողությունը դրսևորվում է նրա գործիքային երևակայության մեջ «նվագախմբում մտածելու» նրա ինքնօրինակ ընդունակությամբ, պլաստիկայի զգացողությամբ, տեմբրային-գործիքային շարժման օրինաչափությամբ (3. էջ 20): Մեծ սիմֆոնիկ նվագախմբը, երգեհոնի և երգչախմբի ներմուծումը, որպես գործիքային լրացուցիչ տեմբր, ստեղծում են տեմբրային գունախաղեր, իսկ հեղինակի ձգտումը առանձին գործիքների տեմբրային հնարքների թատերականացմանը նպաստում են սիմֆոնիկ և օրատորիալ ժանրերի սինթեզին:

1976-ին Էդգար Հովհաննիսյանն ավարտեց «Սասունցի Դավիթ» օպերա-բալետը, որը նույն տարում էլ բեմադրվեց Սպենդիարյանի անվ. օպերայի և բալետի թատրոնում՝ դառնալով հեղինակի հերթական անվիճելի ձեռքբերումը երաժշտաթատերական ժանրում, դիրիժորն էր Հակոբ Ոսկանյանը, Դավթի դերում Վիլեն Գալստյանը, որը նաև բեմադրող պարուսույցն էր, Խանդութի դերում՝ Նադեժդա Դավթյան, Իսմիլ Խաթուն՝ Աննա Մարիկյան, Ձենով Օհան՝ Հենրի Ալավերդյան:

Դյուցազնավեպին դիմելը բոլորովին էլ անսպասելի էր կոմպոզիտորի ստեղծագործական կենսագրության այս փուլում: Գաղափարը հասունացել էր դրան նախորդող ժամանակահատվածում և, կարելի է ասել, ողջ ստեղծագործական ուղու ընթացքում: Դեռևս 60-ականներին, Թ. Ալթունյանի անվան Երգի-պարի անսամբլում աշխատելու տարիներին խմբի երկացանկի ժանրային ու ոճական հարստացման նյութը Է. Հովհաննիսյանը տեսնում էր հայկական բազմադարյա մշակույթի հնամենի խորքերում՝ սկսած հեթանոսական երգերից մինչև ժողովրդական ու աշուղական արվեստը: Երգերի մատուցման բարենորոգման հիմքում կոմպոզիտորը տեսնում էր հնագույն սինկրետիկ արվեստների՝ միմոս-գուսանների, վարձակների, ձայնարկուների, կաքավիչների պլաստիկ արվեստի սկզբունքներում: Ժողովրդական բանահյուսության անզին նմուշները մոռացությունից փրկելու, հարատևելու լավագույն միջոցը Հովհաննիսյանը տեսնում էր «հայ ժողովրդական էպոսի, բանահյուսության, երաժշտական ֆոլկլորի, պարարվեստի թատրոն ստեղծելու գաղափարում» (4. էջ 58): Առանձնահատուկ վերաբերմունքը էպիկական բնույթի ժողովրդական ստեղծագործություններին՝ կոմպոզիտորը բացատրում էր նրանում առկա սիմֆոնիզմի տարրերով:

Երգի-պարի անսամբլում նրան նույնիսկ հաջողվում է բեմադրել «Դավիթ և Խանդութ» պատկերը՝ հիմնված էպոսի քնարական հատվածների հիման վրա:

Դյուցազնավեպի հիման վրա մեծակերտ երաժշտաթատերական երկ ստեղծելու գաղափարը կոմպոզիտորը հայտնում է արվեստակից ընկերոջը՝ Սերգեյ Փարաջանովին՝ ի դեմս նրա տեսնելով ոչ միայն գրական նախահիմքի հեղինակին, այլև երաժշտաթատերական այդ որմնանկարի բեմադրող ռեժիսորին: Թեև Փարաջանովի լիբրետոն մերժվում է խորհրդային գաղափարախոսության արգելքների պատճառով, այնուամենայնիվ որոշ բաներ օգտագործվում են լիբրետոյի վերջնական տարբերակում՝ առաջին հերթին պոեզիայի, թատրոնի, մնջախաղի, կինոյի գուտ «փարաջանովյան» աշխարհընկալումը, ինչը հուզում էր Հովհաննիսյանի երևակայությունն ու բանաստեղծական էությունը:

Երաժշտագետ Կարինե Խուդաբաշյանի գնահատմամբ, հեղինակը «ճիշտ է ընտրել ձևը, որի նախատիպն է մեր միջնադարյան գուսանական թատրոնը, ճիշտ է ընտրել երաժշտական ասքի ձևը, որը հասուկ է հենց էպոսին: Ձև, որի մեջ ասմունքը, մեներգը, խմբերգը (ապա նաև պարերը) վիթխարի գործողություն են կազմում... Հովհաննիսյանի երաժշտությունն արտահայտում է ժողովրդի ոգու դյուցազնական կողմը՝ վիմակերտ ծանրությունը, հաստատուն կեցվածքը, խոր մարդասիրությունը» (5.):

«Սասունցի Դավիթ» օպերա-բալետը այն ուղու տրամաբանական շարունակությունն է, որը սկիզբ էր առնում իր ուսուցիչների՝ Գրիգոր Եղիազարյանի և Արամ Խաչատրյանի բալետային ավանդույթներից և մարմնավորվում սեփական երաժշտաթատերական երկերում՝ «Մարմար», «Հավերժական կուռք», «Անտունի» և այս ամենի զագաթնակետը հանդիսացող «Սասունցի Դավթում»:

Ստեղծագործության մեջ ցայտուն դրսևորվել է կոմպոզիտորի ոճական առանձնահատկությունների ամենաբնորոշ կողմը՝ էպիկականությունը, որը «լսելի է նրա երգերի անշտապ ու հպարտ հնչող մեղեդու մեջ, ասես մի շնչով երգվող սիմֆոնիկ լայն պլանների ծավալման մեջ, որոնք էլ դարձան նրա բալետային կոմպոզիցիայի հենքը» (6.):

Դյուցազնավեպի երաժշտաբեմական մարմնավորման դեպքում ինքնին ենթադրվում է գրելաոճի, արտահայտչանշանակի էպիկական շունչը «Սասունցի Դավթի» դրամատուրգիայի հիմքում խոշոր երաժշտական պատկերների համադրման սկզբունքն է, զարգացումը ծավալվում է վեհաշուք ու անշտապ, դրա հետ մեկտեղ, այն հազեցած է ներքին դիմամիզմով ու լարվածությամբ: Նախաբանը, Առաջին և վերջին տեսարանները յուրօրինակ կամարի սկզբունքով երաժշտական կտավին ամբողջական սիմֆոնիկ կառույցի ավարտունություն են հաղորդում:

Կոմպոզիտորի ոճական մեկ այլ առանձնահատկությունն էլ ժողովրդական երաժշտության ամենալայն ու խորը շերտերի ռիթմահնտոնացիոն արտահայտչամիջոցների ընդգրկումն է: Ձգտելով հասնել առավելագույն գեղարվեստական ճշմարտացիության՝ կոմպոզիտորը

երկար տարիներ ուսումնասիրում էր էպոսի պատմությունը, ակադեմիական գրառումները, Հովհ.աննես Թումանյանի, Ավետիք Իսահակյանի, Նաիրի Չարյանի գեղարվեստական մեկնաբանությունները, նաև ժողովրդական ասացողների տարբերակները: «Ես հնարավորինս ձգտում էի դուրս բերել «արխիվային» վիճակից ժողովրդական երգերը» (7).- պատմում է կոմպոզիտորը: Կոմիտասի, Սյպիրիդոն Մելիքյանի, Արամ Քոչարյանի ձայնագրությամբ պահպանված էպոսի երաժշտական հատվածները, վիպերգուների կատարումները կուտակեցին այն պաշարը, որը հիմնանյութ դարձավ օպերա-բալետի համար: Իր իսկ՝ հեղինակի խոստովանությամբ, «Երգի-պարի անսամբլում աշխատելու չորս տարիները նույնպես իրենց նշանակալի հետքը թողեցին: Ֆոկլորի հետ շփումն ինքնին ստեղծագործաբար հարստացրեց ինձ, հնարավորություն տվեց հագենալու նրա ինտոնացիոն մթնոլորտով» (7.):

«Սասունցի Դավիթում» Էդգար Հովհաննիսյանը իրագործել է երկու տիպի գեղագիտական խնդիր: Դրանցից մեկը կապված է պատմական-գեղարվեստական ժամանակի լուծման հետ: «Պատկերելով անցյալը՝ կոմպոզիտորն այն լուսաբանում է ներկայի, արդիականության դիտանկյունից և հակառակը, այդ անցյալը նպաստում է սպազան ճիշտ իմաստավորելուն» (8. էջ 34):

Ժանրերի սինթեզի խնդիրը դրսևորվել է ոչ միայն օպերային, բալետային և կանտատ-օրատորիալ ժանրերի արտաքին միաձուլման գաղափարում, այլև երաժշտական դրամատուրգիայի ներքին կառույցներում, սիմֆոնիկ, պոլիֆոնիկ և սոնատային զարգացման սկզբունքներում: Դրանց թվում՝ երաժշտական կերպարների վառ ու տպավորիչ լայտթեմաների լայն կիրառումն է, որը երաժշտական հյուսվածքին միաձույլ ու ամբողջական տեսք է հաղորդում:

Կոմպոզիտորը խոսափում է «դիտավորյալ» արխայիկ գոյացումներից, արտաքին ոճավորումից: Հնագույն դարձվածքները կամ դրանց ոգով ստեղծված հեղինակային թեմաները կյանք են ստանում ժամանակակից կոմպոզիտորական գրելաճճը, այլևայլ տեխնիկական հնարները, պլեստորիկական, սոնորիստիկական, պոլիտոնայնությունը, բնական դիատոնիկայի համադրությունը սերիալ տեխնիկայի հետ և այլն:

Մյուս կարևոր գեղագիտական խնդիրը, որն առաջանում է օպերա-բալետում, Արևելք-Արևմուտք մշակութային փոխառնչության խնդիրն է, որը դրսևորվում է բարդագույն և բազմազան կապերի, ազգային, աշխարհագրական, կրոնական, հոգեբանական և այլ մակարդակներում: Նույն բժայնորությունը, որ դրսևորում էր կոմպոզիտորը հայրենի ֆոկլորի հանդեպ, տաժում է արարական ֆոկլորի հանդեպ՝ առավելագույն արտա-

հայտչական ճշմարտացիության հասնելու նպատակով: Այլ մշակույթի հանդեպ ակնածալի, նրբանկատ վերաբերմունքի ավանդույթը նույնպես զայիս է հայկական բալետի հիմնադիրներից՝ իր մեծ ուսուցիչներից, որոնց բալետներում հակամարտող ուժերը ներկայանում են ոչ թե իրրև միանշանակ բացասական կերպարներ, այլ հատնում են իրենց ողջ հզորությամբ, վեհաշուք ու ինքնատիպ կերպարայնությամբ: Ուշագրավ են կոմպոզիտորի մտքերը դրամատուրգիական նման լուծում կիրառելու մասին. «Ինչ վերաբերում է Մարա Մելիքի կերպարին, ապա այն պետք է լուծվի ոչ թե մնջախաղային ու դրամատիկական միջոցներով, այլ պետք է լինի խիստ ակտիվ, պարային ու դինամիկ: Ընդգծվում է Մելիքի ուժը, կամքը, որպեսզի ընդգծվի Դավթի հաղթանակի նշանակությունը» (9. էջ 34): Հենց դա է երաժշտական կերպարի լուծման բանալին:

Էդգար Հովհաննիսյանի «Սասունցի Դավիթ» օպերա-բալետն առ այսօր ազգային վիպերգի երաժշտաթատերական մարմնավորման դժվարին գեղարվեստական խնդրի լուծման ամենահաջողված օրինակներից է:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. Տեր-Խաչատուրեան Արտաշէս, Շահան Ռ. Պերպրեան. Կենսագրութիւն եւ մատենագիտութիւն, Պէրրոթ, 1969 թ.: Ter-Khachturean Aratashes, Shahan R. Perperean. Kensagrutiwn ew matenagituthiwn, Peyruth, 1969 th.
2. Մարգսյան Մ. Կ., Դյուցազնավայրի օպերայի և բալետի լեզվով, //Գարուն, N 3, էջ 83-89: Sargsyan S. K., Dyutznavepni operayi ev baleti lezvov, //Garun, N 3, eij 83-89.
3. Саркисян С. К., Вопросы современной армянской музыки (60-е годы), Ер., 1983. Sargsyan S. K., Voprosy sovremennoj armjanskoj muzyki (60-e gody), Yer., 1983.
4. Անսամբլ լայն առումով, Է. Հովհաննիսյանի հարցազրույցը Կ. Մարկոսյանի հետ, //Սովետական արվեստ, N 10, 1970 թ.: Ansambl layn arumov, E. Hovhannisyani hartazruytze K. Markosyani het, //Sovetakan arvest, N 10, 1970 th.
5. Խոնարաշյան Կ. Է., Երաժշտական հարստ լեզվով, //Երեկոյան Երևան, 11 մայիսի Եր., 1976 թ.: Khudabashyan K. E., Yerazshtakan harust lezvov, //Yerekoyan Yerevan, 11 mayisi, Yer., 1976 th.
6. Ռուխկյան Մ. Ա., Դավթի նոր ծնունդը, //Սովետական արվեստ, N 4, 1977 թ.: Rukhkyan M. A., Davti nor tsnund', //Sovetakan arvest, N 4, 1977 th.
7. Котоян Г., Эпос в сценическом воплощении., //Коммунист, 1976, 8 августа. Kotoyan G., Eijos v stzenicheskom voploshchenii., //Kommunist, 1976, 8 avgusta.
8. Тигранов Г. Г., Армянский музыкальный театр., т. 4., Ер.: Советакан грох, 1988. Tigranov G. G., Armyanskij muzykal'nyj teatr., t. 4 Yer.: Sovetakan grokh, 1988.
9. Մովսիսյան Ծ. Հ., Է. Հովհաննիսյանի կամերային-գործիքային և սիմֆոնիկ ստեղծագործությունները, Եր., Իրանագիտական կովկասյան կենտրոն, 2012 թ.: Movsisyan Ts. H., E. Hovhannisyani kamerayin-gortsiqayin ev simfonik steghtsagortsuthyunner', Yer., Iranagitakan kovkasyan kentron, 2012 th.

**Բանալի-բառեր.** էպոս, քնարական դրամա, բալետ, օպերա, Սիմֆոնիա:  
**Ключевые слова:** эпос, лирическая драма, балет, опера, симфония.  
**Key words:** Epic, The lyrical drama, Ballet, Opera, Symphony.

**Տեղեկություններ հեղինակի մասին.** ՄՈՎՍԻՍՅԱՆ ԾՈՎԻՆԱՐ ՀՐԱՅՐԻ Ավարտել է 1989-ին ԵՊԿ երաժշտագիտության բաժինը (ղեկավար, պրոֆեսոր, արվեստագիտության թեկնածու Ա. Բուդաղյան), 1992-1994-ին՝ Մոսկվայի համամիութենական արվեստի ինստիտուտի ասպիրանտուրան (ղեկավար՝ պրոֆեսոր, արվեստագիտության դոկտոր Իզաբելլա Յոլյան): 2011-ին ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտում պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն «Էդգար Հովհաննիսյանի կամերային-գործիքային և սիմֆոնիկ ստեղծագործությունների ոճական առանձնահատկությունները» (ղեկավար՝ պրոֆեսոր, արվեստագիտության դոկտոր, պրոֆ. Կ. Ա. Չաղազյանյան): Դասավանդում է՝ 1994-ից ԵՊԿ երաժշտության տեսության ամբիոնում, 2004-ից դոցենտի պաշտոնում, 2012-ին դոցենտի կոչում է

ստացել: 2018-ից նշանակվել է ԵՊԿ գիտական գծով պրոռեկտոր: Աշխատել է «Արվեստ» ամսագրում, Հայկական Հանրագիտարանի խմբագրություններում: Հեղինակ է մենագրությունների՝ «Էդգար Հովհաննիսյան. կյանքս հուշերում», (կազմող, տեքստի հեղինակ, Ե., «Տիգրան Մեծ», 1998 թ.), «Էդգար Հովհաննիսյանի կամերային-գործիքային և սիմֆոնիկ ստեղծագործությունները» (Եր., Իրանագիտական կոմիտայան կենտրոն, 2012 թ.), «Յուրի Հարությունյան. Կյանքի զուգահեռներ» (Ե., Կոլլաժ, 2014 թ.), կազմել և ծանոթագրել է Նո-վախի Դերոյանի «Երկեր» ժողովածուն (Ե., Գիտություն, 2015 թ.), ավելի քան 30 գիտական և տասնյակ հրատարակատարական հոդ-վածների (//Музыкальная академия, //Արվեստ, //Երաժշտական Հայաստան, //Պատմաբանասիրական հանդես, //Հանդես, //Հայագիտական հանդես (Բեյրութ)): Խմբագրել է ԵՊԿ պրոֆեսորներ Ի. Ջոդոտովայի «Գաղանմուրային արվեստի պատմություն» (Ե., 2017 թ.) և Ն. Պողոսյանի «Կիբրաի կատարողական արվեստի պատմություն» (Ե., 2017 թ.), Մ. Տերյանի «Հայ խմբերգային գրականու-թյուն» (Ե., 2020 թ.), Ն. Դերոյանի «Երաժշտական ստեղծագործության վերլուծություն» (Ե., 2020 թ.) դասագրքերը: Ձեռագրումներով հան-դես է եկել միջազգային, հանրապետական գիտաժողովներում՝ Հայաստանում և արտերկրում (Երևան, Գյումրի, Մոսկվա, Օդեսա, Բա-րսել, Փիֆա):

**Сведения об авторе:** **МОВСИСЯН ЦОВИНАР ГРАЙРОВНА.** Окончила: отделение музыковедения ЕГК, научный руководитель канд. иск., проф. А. Будагян (1989); Московский всесоюзный институт искусствознания, руководитель доктор иск., проф. Изабелла Еолян (1992-1994). Защитила кандидатскую диссертацию на тему "Стилевые особенности камерно-инструментальных и симфонических произведений Эдгара Оганесяна", рук. д-р иск., проф. К. А. Джагацпаян (2011), кандидат искусствознания (2012). Работала: в редакции журнала "Арвест", в издательстве Армянской Энциклопедии. Проректор ЕГК по науке (с 2018). Автор монографий: "Эдгар Оганесян. Моя жизнь в воспоминаниях" (автор текста и редактор Ц. Мовсисян) Ер.: Тигран Мец, 1988; "Камерно-инструментальные и симфонические произведения Эдгара Оганесяна", Ер.: Кавказский центр иранистики, 2012; "Юрий Арутюнян: жизненные параллели", Ер.: Коллаж, 2014, а также более тридцати научных статей в периодических изданиях //Арвест, //Музыкальная Армения, //Патмабанасиракан андес, //Андес ЕГИТК, //Айагитакан андес (Бейрут), //Музыкальная академия и в сборниках материалов международных научных конференций.

**Information about the author:** **MOVSIKYAN TSOVINAR HRAYR** graduated in 1989 from the Department of Musicology at the YSC (Research supervisor A. Budaghyan, Ph.D. in Arts, Prof.). In 1992-1994 she completed her postgraduate studies at the Moscow All-Union Institute for Art Studies under the guidance of Doctor of Arts, prof. Isabella Yolian. She worked in the editorial office of "Arvest" magazine, and in the Armenian Encyclopedia Publishing House. Since 1989 she is working at the YSC. In 2018 she was appointed Vice-Rector for Science of the YSC. In 2011 Ts. Movsian defended her Ph.D. thesis on «Stylistic Characteristics of Edgar Hovhannisyany's Chamber Instrumental and Symphonic Works» (the guidance of Doctor of Arts, prof. K. A. Jaghatspanyan), for which the HAC of the RA awarded her the scientific degree PhD of Art, and in 2012 she received the academic title of Associate Professor. She is the author of three monographs: "Edgar Hovhannisyany. My Life in Memories" (the text was written down and edited by Ts. Movsian) Yerevan, Tigran Mets, 1988; "Chamber Instrumental and Symphonic Works by Edgar Hovhannisyany", Yerevan., Caucasus Center for Iranian Studies, 2012; "Yuri Harutyunyan: Life Parallels", Yerevan, Collage, 2014. She has also published over thirty research articles in "Arvest", "Yerazhshtakan Hayastan", "Patmabanasirakan Handes", "Handes" EGITK, "Hayagitakan Handes" (Beirut), and "Musikalnaya Akademiya" periodicals, as well as in proceedings of international scientific conferences.

## Րեզյումե

Музыковед, кандидат искусствоведения, доцент Ереванской государственной консерватории Цовинар Грайрловна Мовсисян. - "Эпос «Давид Сасунский» в творчестве армянских композиторов".

Существует не так много музыкальных обращений к эпосу "Давид Сасунский". Вместе с тем, различные историко-теоретические и литературные источники свидетельствуют о том, что основатель армянской профессиональной музыки Комитас в течение долгого времени мечтал о создании оперы на основе армянского эпоса. К сожалению, никаких документов или черновиков, свидетельствующих о подобном замысле композитора, по сей день не обнаружено. Хронологически первое музыкальное обращение к эпосу связано с именем Шаана Ретеоса Перперяна. Лирическая драма Перперяна "Давид Сасунский" на либретто Акона Ошакана была создана в 1935-1940 годы в Иерусалиме.

Первая значительная попытка музыкально-сценического воплощения эпоса в советский период была осуществлена Аро Степаняном в 1939 году (либретто Дереника Демирчяна). Особым примером музыкального обращения к лирической линии эпоса является балет "Хандут" (1945). Геворг Будагян, дирижер постановки, создал спектакль на основе как популярных, так и малоизвестных произведений А. Спендиаряна. Два наиболее значимых по своим художественным качествам образца музыкального обращения к эпосу, известные по сей день, были созданы почти одновременно – в 1976-1977 годах. Это – Пятая симфония Александра Аджемяна "Давид Сасунский" для симфонического оркестра, органа и четырехголосного хора и опера-балет "Давид Сасунский" Эдгара Оганесяна. В статье рассматриваются стилистические особенности указанных произведений, а также их художественная ценность в хронологическом контексте армянской профессиональной музыки.

## Summary

Musicologist, PhD in Arts candidate, Docent of YSC Tsovinar Hrayr Movsian. - "David of Sassoun" the epic in Armenian compositional art.

There are very few musical versions of Armenian national epic David of Sassoun.

Nevertheless, various historical, theoretical and literary sources stated that Komitas, the founder of the Armenian professional music, dreamed of creating an opera based on the epic. Unfortunately, to this day no documents or a rough draft have been found, confirming Komitas's plans of writing the opera.

Chronologically, the first musical resort to the epic was associated with the name of Shahan Reteos Berberian. The lyrical drama "David of Sassoun" (libretto by Hakob Oshakan) was written during the 1935-1940 in Jerusalem. The first serious attempt of musical and dramatic embodiment of the epic was written in the Soviet era by Haro Stepanyan in 1939 (libretto by Derenik Demirehyan). One particular example of the musical embodiment of the lyrical line of the epic was "Khandut" ballet (1945). The music for the ballet performance was compiled by Gevorg Budaghyan, conductor, who adapted some fragments from Alexander Spendiaryan works, both popular and unknown.

The two most significant, due to their artistic values, musical versions of the epic that are known to this day, were created almost simultaneously, in 1976-1977- Alexander Adjemian's Fifth Symphony for a symphony orchestra, organ and four-part choir entitled "David of Sassoun", and Edgar Hovhannisyany's opera-ballet "David of Sassoun".

The study reviews the stylistic features of the mentioned works, as well as their artistic value within the chronological context of the Armenian professional music.

**АРМЕНИИ СЕРЕЖАЕВНА  
БАЗИНЯН**

*Певица, доцент Ереванской государственной консерватории им. Комитаса*  
E-mail: bazinyan77@mail.ru

**ИСТОКИ АРМЯНСКОГО ПРОФЕССИОНАЛЬНОГО  
ВОКАЛЬНОГО ИСКУССТВА.  
АЙКАНУШ ДАНИЕЛЯН**

Երբ նա երգում է, թվում է քնքուշ  
Վարդերի միջով առուն է անցնում  
Թվում է զարնան վարդերից անուշ  
Բուրմունքն է հովի երգով բարձրանում...

...Բոլոր սոխակներն ինչպես մի գերի  
Կրեն՝ երբ նա երգի քնքշորոր  
Այդ քո բլրովն Երկիր Նաիրի  
Այդ և քո վարդն է, հին աշխարհ իմ նոր...

*Հովհ. Շիրազ  
Հարգանքներով՝ ընկ. Հ. Դանիելյանին*

Один из чудеснейших даров природы - это голос певческий, данный человеку. Это редкий дар, потому что поющих людей много, но певцов в подлинном, истинном смысле слова, очень мало.

*А. Б. Даниелян*

**Д**ля того, чтобы носить и оправдывать высокое звание "певец", помимо голоса нужен целый комплекс необходимых данных. В ряду крупнейших представителей советского исполнительского искусства первого поколения, сыгравших выдающуюся роль в становлении и развитии музыкальной культуры, достойное место заняла Айкануш Даниелян. Пение А. Б. Даниелян стало целой эпохой в истории армянского театра, являясь олицетворением его замечательных художественных завоеваний. Творческая деятельность А. Б. Даниелян имеет большое значение в развитии армянской вокальной школы. Она внесла неоценимый вклад в формирование советского армянского искусства, в становление и развитие вокального исполнительства Советской Армении, долгие годы посвятив себя служению оперному искусству.

А. Б. Даниелян – первая из армянских деятелей искусства, была удостоена высокого звания Народной артистки СССР. Даниелян была гордостью оперного театра: восхитительное лирико-колоратурное сопрано, легкий, нежный, ласкающий тембр, гибкое и ровное звукоизвлечение... *“Очень красивый голос, соеди-*

*нивший в своем тембре яркость и металл с задушевной мягкостью и теплотой, голос со свободной легкостью звука, гибкий, подвижный, послушный всем нюансам”,* – так писала тбилисская пресса по поводу ее первого камерного концерта.

В исполнительском искусстве А. Б. Даниелян органично взаимодействовали итальянское бельканто, французская вокальная школа, традиции русской вокальной школы и черты, идущие от армянской народной музыки.

Влияние итальянской вокальной культуры на русскую вокальную школу ощущается на протяжении XVIII–XIX веков, то есть в период оформления основных характерных черт русской вокальной школы. На русских сценах блистали певцы, которыми славилась оперная Италия и Европа.

Итальянское бельканто – непрерывно льющееся прекрасное пение, имеющее беспредельное дыхание – вот непревзойденный донине процесс пения. Б. В. Асафьев определяет оперное бельканто как *“...превращение гласных и согласных, ассонансов и алитераций человеческой речи в мелодию – как метаморфозу управляемой дыханием интонации в эмоциональное длительное звучание, в волнующее нас своим душевным теплом пение, волнующее безоговорочно и глубоко человечно...”* (1).

На формирование исполнительского стиля русских певцов оказывало влияние также исполнение ими французского оперного репертуара. Еще в середине XVIII века французская труппа (также, как и итальянская), приглашенная в Россию, знакомит двор с произведениями французских композиторов. Артисты французской оперы пользовались характерной исполнительской манерой – декламационностью, умением рельефно преподнести слово, декламационность являлась отличительной особенностью французской школы пения. Р. Роллан характеризует вокальную школу Франции того времени как школу великолепной актерской игры и декламации. Понимание итальянского и французского языка делают оперу популярной в России. Таким образом за столетний период русское вокальное искусство прошло сложный и важный этап своего развития. Русские певцы, вос-

«Երաժշտական Հայաստան» ամսագրի խմբագրական խորհրդի երաշխավորությամբ՝ Ծովինար Հրայրի Մովսիսյանի՝ 1.10.2021 թ., ընդունվել է տպագրության՝ 5.10.5.2021 թ., ներկայացրել է հեղինակը՝ 5.9.2021 թ.

приняв технику и культуру в основном итальянской, а также французской школ, сумели остаться глубоко национальными. Русские певцы взяли у них и принцип оперного льющегося звучания голоса, технику и культуру, владение колоратурой и другими техническими приемами.

Таким образом большинство первых вокальных педагогов русских консерваторий, получив свое вокальное воспитание у итальянцев и французов, сумели приспособить свое мастерство к запросам русской оперы.

В течение всех лет обучения в консерватории самым дорогим для А. Б. Даниелян были занятия у Н. А. Ирецкой. А. Л. Доливо, характеризуя музыкальное развитие певцов в дореволюционных консерваториях, пишет, что *“только немногие педагоги, как, например, Мазетти в Москве и Ирецкая в Петербурге, занимались развитием музыкальности и артистичности у своих питомцев”* (2.).

Н. А. Ирецкая была основоположником петербурго-петроградской вокальной школы, ведущим педагогом вокального отделения Петербургской консерватории, одной из первых учащихся по классу Г. Ниссен-Саломан.

Вокальный класс Петербургской консерватории в 1860–е годы возглавила Г. Ниссен-Саломан – ученица величайшего педагога М. Гарсиа, представителя французской школы пения, получившего воспитание в Италии. Г. Ниссен-Саломан в своей методике сочетала высочайшие достижения европейской певческой культуры с задачами, ставившимися русской вокальной литературой и русским исполнительским стилем. Вся педагогическая многолетняя плодотворная деятельность Г. Ниссен-Саломан прошла в России, поэтому ее называют представителем русской вокально-педагогической мысли.

Н. А. Ирецкая была одной из лучших учениц и П. Виардо. По окончании консерватории на протяжении нескольких лет совершенствовалась в Париже у Полины Виардо-Гарсиа: дочь и ученица испанского певца – тенора и педагога М. Гарсиа. Занятия у П. Виардо оказали благотворное воздействие на формирование педагогических принципов Н. А. Ирецкой. Благодаря постоянному общению с П. Виардо ей довелось близко знать Гуно, Бизе, Делиба, Мопассана, Сен – Санса, Тургенева, и эта атмосфера насыщенной музыкально – художественной жизни Парижа оказала благотворное воздействие на формирование педагогических принципов Н. А. Ирецкой, по праву признанных выдающимися.

*“Н. А. Ирецкая занималась не только выработкой вокальной техники учениц: как большой художник, она уделяла много внимания и прохождению репертуара, и развитию художественной интерпретации ”* (3.). Особое внимание уделяла развитию ровности, подвижности, гибкости голоса, интонационной выразительности, разработке художественной интерпретации.

Таким образом, школа Н. А. Ирецей, черпая из вышеречисленных источников, оставила большой

след в истории вокальной педагогики в России.

На редкость плодотворными оказались занятия А. Б. Даниелян по оперному классу под руководством выдающегося русского певца, гордости русского оперного искусства И. В. Ершова. Среди замечательных русских певцов начала XX века следует назвать выдающегося исполнителя героико-драматических теноровых партий И. В. Ершова. Он принадлежал к числу тех русских талантов, в творчестве которых всегда чувствуется необыкновенная широта, размах, сила и страстность. Его артистическое мастерство было столь же велико, как и вокальное. Таким образом, творческий, исполнительский и педагогический облик А. Даниелян сформировался под воздействием выдающейся представительницы петербургской вокальной школы Н. А. Ирецкой, которая в свою очередь являлась представителем итальянской школы бельканто, а также воспитанницей великой Полины Виардо. Немаловажную роль в сценической биографии певицы оказали занятия со знаменитым оперным певцом И. В. Ершовым.

А. Б. Даниелян родилась в 1893 году в городе Тифлисе (Тбилиси) в семье Б. Тер-Даниеляна. Этот древний, богатый художественными традициями город являлся неисчерпаемым источником музыкальных впечатлений. В Тифлисе, где прошли детство и юность будущей певицы, сформировался музыкальный мир А. Б. Даниелян, созрело непреодолимое желание посвятить себя музыке. *“Я помню в детстве целыми днями распевала народные песни, любила их моя мать и сама пела задушевным голосом”*\*.

Вторая женская гимназия дала ей серьезное общее образование, и благодаря урокам пения (педагог и композитор А. Манукян) в мир А. Даниелян впервые вошли обработки армянских песен, профессиональная армянская музыка. 18 декабря 1911 года стало судьбоносным для Даниелян: Кавказское Армянское Благотворительное общество в програму своего вечера включило выступление 18-летней девочки, и она спела, *«Հով արեք, արեք ջան»*, Комитаса. *“Вечер, на котором решила моя судьба – поездка в Ленинград”* – вспоминала она много лет спустя.

Учеба в Петроградской консерватории была на редкость плодотворна, дала не только фундаментальные знания, но и служила обогащению камерного и оперного репертуара Даниелян. Свое образование в Петроградской консерватории А. Б. Даниелян завершила в 1920 году. По воспоминаниям В. В. Барсовой, А. К. Глазунов, вручая диплом, сказал: *“За пятьдесят лет существования консерватории вы первая, кто вышел из этих стен, взяв все, что консерватория могла дать”*.

Широк и многообразен был исполнительский диапазон певицы. Она выступала как в камерных концертах, так и в оперной труппе Комической оперы К. Марджанова.

Разнонаправленность деятельности певицы в эти годы, а именно работа над камерным репертуаром и

\* Личный архив А. Б. Даниелян.

партиями комических опер, помогла обрести необходимую гибкость – высокая культура камерного исполнительства определяла отточенность, мастерство фразировки, что было свойственно оперным партиям итальянских композиторов, работа над оперными партиями внесла в исполнение камерных произведений артистизм и образную наполненность...

Важнейшей областью постоянных творческих исканий и замечательных завоеваний А. Б. Даниелян было камерное пение. 1920-е годы – прекрасные годы признания большого дарования певицы ценителями искусства Тбилиси. *“Камерная певица в полном смысле этого слова. Тбилиси не много знал таких певиц”*, – писал С. Чемоданов. Искусство камерного пения наиболее сложное искусство, требующее богатого красками голоса и серьезного образования, исключительного дара понимания стиля и эпохи. Высокая культура камерного пения А. Б. Даниелян была развита и обогащена в годы самостоятельной, неустанной работы над камерными произведениями различных эпох и стилей...

Специфика камерного пения, исполнение романсов, песен различных жанров и форм требуют максимальной концентрации внимания. А. Б. Даниелян была на редкость обязательной в отношении авторского текста. *“Хорошо произнесенное слово – три четверти хорошего пения”* А. Б. Даниелян. Благородство, высокая простота, плавность и мягкость фразировки, эмоциональная наполненность, безупречное владение бельканто отличали исполнение произведений Баха, Шуберта, Листа. Особо пристрастным было отношение А. Б. Даниелян к камерным произведениям русских композиторов. Она отдавала предпочтение вокальным произведениям Чайковского, Римского – Корсакова, Рахманинова, Рубинштейна, Танеева, Глазунова. В отличие от западноевропейской, русской камерной музыки, в исполнении камерных произведений армянских композиторов, певица руководствовалась исполнительскими традициями армянской музыки. Внутренняя строгость, сосредоточенность, драматизм, сдержанность в выражении глубинных чувств – эти особенности, характерные для народного армянского искусства, выявляла А. Б. Даниелян в своем исполнении. Камерное искусство А. Б. Даниелян было для любителей музыки источником подлинного эстетического наслаждения...

Примечательную страницу петроградского периода составили выступления А. Б. Даниелян на оперной сцене. На сцене петроградского театра Комической оперы К. Марджанова с особым энтузиазмом шла тщательная работа молодой певицы, всем существом своим стремящейся к новым творческим исканиям. Насыщенная творческая работа, многообразные художественные впечатления, работа над оперными партиями, возможность приобщения к богатой музыкальной жизни Петрограда доставили А. Б. Даниелян несказанное наслаждение....

*“Оперный певец имеет дело не с одним, а сразу с тремя искусствами, то есть вокальным, музыкальным и сценическим... Все три искусства должны быть сли-*

*ты между собой и направлены к одной цели”* (4). Пластичность движений, благородство поведения, органичное слияние музыки и сценического рисунка, логика трактовки образа и внутренний артистизм служили образной неповторимости ее исполнения. Оперные партии, исполняемые певицей, отличала безупречная инструментальная точность интонации.

1920-е годы – это прекрасные годы признания большого дарования певицы ценителями искусства Тбилиси. Это были годы испытания собственных возможностей, время осознания ответственности профессионала в искусстве. На сцене постоянно переполненного Тбилисского оперного театра блистали Ф. Шаляпин, А. Давидов, Н. Папаян и многие другие замечательные исполнители. Здесь значительно обогатился репертуар А. Б. Даниелян, здесь пришли к ней необходимые для оперного исполнительства опыт, мастерство, чувство сцены. Войдя в сильную по своему творческому составу труппу Тбилисского оперного театра, А. Б. Даниелян вскоре стала одним из ее украшений.

На сцене Тбилисского оперного театра А. Б. Даниелян создавала такие образы, как Маргарита (*“Фауст”* Гуно); Тамара (*“Демон”* Рубинштейна); Джильда (*“Риголетто”* Верди); Королева Маргарита (*“Гугеноты”* Мейербера); Лейла (*“Искатели жемчуга”* Бизе); Виолетта (*“Травиата”* Верди).

Для А. Б. Даниелян бесконечная преданность искусству являлась смыслом существования, она была певицей мыслящей, с высоко развитым интеллектом, несомненно владела секретом многомерности исполнительской манеры. Богатая эмоциональная палитра, предельная собранность, умение увлечь слушателя, завоевав его внимание, было характерно для каждого спектакля с ее участием.

Искусству певицы был подвластен и глубочайший драматизм, и тонкий лиризм, и трагедийность, и властное величие. Требовательность к себе, к художественности исполнения, к трактовке образа, его жизненной правде – это определяло ее позицию художника, ее отношение к музыке. Так были рождены целостные образы в их логическом соотношении с ведущими партиями опер, в которых она пела.

В 1923 году впервые приехав в Ереван с концертами, она была покорена поистине восторженным приемом, интересом к музыке. Для любителей музыки были настоящим открытием произведения западноевропейской и русской классики. Встретив в Армении истинных ценителей искусства, А. Б. Даниелян ощутила духовную ответственность в деле строительства новой Армении. Время блистательного расцвета искусства А. Б. Даниелян совпало со временем возрождения духовной жизни армянского народа. Люди с особой силой испытывали стремление к прекрасному. Советская Армения нуждалась в специалистах, деятелях культуры. А. Б. Даниелян и ее современники – А. Исаакян, Е. Чаренц, А. Таманян, М. Сарьян, Р. Меликян, А. Хачатурян и др. преодолевая трудности, вдохновенно творили... И никто не мог себе представить, как велик будет вклад, какую высокую миссию

предстоит выполнить им в этом деле.

Если в Тбилисском оперном театре А. Б. Даниелян с честью продолжила линию своих предшественников, то в Ереванском оперном театре именно ей принадлежала роль в создании действенных оперных традиций, во многом определивших пути его становления, развития и расцвета.

Первой партией, с которой А.Б. Даниелян выступила на сцене Ереванского оперного театра, была партия Розины в "Севильском цирюльнике", затем Джильда в "Риголетто", Маргарита в "Фаусте"... Спектакли с участием певицы становились художественным событием в жизни города.

Исключительным явлением была постановка оперы А.Тиграняна "Ануш". Шедшая с 1912 года, она была популярна уже до постановки в оперном театре. В 1935 году опера "Ануш" была исполнена на профессиональной сцене. Ануш – было суждено стать первой партией певицы в армянских операх. Глубина и содержательность мастерства А. Б. Даниелян раскрылась с неотразимой силой. Богатая интуиция певицы позволила создать образ редкой правдивости и внутренней цельности. Певица нашла поразительную точность интонационного звучания, создав впервые на профессиональной сцене ценнейшие исполнительские традиции. Ее исполнительское мастерство и огромный опыт сочетались со сценической целостностью и безукоризненным владением всеми ресурсами вокального звукоизвлечения. Пение А. Б. Даниелян было отмечено богатейшими нюансами... и в конечном итоге в образе Ануш певица безошибочно выразила душевную красоту армянской девушки, ее мастерство музыканта позволило использовать многообразие мельчайших нюансов мелодического языка оперы. Естественность и непринужденность, характерные для певческой манеры певицы, помогли донести до слушателя всю прелесть и очарование широко льющейся песенности. Участие А. Б. Даниелян в создании спектакля оказалось пророческим; своим исполнением певица определила для молодого театра высокий уровень интерпретирования произведения национального оперного репертуара... "Меня особенно волнует до слез опера "Ануш". Она первая национальная опера в моем репертуаре. Опера "Ануш" представила меня перед Москвой, перед партией и правительством в незабываемые исторические дни Декады армянского искусства в Москве в 1939 году", – А. Даниелян.

28 мая 1936 года в Ереване был погребен Комитас. В эти ужасные дни А.Б. Даниелян пела песни Комитаса... Начав свою комитасиану на заре творческого пути, когда композитор был в расцвете многосторонней творческой деятельности, она завершила свой путь в 1949 году, опять исполнив песни Комитаса. "Каждый раз, когда я приступаю к работе над песнями Комитаса, чувствую особую внутреннюю собранность. Так чувствую я себя и тогда, когда работаю над произведениями Баха, Моцарта, Глюка... Каким звуком ясным, чистым надо исполнять эти песни, чтоб не нарушить кристальную чистоту мелодики? Моей за-

*дачей всегда было возможно точно исполнять то, что написано Комитасом, не пропустить ни одного штриха, им самим зафиксированного. Песни его непревзойденные, любимы всем армянским народом, ценимы всем музыкальным миром"* (5. С. 42).

В годы Великой Отечественной войны, при огромном энтузиазме людей в оперном театре была возможность осуществить девять новых постановок всего за восемнадцать месяцев. Эти годы в творческой биографии А. Б. Даниелян явились вершинами, в эти годы с особой силой раскрылся ее потенциал музыканта-художника. Ставили "Царскую невесту", "Пиковую даму", "Риголетто", "Отелло". В эти годы каждый спектакль оперного театра с участием А. Б. Даниелян становился значительным художественным событием для любителей музыки. Эта замечательная пора в жизни великой певицы совпала со временем идейно – художественного роста театра. Велико было искусство перевоплощения и артистизма певицы, заставляющее зрителя глубоко сопереживать героиням. – А. Б. Даниелян покоряла умиротворением и гармонией глубоких чувств, пластичностью, полной внутренней музыкальностью.

Формы служения певицы своему народу были многообразны. Это были и публикации в прессе, и педагогика, и общественная работа – с большой энергией и увлеченно она выполняла свои депутатские обязанности.

С 1933 года Даниелян была назначена педагогом вокального мастерства оперного театра, оказала неоценимую помощь в годы становления творческого коллектива. Владея прекрасной школой, она занималась воспитанием молодых исполнителей. "Создание сценического образа, правильная музыкальная интерпретация партий требует не только хорошей профессиональной школы, но и высокой общей культуры" (5. С. 43). В годы отечественной войны работа по воспитанию молодых певиц и певцов приняла более серьезную форму в Ереванской консерватории, с которой А. Даниелян связала свою судьбу и в будущем, бережно храня традиции школы Н. Ирецкой. "Консерватория обязана выпускать совершенно готовых певцов с прекрасно разученным в специальном оперном классах необходимым репертуаром. Студент должен проходить в классе и камерный, и оперный репертуар. В классе Ирецкой в Петербургской консерватории, где я училась, вся работа велась самим профессором" (5. С. 14). Педагогические принципы А. Б. Даниелян в ЕГК продолжили Т. К. Шахназарян, М. А. Арутюнян. А. М. Сараджева и др. Руководя кафедрой сольного пения, она добивалась расширения репертуара молодых певцов. "Одним из важнейших вопросов является учебный репертуар. Необходимо начинать с итальянской классики, способствующей развитию благородной, свободной, красивой манеры пения" (5. С. 13). Возглавив спец. муз.школу им. Чайковского, она считала, что "охрана голоса – очень важная задача. Существует целая система воспитания, оберегающая детей от того, чтобы в том возрасте, когда они так любят подражать знаменитым певцам, они

не сорвали себе голос” (5. С. 12). Горячий энтузиазм, целеустремленность, неиссякаемая творческая энергия, присущие А. Б. Даниелян, ее непревзойденная высокоэстетическая манера пения и по сей день передаются из поколения в поколение, продолжая лучшие традиции национальной вокальной школы, в истоках которой неизгладимый след оставила великая певица Айкануш Даниелян.

Айкануш Даниелян одна из самых талантливых певиц нашего времени, созданные ею замечательные традиции вокального исполнительства укоренились в фундаменте развития вокального искусства. Горячий энтузиазм, целеустремленность, неиссякаемая творческая энергия характеризуют исполнительскую деятельность Даниелян, являясь могучим источником высокоэстетического наслаждения. Ее непревзойденная высокохудожественная вокальная культура, ценные педагогические принципы и творческие устрем-

ления стали основополагающими для создания и становления национальной академической вокальной школы.

**ПРИМЕЧАНИЯ**

1. Асафьев Б., Об опере., Л.:Музыка., 1985. Asaf'ev B., Ob opere ., L.: Muzyka., 1985.
2. Доливо А., Подготовка концертных и камерных певцов (материалы всесоюзной конференции по вокальному образованию), М.: Музгиз., 1941. Dolivo A., Podgotovka kontzertnykh i kamernykh pevtzov (materialy vsesoyuznoj konferentzii po vokal'nomu obrozovaniyu), М.: Muzgiz., 1941.
3. Ежедневник ПГАТ., 1922 г., N 3, 4. Yezhednevnik PGAT., 1922 g., N 3, 4.
4. Станиславский К. С., Моя жизнь в искусстве., М.: Academia., 1936. Stanislavskij K. S., Moya zhizn' v iskusstve., М.: Academia., 1936.
5. Арутюнян М. Г., Айкануш Даниелян., Ер., 1988. Arutyunyan M. G., Ajkanush Danielyan., Yer., 1988.

**Քանախ-քաներ.** Հ. Բ. Դանիելյան, Ն. Ա. Իրեցկայա, բելկանտո, կատարողական վարպետություն, հնչյունարտարքուն, երգչական տեխնիկա, կամերային երգեցողություն, օպերային ավանդույթներ:

**Ключевые слова:** А. Б. Даниелян, Н. А. Ирецкая, бельканто, исполнительское мастерство, звукоизвлечение, вокальная техника, камерное пение, оперные традиции.

**Keywords:** H. B. Danielyan, N. A. Iretskaya, Bel canto, performance skills, sound production, voice technic, chamber singing, opera traditions.

**Տեղեկություններ հեղինակի մասին.** ԱՐՄԵՆՈՒՀԻ ՄԵՐՅՈՒԺԱՅԻ ԲԱԶԻՆՅԱՆ (ծ. 21.6.1972 թ. ք. Երևան): Ավարտել է՝ 1993-ին Երևանի Ռ. Մելիքյանի անվ. երաժշտական ուսումնարանի դաշնամուրային բաժինը, 1999-ին Երևանի Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիան՝ որպես օպերային, համերգային երգչուհի, 1999-2001 թթ. սովորել է ասպիրանտուրայում՝ մեներգեցողություն մասնագիտացմամբ: 1999-2001 թթ. աշխատել էմ Երևանի Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիայի կոնցերտմայստերական պատրաստման ամբիոնում՝ որպես իլյուստրատոր: Դասավանդել է՝ 2002-2003 թթ. Քանաքեռականի արվեստի դպրոցում, երգեցողության ուսուցչուհի, 2003-ին ԵՊԿ մեներգեցողության 2-րդ ամբիոնում, ասիստենտ, 2005-ից՝ դասախոս: Երևանի պետական կոնսերվատորիայի գիտական խորհրդի 29.06.2016-ից դոցենտ, 2017-ից համատեղության կարգով նաև Երևանի Պ. Չայկովսկու անվ. միջնակարգ մասնագիտական դպրոցում:

**Сведения об авторе:** АРМЕНИИ СЕРЕЖАЕВНА БАЗИНЯН (род. 21 июня 1972 года, Ереван). Окончила: фортепианное отделение Ереванского музыкального училища им. Р.Меликяна (1993); Ереванскую государственную консерваторию им. Комитаса по специальности оперная и концертная певица (1999); аспирантуру ЕГК им. Комитаса по специальности «сольное пение» (2001). Работала: иллюстратором на кафедре концертмейстерской подготовки ЕГК им. Комитаса (1999 – 2001); учителем по вокалу в художественной школе Канакераван (2002-2003); ассистентом на кафедре №2 сольного пения ЕГК им. Комитаса (с 2003); преподавателем на той же кафедре (с 2005); по совместительству в Ереванской специальной музыкальной школе им. П. И. Чайковского (с 2017). Доцент ЕГК (с 2016).

**Information about the author:** ARMENUHI SERJOZHA BAZINYAN (b. 1972, Yerevan). In 1993 graduated from Piano department at Yerevan Romanos Melikyan Music College. In 1999 graduated from Department of Opera and Stage Singing at the Yerevan State Komitas Conservatory. In 1999-2001 she took postgraduate courses in solo singing. In 1999-2001 she worked as an illustrator at the Department of Accompaniment at the YSC. In 2002-2003 was a voice teacher at Kanakeravan School of Arts. Since 2003 she worked as an assistant at the Department of Solo singing at the YSC, and since 2005 as a pedagogue at the same department. Since 2016 she has been an associate professor at YSC. Since 2017 she is a part-time teacher at the Tchaikovsky Specialized Music School in Yerevan.

**Ամփոփում**

Երգչուհի, ԵՊԿ դոցենտ **Արմենուհի Սերյոժայի Բազինյան.** - «Չայկովսկան մասնագիտական երգչական արվեստի ակունքները. Հայկանուշ Դանիելյան»:

Մույն հոդվածը նվիրված է հայկական երգչական դպրոցի հիմնադրողներից՝ Հայկանուշ Դանիելյանի գործունեությանը: Որպես ԵՊԿ ամբիոնի ավանդույթները զարգացնողի և ստեղծողի ներդրումը հայ արվեստում և առավելապես մշակութային կյանքում: Վառ արվեստագետի կերպարը բնութագրվում է և որպես հանրապետության՝ միաժամանակ Խորհրդային միության, ակադավոր օպերային երգչուհի և զուգահեռաբար ԵՊԿ-ում դասավանդող պրոֆեսոր:

**Summary**

Singer, Docent at YSC Armenuhi Serjozha Bazinyan. - “The Beginnings of Armenian Professional Vocal Art. Haikanush Danielyan”.

The article presents the work of Haikanush Danielyan, one of the founders of the Armenian school of singing, who created the traditions of the Armenian vocal art. H. Danielyan is introduced as a bright individual who made a significant contribution to the development of both republican and Soviet opera and chamber vocal schools. Along with performing, Danielyan was involved in teaching as a professor at Yerevan Komitas State Conservatory.

ՋԱՎԷՆ ԹՈՐԳՈՄԻ  
ԿՆԵԱԶԵԱՆ

Երաժշտագետ, Բունոս-Այրես, Արգենտինա  
E-mail: zavenkniasian@yahoo.com.ar

ՀԱՅԿԱԿԱՆ ԱԻԱՆԴԱԿԱՆ ԿՐՕՆԱ-ԾԻՍԱԿԱՆ  
ԿՈՉՆԱԿՆԵՐԸ

ԳՐԱԿՐԱՆՆԵՐԻ ԿՐԻՍՏՈՍՈՒԹՅԱՆ ԵՐԱԺՇՏԱԳԻՄՈՒՄԻ

Հայկական երաժշտական գործիքադարանի հետաքրքրական օրինակներէն են կրօնա-ծիսական ինքնահունչները\*, որոնցմէ կոչնակները ընդգրկուած են Հայաստանեայց Առաքելական Եկեղեցոյ զանազան արարողութիւններու մէջ, անբաժանելի մաս կազմելով եկեղեցական բազմադարեայ ծիսակարգին: Կոչնակները երկար փայտէ տախտակներ կամ երկաթէ ձողեր են, անցեալին շատ տարածուած՝ ներկայիս հազուադէպ, որ ձեռքի թակիչներով հարուածելով հաւատացեալները եկեղեցի կը կանչեն:



Երուսաղէմի Չայոց Պատրիարքարանի փայտէ կոչնակը, հնչեցման ժամանակ

Անցեալին կոչնակներուն մասին զբաղողները երեք անձնատրոփիւններ եղած են. նախ Մաղաքիա Արք. Օրմանեան (1.), որ իր «Ծիսական Բառարան»-ին մէջ կ'ակնարկէ նիւթին, երկրորդը՝ Հայր Վարդան Հացունին, որ իր «Պատմութիւն Հայոց Աղօթամատոյցին» ուսումնասիրութեան մէջ կը քննէ պատմական գրատր աղբիւրներ, ուր յիշատակուած են այս գործիքները (2. էջ 14-15) եւ երրորդը՝ Արամ Քոչարեան\*\* (3. էջ 62-64), որ իր «Հարկանային եւ շնչական երաժշտական գործիքները Հայաստանում» գործին մէջ հետաքրքրական տեղեկութիւններ կու տայ:

\* ինքնահունչ = idiophone:  
\*\* Այս աշխատութիւնը հեղինակի թեկնածուական ատենախօսութիւնն էր 1963 թուականին:

Պատրիարքութեան Սրբոց Յակոբեանց Վանքի Մայր Տաճարի Կոչնակները, իրենց բոլոր տարբերակներով, դարեր շարունակ գոյատեւեցին, բայց յանկարծակի 1915-1930 թուականներու ընթացքին անհետացան հայկական կեանքէն: Կոչնակներու անյայտացման հիմնական պատճառն եղաւ հայոց ցեղասպանութիւնը, հայկական բնօրրանի ատերմով: Անշուշտ պէտք է ակնարկել, որ հայաշխարհը Առաջին Համաշխարհային Պատերազմին զինուորական գործողութիւններու թատերաբեմ ալ դարձաւ, վրայ եկաւ Ռուսաստանի յեղափոխութիւնը, ապա խորհրդայնացումը իր կրօնահալածութեանը: «Անյայտացում» բառի գործածութիւնը փոխաբերական իմաստով չէ ըսուած, այլ իր բուն առմամբ: Կոչնակները փայտէ շինուած ըլլալուն, հրոյ ճարակ դարձան եկեղեցիներու կողոպտման ժամանակ, գործածուելով նոյնիսկ իբրեւ վառելանիւթ: Պատահական չէ, որ պահպանուած օրինակները կը գտնուին հայաշխարհէ հեռու տեղեր:

Աստիճանաբար յառաջացաւ Սփիւռքը, ուր վերականգնուեցաւ հայկական էութիւնը, աշխուժացաւ կրօնական կեանքը, կառուցուեցան հարիւրաւոր եկեղեցիներ: Բայց այս եկեղեցիները չունեցան կոչնակներ, այլ միայն զանգակներ, որովհետեւ այս վերջինները տարածուած էին ամենուրեք եւ դիւրաւ կարելի էր ձեռք բերել հիւրընկալող երկիրներուն մէջ: Այս հոլովոյթի արդիւնքն է, որ այսօր, պարզ հայտրդի մը, ըլլալ սփիւռքահայ թէ՛ հայաստանցի պատկերացում անգամ չունենայ թէ՛ ինչ է կոչնակ մը:

1) Ընդհանուր նկարագրութիւն  
Կոչնակները՝ ժամահար գործիքներու կարգին կը պատկանին: Ունին շատ պարզ կառուցուածք. ընդհանրապէս երկարատուն փայտէ տաշուած տախտակ մը, կամ երկաթէ ձող մը երկու ծայրերէն կախուած, որ ձայն հանելու համար կը բախեն՝ նոյն նիւթէն պատրաստուած երկու թակերով: Կախուած երկաթը կամ փայտը մօտաւորապէս 0,50 մ. մինչեւ 2,50 մ. երկայնութիւն կրնայ ունենալ եւ պէտք է, որ ամուր ու ձայնեղ ըլլայ:

Դժբախտաբար, պատմական իրողութիւններու պատճառաւ, չեն պահպանուած մեծ թիւով կոչնակներ: Մենք կարողացանք ցուցակագրել միայն վեց օրինակ, որոնցմէ չորս հատը Երուսաղէմ կը գտնուին, մին Նոր Զողայ իսկ վեցերորդը Նիւ Եորք: Կոչնակներու կարե-

«Երաժշտական Հայաստան» ամսագրի խմբագրական խորհրդի երաշխավորությամբ՝ Գոհար Կառլենի Շագոյանի՝ 20.11.2021 թ., ընդունվել է տպագրության՝ 8.11.2021 թ., ներկայացրել է հեղինակը՝ 10.10.2021 թ.


# Մշակութային կապեր Սփյուռք (Արգենտինա)

լի է հանդիպի նաև Սուրիոյ հիւսիս արևմտեան շրջաններու քանի մը հայկական գիւղերուն մէջ, որոնց վիճակը անորոշ է վերջին տարիներու ռազմական գործողութիւններէ վերջ\*:


Այս ուսումնասիրութեան համար, չսահմանափակուեցանք գոյութիւն ունեցող օրինակներով, այլ օգտուեցանք նաև տարեց, մեծաւ մասամբ ցեղասպանութենէն վերապրող արևմտահայերու հաղորդած բանատր տեղեկութիւններէն, որոնք մանրամասն կերպով նկարագրեցին գործիքը: Ընդհանրապէս տեղեկութիւններուն, կարողացանք նախ վերականգնել կոչնակներու շատ մը գաւառական/տեղական տարբերակներու բնական տեսքն ու կառուցուածքը, ինչպէս նաև իրենց յատուկ օգտագործման առանձնայատկութիւնները\*\*:

## 1) Երուսաղէմի կոչնակները

Երուսաղէմի չորս օրինակները տեղադրուած են՝ երկու հատը Հայոց Պատրիարքութեան Սրբոց Յակոբեանց Վանքի Մայր Տաճարի մուտքի քովնտի պատերուն վրայ, իսկ միւս երկուքը, Սուրբ Յարութեան եկեղեցոյ մէջ: Երկու տեղերուն գոյգ կոչնակներէն մին փայտէ է, իսկ միւսը մետաղէ\*\*\*:



Պատրիարքութեան Սրբոց Յակոբեանց Վանքի Մայր Տաճարի փայտէ կոչնակը



Պատրիարքութեան Սրբոց Յակոբեանց Վանքի Մայր Տաճարի երկաթէ կոչնակը

Բարեբախտաբար, մինչ կոչնակներէն հետք մը անգամ չէ մնացած այլ տեղեր, այս չորս օրինակները գոր-


ծածական են ըստ հնաւանդ կարգ ու կանոնի: Ընդհանրապէս Երուսաղէմի Միաբանութեան աւանդապահութեան, այսօր կարելի է շատ մանրամասնութիւններ քաղել կոչնակներուն մասին, թէ գործածութեան պարագաներու, թէ կատարողական եւ թէ կառուցուածքային առանձնայատկութիւններուն մասին. եւ զարմանքով տեսնել, թէ շատ բաներ կը զուգահիւսին մեզմէ հազար տարի առաջ գրուած Գրիգոր Նարեկացիի վկայութիւններուն հետ:

Այս կոչնակներէն առաջինը ուղղանկիւնածն էրկարաւուն փայտէ տախտակ մըն է, որուն երկայնքը 2,16 մ է եւ լայնքը 23 սմ, վերի եւ վարի զուգահեռ կողմերու երկայնքը 1,70 մ է, որոնք կ'աւարտին չորս ուղիղանկիւններ (90°) կազմելով, հազիւ 2,5 սմ ունեցող ուղղահայեաց հատուածներու հետ: Գործիքը կ'աւարտի կիսաշրջանակաձև վերջատրութեամբ, որ ունի 18 սմ տրամագիծ: Վերի եզերքին մօտ տեղադրուած են երեք ծակեր կոչնակը կախելու համար: Տախտակին հաստութիւնը 5 սմ է:

Երկրորդը, երկաթէ շինուած եւ թեթեւօրէն դէպի ետեւ կորացած օրինակն է: Գործիքին երկարութիւնը 1,60 մ է եւ լայնքը 11 սմ, վերի եզերքէն մօտ 1 սմ հեռաւորութեան վրայ տեղադրուած են կոչնակը կախելու երկու ծայրերու ծակերը: Մէջտեղին կը գտնուի գործիքին գրեթէ կեդրոնի եզրագիծէն դէպի վեր բարձրացող 4 սմ ելուստի ծայրը: Գործիքի երեսին վրայ, գրեթէ կեդրոնը, կը նշմարուի խաչի քանդակ մը եւ արձանագրութիւն մը ուր մաս մը կը կարդացուի՝ «ՎԵՐՍՏԻՆ ՇԻՆԵՅԻ Ի ՅԻՇԱՏԱԿ ՋԱՐՊ ..... ԻՅԻՆ»: Մաս մըն անընթերցելի է որովհետեւ մետաղը հարուածներէն շատ տուժած է:

Երրորդը՝ Սուրբ Յարութեան Տաճարի փայտէ կոչնակն է, որ գրեթէ չի տարբերի նախորդ փայտէ օրինակէն\*:

Իսկ չորրորդը՝ Սուրբ Յարութեան Տաճարի մետաղէ օրինակն է, որ իր չափերով եւ ընդհանուր ձեւով նման է փայտէ կոչնակին, բայց շինուած է երկաթէ\*\*:



Սուրբ Յարութեան Տաճարի փայտէ եւ երկաթէ կոչնակները

Բեթղեհէմի Սուրբ Ծննդեան եկեղեցոյ փայտէ եւ երկաթէ կոչնակները Երուսաղէմի Միաբանութեան անդամները իրենց առօրեայ խօսակցական հայերէնի մէջ հիմնէն ի վեր կը գործածեն տախտակ\*\*\* (4. էջ 22, 26) իբրեւ կոչնակի անուանում, այս անուան մէջ առկայ է

\* Եզակի օրինակ մըն ալ է Արժանթինի, Պուէնոս Այրես մայրաքաղաքի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Հայոց Մայր Տաճարի կոչնակը, որ զետեղուեցաւ այս աշխատութեան հեղինակի՝ Ջաւէն Կնեազեանի նախաձեռնութեամբ եւ Արժանթինահայոց Թեմի Առաջնորդ Գիսակ Արք. Մուրատեանի հովանաւորութեամբ: Կոչնակը Երուսաղէմի փայտէ մեծ կոչնակներուն նմանօրինակն է եւ օրինուեցաւ եւ գործածութեան յանձնուեցաւ 1999 թուականի, Կիրակի Օգոստոս 8-ին:

\*\* Նիւթերու հաւաքման դժուար գործին անգնահատելի մասնակցութիւն ունեցած է եղբայրս Ռուբէն Կնեազեան, նախկին ուսանող Կոմիտասի անուան Երաժշտանոցի, ծնած Արժանթին 1962-ին, ներկայիս հաստատուած Ֆրանսա:

\*\*\* Տեղւոյն վրայ (Երուսաղէմ) ստուգեց, լուսանկարեց եւ տեսագրութիւններ պատրաստեց Տէր Ղեւոնդ վրդ. Յովհաննիսեան:

\* Լուսանկարեց Գիսակ Արք. Մուրատեան, Առաջնորդ Արժանթինահայոց, Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց Միաբանութեան անդամ:

\*\* Տեղւոյն վրայ (Երուսաղէմ) լուսանկարեց Յակոբ Ճոնազեան, ծնած Երուսաղէմ, 2000-ին:

\*\*\*Բանաւոր տեղեկութիւն Գիսակ Արք. Մուրատեանի, Առաջնորդ Արժանթինահայոց, Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց Միաբանութեան անդամ:

# Մշակութային կապեր Սփյուռք (Արգենտինա)

«փայտե տախտակ» նշանակությունը եւ պարզ է, միայն կը գործածուի փայտե կոչնակներուն համար: Երուսաղէմի մէջ փայտե կոչնակներուն համար կը գործածուի նաեւ տախտակ-կոչնակ (4. էջ 100): Ի հակադրութիւն մետաղե կոչնակներուն երկաթ\* կ'անուանեն, իսկ տեղ-տեղ մետաղե-կոչնակ (4. էջ 100):

2) Նոր Ջուղայի կոչնակը

Պահպանուած հինգերորդ օրինակը կը գտնուի Նոր Ջուղայ:

Նոր Ջուղայի Չարսու թաղին մէջ, Սուրբ Յովհաննէս եկեղեցիին կից, 1623թ. կառուցուած է Սուրբ Կատարինեան Մենաստանը, որ եղած է կուսանաց վանք: Մենաստանի եկեղեցոյ արեւմտեան մուտքին առջեւ կայ պատշգամբ, ուր փայտե գերանէ մը կախուած է նոյնպէս փայտե շինուած կոչնակ մը (5. էջ 107-110): Այս օրինակը լաւ պահպանուած է, բայց այժմ անգործածական է, միայն երբեմն-երբեմն գայն կը հնչեցնեն նշանաւոր հիւրեր, հայ ուխտաւորներ կամ գրօսաշրջիկներ:

Այս կոչնակը ուղղանկիւնածնու երկայն փայտե տախտակ մըն է, որուն սուր անկիւնները հեռացուած են ապահովութեան համար. գործիքը փաստօրէն երկարատուն ութանկիւնի վերածելով: Իր երկու ծայրամասերը, չորսական կլոր անցքերու խումբեր գետեղուած են, այնպէս որ երկու խաչեր կը ձեւացնեն: Վերի եզերքի ամենամօտիկ երկու ծակերէն կ'անցնին գործիքը կախուած պահող գոյգ շղթաները:



**Նոր Ջուղայ - Սուրբ Կատարինեան Մենաստան: Գաղութագիրու հին լուսանկարներ կոչնակահարութեան պահուն երբ դեռ կը գործէր կուսանաց վանքը:**

Լուսանկարներու հեղինակ՝ Էռնեստ Հոլցեր - Ernst Hoeltzer, 1892-1896 ժամանակամիջոցին:

Սուրբ Կատարինէ կուսանաց վանքը «... Աշխարհական կանանցից ունեն մէկ դոնապան ու մէկ խոհարար, եւ բացի այդ երկուսից ուրիշ ծառայ կամ աղախին չունեն: Փոքր լուսարարը գիշերն արթնանալով՝ կոչնակ է զարնում, որ յայտնի եւ հոշակաւոր է ձայնով եւ երկարածամ խփելով: Միաբանութիւնը կոչնակի ձայնի հետ հաւաքում է եկեղեցու մէջ եւ գոյգ-գոյգ կանգնելով Սեղանի առջեւ՝ սաղմոսերգութիւն են կատարում ...»

Կոչնակը «տախտակ» կ'անուանէին նաեւ Սալմաստի Դրիշկ գիւղի բնակիչները:

Տեղեկատու N 26, Յովհաննէս Ղուկասեան, ծնած է 1919-ին Թավրիզ (Հիւսիսային Իրան), բայց մեծցած է Սալմաստի Դրիշկ գիւղը: Հաստատուած Հայաստան:

\* Բանաւոր տեղեկութիւն Գիսակ Արք. Մուրատեանի, Առաջնորդ Արժանթինասայոց, Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց Միաբանութեան անդամ:

(6. էջ 566):

Հին ժամանակ Նոր Ջուղայի բոլոր եկեղեցիները ունեցած են կոչնակներ որոնք աստիճանաբար փոխարինուեցան զանգերով\*:



**Նոր Ջուղայի կոչնակը այժմ անգործածական է, միայն երբեմն գայն կը հնչեցնեն նշանաւոր հիւրեր, հայ ուխտաւորներ կամ գրօսաշրջիկներ:**



**Նոր Ջուղայի կոչնակի ընդհանուր պատկերը, փայտե գերանէն կախուած (ներկայ վիճակ):**

«Սուրբ Աստածածին եկեղեցին «մինչեւ 1848 թականը կոչնակ ուներ, իսկ 1848 թին Տէր Բարսեղ Գալստանեանը, երբ վերադարձաւ Հնդկաստանից, զանգակներ բերեց եւ այդ ժամանակից զանգակները կախեց փոքրիկ զանգակատանը, որ եկեղեցու առաստաղի վրայ է կառուցած:» (6. էջ 548):

Սուրբ Յովհաննէս Մկրտիչ (Սուրբ Յովհաննու Կարապետ) եկեղեցին «1841 թին, պարոն Պօղոս Անդրէասեանի ծախսով եւ օժանդակութեամբ կառուցեց զանգակատունը, որ նոյն եկեղեցու ժողովրդից եւ Ջաւայում հոշակաւոր վաճառական էր. այդ ժամանակից կոչնակի փոխարէն զանգն եղաւ ժողովրդի հրաւիրողը:» (6. էջ 554):

Այս աշխատութեան համար շատ կարեւոր են 1892-1896-ի ժամանակամիջոցին՝ գերմանացի Էռնեստ Հոլցերի (Ernst Hoeltzer) լուսանկարները որորնք իրականացուած են երբ տակաւին կը գործէր Սուրբ Կատարինեան Մենաստանը: Լուսանկարիչը երեք նկարներ աւանդած է միաբանութեան կոչնակահարութեան պահեքուն:

2021-ին Նոր Ջուղայի մէջ բացուեցաւ հայկական երաժշտութեան թանգարան՝ «Նոր Ջուղայի հայերի երաժշտական գանձարան»ը: Թանգարանի նպատակն է ծանօթացնել ընդհանրապէս հայկական երաժշտութիւնը, որուն շարքին՝ հայկական խազագրութիւնը, եկե-

\* Շատ շնորհակալ ենք Ս. Ամենափրկչեան Վանքի, Արխիատան պատասխանատու՝ պր. Թովմա Գալստանեանին, որ սիրայօժար տրամադրեց թէ լուսանկարներ եւ թէ արժեքաւոր տեղեկութիւններ:

# Մշակութային կապեր Սփյուռք (Արգենտինա)

ղեցական երաժշտությունը, շարականները, Նոր Ջուդայի երաժշտական գործիքներու պատմությունը, հայ երաժիշտները, աշուղները, հոգևոր երաժշտությունն զարգացումը, տեղական աշուղական դպրոցը, լուսագոյն երաժշտական գործիքներ արտադրողները եւ վերջապէս Նոր Ջուդայի ճարտարապետութեան ու երաժշտութեան միջեւ գոյություն ունեցող կապերը:




Նոր Ջուդայի հայկական երաժշտութեան թանգարանի կոչնակը

Երաժշտութեան թանգարանի եզակի ցուցանմոյշ մըն է Սուրբ Կատարինեան Մենաստանի կոչնակի կրկնօրինակը, որ քիչ մը աւելի փոքր չափերով պատրաստուած է:

### 3) Մուսալեռ/Քեսապ շրջանի կոչնակները

Քեսապի Հայ Կաթողիկէ Պատրիարքական Թեմի «Ս. Միքայէլ» վանքին ժողովրդապետ Գերապատի՝ հայր Նարեկ վրդ. Լուիսեան կը հաղորդէ. «Գտնուեցաւ Քեսապի Հայ Կաթողիկէ «Ս. Միքայէլ» եկեղեցոյ կոչնակը: Ծաբար՝ 9 Հոկտեմբեր 2021-ին, երեկոյեան ժամը 5:00-ին. բարձրացայ վանքին զանգակատունը նորոգելու մեր զանգակներու մաշած ջուաները որով ետք սկսեայ մաքրել ու ժողվել վանքին տանիքին վրայ նետուած կղմինտրներու փշրանքները ու պատահմամբ նշմարեցի անոնց տակ վանքին հնամեայ կոչնակը: ...Դժբախտաբար սոյն թանկարժէք եւ հազուագիտ կոչնակը մեր վանքէն կորսուած էր մօտաւորապէս 25 տարիներ առաջ»:

Ներկայիս կոչնակը կախուած է մօտակայ ծառի մը ճիւղէն:



Սուրիոյ հիւսիսը եւ մանաւանդ երկրի հիւսիս-արեւմտեան շրջանը, գոյություն ունին բոլլ մը հայաբնակ գիւղեր եւ աւաններ, որոնց կեդրոն կրնանք համարել Քէ-

սապ հայահոծ քաղաքը: Թուրքիոյ հարաւ-արեւմուտեան՝ Սուրիոյ հետ սահմանամերձ տարածքն այլ իր կարգին կը ծաղկէր հայկական Մուսալեռը իր գիւղերով եւ աւելի փոքր բնակավայրերով:

Այս շրջաններու բոլոր եկեղեցիները անցեալին, իրբեւ ժամահար միջոց կը գործածէին ոչ թէ զանգակներ այլ կոչնակներ, որոնցմէ քանի մը օրինակներ մինչեւ այսօր պահպանուած են եւ նոյնիսկ գործածական են: Այս կոչնակները միշտ երկաթէ պատրաստուած են, ընդհանրապէս երկարութիւնը՝ 50-80 սմ, լայնութիւնը՝ 12-15 սմ եւ հաստութիւնը 1-2 սմ: Իսկ կը հնչեցնեն նոյնպէս երկաթէ մուրճիկներով, ինչ որ շատ զօրեղ ձայն կ'արտադրէ, գրեթէ 15 վարկեան տետղ զնգզնգոց մը որ կը լսուի շատ հեռու, զանգակի մը պէս:



Սուրբ Աննա եկեղեցոյ կոչնակը, Եսքուպիէ

«Բերանացի վկայություններու համաձայն ... եկեղեցիներէն շատերը զանգակատուն չեն ունեցած զոնէ մինչեւ դարավերջ, գործածած են եկեղեցոյ պատին կամ բակի ծառին կախուած մետաղեայ կոչնակները: Փայտեայ կոչնակներու մասին վկայություններ չունինք: Վկայություններ ունինք, որ կոչնակի փոխարէն գործածուած են նաեւ պղնձեայ մեծ ամաններու յետնամասը»\*: Ներկայիս կոչնակ ունի Եսքուպիէ գիւղի Սուրբ Աննա Եկեղեցին, որ պատին ամրացուած է: Կոչնակ ունի նաեւ Քեսապի մօտակայ Գարատուրան գիւղի Սուրբ Ստեփանոս մատուռը: Կոչնակ ունէր Ճարապլուս գիւղի եկեղեցին, բայց տեղադրուած էր ճիշտ քովը կառուցուած Մերոպեան Վարժարանին տանիքը, եւ այլն:

«Մեր օրերուն տակաւին կոչնակներ կը գործածէին Գարատուրանի եւ Էքիզօլոքի Անետարանական եկեղեցիները եւ Գարատուրանի Ս. Ստեփանոս մատուռը»\*\*:

Ս. Ստեփանոս մատուռը վերանորոգուեցաւ ֆրանսահայ «Հող եւ Մշակոյթ Կազմակերպութեան» կողմէ իսկ կոչնակի համար աւանդական ցած, փայտեայ կախարան մը տեղադրուեցաւ 1987-ի օգոստոսին: «Կոչնակը նախապէս միշտ կախուած կ'ըլլար մատուան մուտքին քով գտնուող սրբացուած դափնի ծառէն: Մատուռը ունեցաւ նաեւ հիւսիսային պատին ամրացուած

\* Այս տեղեկությունները մեզի փոխանցեց ծանօթ բանահաւար, լեզուաբան եւ ազգագրագէտ Յակոբ Չոլաքեանը, ծնած Քէսապ 1947ին: Ներկայիս հաստատուած է Հայաստան եւ դասախօս է Երեւանի Պետական Համալսարանի:

\*\* Տեղւոյն վրայ (Գարատուրան) ստուգեցին եւ լուսանկարեցին Մհեր Ա. Ղազարեան եւ Ճորճ Սաղաթեան:


# Մշակութային կապեր Սփյուռք (Արգենտինա)

միջակ մեծությամբ զանգ: Վերջին ներխուժումին երկուքն ալ կորսուած են, վարի քարքարուտներուն մէջ գտնուած են կոչնակի կախարանին փայտէ կտորները»\*(տես՝ նախորդ էջում):



**Գարատուրանի Սուրբ Ստեփանոս մատուռին կոչնակը, 1987-ի օգոստոսին: Լուսանկարները՝ Organisation Terre et Culture - Երկիր եւ Մշակոյթ Կազմակերպութիւն**

«Էքիզիուքի աւետարանական եկեղեցւոյ կոչնակը քառանկիւն երկաթէ կտոր է՝ գրեթէ Սուրբ Ստեփանոսի կոչնակին չափով ու ձեւով: Կախուած կը մնար եկեղեցւոյ բակին մէջ, թթենի ծառէն: Կոչնակը հոն կը մնար նաեւ եկեղեցին զանգով մը օժտելէ ետք: Վերջին բարեգարդումներուն ընթացքին բակին թթենին հանեցին: Կոչնակը եւ հին եկեղեցւոյ քարէ արձանագրութիւնը այժմ պահ դրուած են նախկին դպրոցի, այժմ՝ գրադարանի շէնքին մէջ:»\*(տես՝ նախորդ էջում):



**Էքիզիուքի աւետարանական եկեղեցւոյ կոչնակը, ներկայիս պահպանուած գրադարանին շէնքին մէջ**

«Նշանաւոր էր Գարատուրանի Աւետարանական եկեղեցւոյ կոչնակը, որ կախուած էր երիցատան արեւմտեան պատին: Ան իր ձեւով բոլորովին տարբեր էր քառանկիւն կոչնակներէն: Ան օղակաձեւ երկաթեայ կոչնակ էր: Ունէր երկաթեայ երկու թակիչ: Անոր ձայնը կը հասներ վերի եւ վարի թաղերուն, մինչեւ Ծովու թաղ, նոյնիսկ Գարատուրանը եզերող լեռներուն խորքերը: 1980-ականներուն եկեղեցին ունեցաւ զանգ: Կոչնակը պատէն հանեցին»\*(տես՝ նախորդ էջում): Միայն վերջերս պատահմամբ գտնուեցաւ կորսուած կտոր կոչնակը, որ եկեղեցւոյ մատանին մէջ էր\*(տես՝ նախորդ էջում): Ներկայիս կախուած է բակի թթենիէն\*: Յատկանշական է որ կոչնակը իր մակետետոյթի վրայ ունի չորս հատ չորսական ծակերու խումբեր:

\* Թրքերէն “չang - չանկ” կը նշանակէ զանգակ:



**Քահանան կոչնակը հնչեցնելու պահուն: Այնճար, թուականը անձանօթ**



**Գարատուրանի Աւետարանական եկեղեցւոյ հւրօրինակ կտոր կոչնակը գոր կը հնչեցնէր ժողՖ Սաղտըճեան**



**Գարատուրանի կտոր կոչնակի ներկայ վիճակը թթենիէն կախուած, ետեւը եկեղեցին**

Նոյն վիճակի էին Մուսալերան գիւղերը, բոլորն ալ կը գործածէին մետաղէ կոչնակներ, որոնց կ'անուանէին տեղւոյն բարբառին յատուկ՝ «ժումպր - տոմր» ձեւով: Նոյնքան հետաքրքրական են «ժումպրիլ» բայը՝ «եկեղեցիին կոչնակը զարնել» նշանակութեամբ: Կոչնակները նաեւ կ'անուանէին չանդ/չանկ ձեւերով\*:



Իսկ «չանկ»էն ծագած է «չընկրտիլ» բայը՝ «չանկ»ը զարնել, «զանգահարել» նշանակութեամբ:

**Թրքահայոց Պատրիարք Սահակ եպս. Մաշալեան եւ տեղւոյն մշակութային գործիչ ճեմ Զափար, նոր կոչնակին թով**

**Մուսալերան Կազըֆըզ գիւղին Սուրբ Աստուծածին եկեղեցւոյ նոր կոչնակը**



# Մշակութային կապեր Սփյուռք (Արգենտինա)

1939-ին, Ֆրանսայի եւ Թուրքիոյ միջև կնքուած համաձայնագրի համեմատ, Ֆրանսան Աղեքսանդրեոսի զաւարը յանձնեց թուրքերուն: Իբրեւ յետեւանք՝ Մուսալերան գիւղերու հայերը արտագաղթեցին, միայն Վաքրֆլը գիւղի բնակիչները նախընտրեցին մնալ: Ներկայիս Վաքրֆլըն Թուրքիոյ միակ հայկական գիւղն է:

1939-ին Մուսալերան գիւղերէն հեռացած հայերու մեծամասնութիւնը Լիբանան գաղթեցին, որ հիմնեցին Այնճար քաղաքը, որ զուտ հայկական բնակչութիւն ունի բաղկացած բացարձակաբար մուսալեացիներէ: Սկզբնական շրջանին, Այնճարի մէջ ալ կոչնակներ գործածուեցան, բայց աստիճանաբար զանգակներով փոխարինուեցան:

Կոչնակ ուներ նաեւ, մինչեւ '90-ական թուականները, Մուսալերան Վաքրֆլը գիւղին Սուրբ Աստուծածին եկեղեցին, որ վերանորոգումէն ետք փոխարինուեցաւ զանգակով մը\*: Վերջերս, մեր աջակցութեամբ վաքրֆլըցիները վերականգնեցին\*\* աւանդական կոչնակը որ 2020-ի օգոստոս 15-ին օրհնուեցաւ եւ գործածութեան հանձնուեցաւ Թրքահայոց Պատրիարք՝ Գերաշնորհ Սահակ եպս. Մաշալեանի կողմէ:

Վաքրֆլը գիւղի մէջ նաեւ հիմնուեցաւ նոյն տարին «Մուսա լեռ Թանգարան»ը որ տեղադրուած է, ի միջի այլոց, կոչնակին կրկնօրինակը ճիշտ եկեղեցոյ նախկին զանգակին քով

### 4) Թանգարանային օրինակ մը

Կոչնակի հազուագիւտ օրինակ մը պահպանուած է, կոչնակներու բնօրրանէն շատ հեռու՝ Նիւ Եորքի Արուեստի Քաղաքային Թանգարանի մէջ (Metropolitan Museum of Art): Այս օրինակը կը պատկանի John Crosby



Brown-ի երաժշտական գործիքներու նշանատր հաւաքածոյին, որ գոյութիւն ուներ արդէն 1889 թուականին, երբ իբրեւ նուիրատուութիւն յանձնուեցաւ թանգարանին (7.):

211516Թանգարանին այս ցուցանմոյշի սկզբնական հաւաքածոյին մաս կազմելու մասին, գոյութիւն ունին մատչելի երկու արժեքատր աղբիւրներ. հաւաքածոյի գրացուցակին հրատարակութիւնը 1901-ին (8. էջ 79) եւ նոյնի վերահրատարակութիւնը 1903-ին (9. էջ 79): Թուականներէն յայտնի է կոչնակին նախատեղեւնեան շրջանէն ըլլալը:

Այս փայտէ ուղղանկիւնաձեւ կոչնակի չափերն են՝

\* Վաքրֆլըյի կոչնակի առաջին տեղեկութիւնները պատմեց Ճանիկ Չափար - Canik İparar (Penenyan), ծնած Անտաք - Antakya, 1941-ին; Ներկայիս հաստատուած Պերլին, Գերմանիա:

\*\* Վաքրֆլըյի կոչնակը իրականացաւ Ռուբէն Կնեագեանի (Ֆրանսա), այս աշխատութեան հեղինակ՝ Չաւէն Կնեագեանի (Արժանթին), Ճէմ Չափարի (Վաքրֆլը) եւ Վաքրֆլըյի Սուրբ Աստուծածին եկեղեցոյ Թաղական Խորհուրդի համագործակցութեան շնորհիւ:

26 x 66.7 սմ իսկ թակերունը՝ 30.5 սմ եւ կը ցուցադրուի Gotchnag վերտառութեամբ իսկ գրացուցակներուն մէջ մատնանշուած է Armenian այսինքն՝ հայկական ըլլալը:

Շետարքրական է, որ իբրեւ աշխարհագրական ծագում արձանագրուած է՝ Սուրիա: Գրացուցակներու հրատարակման թուականներուն, ապագայի Սուրիական Պետութեան հողատարածքը կը գտնուէր Օսմանեան Կայսրութեան տիրապետութեան տակ, բաժնուած զանազան վարչական միաւորներու՝ վիլայէթներու (Հալեպ, Դամասկոս, Պէյրութ, Տէր Ջօր): Ուրեմն «Սուրիա» հասկացութիւնը այդ թուականներուն քիչ մը անորոշ է, բայց եթէ նկատի ունենանք, որ Հալեպի վիլայէթին մաս կը կազմէին հիւսիսէն՝ Քիլիս, Այնթապ, Մարաշ, Ջէյրուն, եւ այլն, իսկ հիւսիս - արեւմուտքէն Աղեքսանտրեթ, Անտիոք, Սուլտիա, եւ այլ հայահոծ շրջանները, կրնանք որոշ վստահութեամբ եզրակացնել, որ այս կոչնակի աշխարհագրական ծագումը արեւելեան Կիլիկիան է:

Չենք կրնար նկատի չունենալ նաեւ Հալեպ քաղաքը իբրեւ հաւանական աշխարհագրական ծագման վայր, իր նախատեղեւնեան նշանակալից հայ բնակչութեամբ:

### 5) Տրապիզոնէ կոչնակ

Նշանատր ռուս լուսանկարիչ Դմիտրի Երմակովի (Дмитрий Иванович Ермаков (1846 - 1916)) հաւաքածոյին մաս կը կազմէ հազուագիւտ օրինակ մը, որ կը տեսնենք ժամկոչ մը



ձեռքերը թակեր բռնած, կոչնակի մը առջեւ: Կոչնակը իւրայատուկ տրապիզոնաձեւ վեցանկիւնի մըն է, որուն մօտաւոր չափերն են՝ հիւսքը կամ վարի կողմ 70 սմ, վերի կողմ 40 սմ., ուղղահայաց

կողմերը 16 սմ, դէպի վերի կողմը ուղղուած շեղակի կողմերը 20 սմ: Այս կոչնակը կախուած է վերի կողմի եզերքին մօտ եղած երկու քառակուսի ծակերէն: Աջ ու ձախ ուղղահայաց կողմերուն եզրին երկուական կլոր ծակեր կան եւ ճիշտ մէջտեղը, վերի եզրին մօտ ուրիշ չորս հատ կլոր ծակեր, խաչ ձեւացնելով:

Յայտնի է թէ լուսանկարը Սեւանայ լիճի կղզիին (ներկայիս թերակղզիի վերածուած) վանքին կը պատկանի: Մանաւանդ ժամկոչը «Սեւանայ լիճի Միաբանութիւն» վերնագիրը կրող լուսանկարին մէջն ալ է (10.):

### 6) Վասպուրականի ցից-կոչնակը

Ընդհանրապէս ծանօթ երկու տարբերակներէն՝ ձեռքի եւ անշարժ կոչնակներէն զատ գոյութիւն ունեցած է երրորդ, բոլորովին տարբեր ձեւ մը Վասպուրականի մէջ:

Այս կոչնակը կը բաղկանար փայտէ երկու տախտակներէ, շուրջ 2 մ. երկարութեամբ, 10-15 սմ. լայնութեամբ եւ 3 սմ. հաստութեամբ:

Երկու տախտակները, երեսները հանդիպակաց՝ քովեքովի, խռուած եւ ամրացուած էին հողի մէջ մօտ 40

# Մշակութային կապեր Սփյունք (Արգենտինա)

ամ. խորությամբ, այսպես ազատ կը մնար 1,60 մ. գետնէն վեր: Միս կոչնակներուն պէս այս ալ կը հարուածէին երկու փայտէ թակերով: Ըստ տեղեկատու Բարեղամ Յովնանեանի\*, երբ թակով հարուածէին մէկ կողմը՝ ձայնը կ'ուղղուէր դէպի հակառակ կողմը, ուրեմն փոխելով կողմը նաեւ կը փոխուէր արտահանում ձայնի ուղղութիւնը: Երբ լուսարացին սկսէր կոչնակահարութիւնը, ժամկոչը փոխն ի փոխ կոչնակի երկու կողմերը կը հարուածէր, որպէս զի ազդարարութիւնը հաւասարապէս լսուէր զիւրի երկու կողմերը:

Կոչնակի այս տարբերակը կը գործածուէր Հայոց Ձորի Խորզոմ գիւղին մէջ եւ տեղադրուած էր եկեղեցիին կից գտնուող գոմի մը բարձր տանիքին վրայ\*\*:

7) Այլ տեսակի կոչնակներ

Վերոյիշեալ կոչնակները, այսինքն Երուսաղէմի, Նոր Ջուղայի, Նիւ Եորքի, նաեւ Սուրիոյ հիւսիս արեւմտեան շրջաններու կոչնակները, կրնանք անուանել դասական կոչնակներ: Ատոնցմէ կ'առանձնանան շարք մը օրինակներ, որոնց արտաքին ձեւը չստիպազանց տարբեր է դասական անուանումներէն:

Յեղասպանութենէն վերապրող, մարաշցի Լուսինէ Շատարեւեանի շնորհիւ, տեղեկացանք հազուագիւտ օրինակի մը գոյութեան մասին՝ փայտէ կտր կոչնակ մը մասին է, որ պատուած էր անասունի ստամբսիս մաշկով\*\*\*:

Այսպիսի կտր, երկաթէ կոչնակ մը կը գտնուէր Ատանա Քեմի-ին\*\*\*\* մէջ, եկեղեցւոյ դուռը, շրթայով կախուած: Տրամագիծը մօտ 30 սմ էր եւ երկու շրթաներով զերանէ մը կախուած էր\*\*\*\*\*:

Այս օրինակներուն մաս կը կազմէ նաեւ վերոյիշեալ Գարատուրանի կտր մետաղէ կոչնակը:

Ըստ Արսէն Թորոսեանի՝ Եօզղաթի Պուրուն Քըշլա գիւղին մէջ, իբրեւ կոչնակ կը գործածէին պրոնզէ եռանկիւն մը, զոր կը հնչեցնէին եկեղեցւոյ բակը, ձեռքէն կախուած\*\*\*\*\*:

II) Կատարողական առանձնայատկութիւններ

Խոր անցեալէն սկսած՝ կոչնակները հնչեցնելու պարտականութիւնը յանձնուած է ժամկոչներուն, որոնք կը հետեւէին հնչման որոշ կարգի մը, որ կարելի է ամփոփել հետեւեալ ձեւով՝

- 1.-կոչնակահարութեան գործողութիւնները կը սկսէին մօտաւորապէս առաւօտեան ժամը հինգին,
- 2.- ժամկոչը նախ կը խաչակնքէր,
- 3.- յետոյ կոչնակը կը հնչեցնէր երեք անգամ,
- 4.- որմէ յետոյ կը սկսէր բուն կոչնակահարութիւնը,
- 5.- վերջաւորութեան՝ կոչնակը կը հնչեցնէր նորէն երեք անգամ:

Հնչեցման այս կարգը, առանց նկատելի մեծ տարբերութեամբ, պահպանուած է ցայսօր Երուսաղէմի Հայոց Միաբանութեան կողմէ:

Երբ կոչնակը մեծ չափեր ունենար կրնային զայն հարուածել երկու հոգի: Այսպէս, երբ հնչեցնողները երկու հոգի ըլլային, մէկը կը կանգնէր կոչնակին աջ կողմը, իսկ միւսը ձախ կողմը ու հերթով համաչափ կը հարկանէին գործիքը: Ուրիշ տարբերակ մըն էր այն, երբ մէկը կը կանգնէր կոչնակին դիմացը, իսկ միւսը ետեւը\*:

Ըստ տարածուած դարատուր արտադրութեան, երբ հաւատացեալները՝ թէ՛ աշխարհական եւ թէ՛ հոգեւորական լսեն կոչնակին հարուածները, պէտք է խաչակնքեն: Նարեկացին այսպէս կը սահմանէ զայս՝

«... յիշատակ մեծ տեսրմագրութեան յերեսս կերպիս Հոգւով սրբով զնշան խաչիդ:» (II. էջ 244):

Կոչնակահարութեան սկիզբի եւ վերջաւորութեան երեք հարուածները Սուրբ Երրորդութիւնը կը խորհրդանշեն: Նարեկացին այսպէս կ'արտայայտուի այս նիւթի մասին՝

«...Ընդ Երրորդութեանդ գծագրութիւն զկապ երեք կիւն իմ վնասակարին

Ի կատարածին սովիմբ կրկնեցեր» (II. էջ 244): Այսինքն «ժամահարութեան սկիզբի երեք կոփումները վերջն ալ կրկնելով, Երրորդութեան խորհուրդին նշանակութիւնը հասկցուցիք զիս»:

Գրիգոր Սկեւրացին ալ, ԺԲ դարուն, նոյնը կը հաստատէ՝ թէ խաչակնքելու մասին եւ թէ նշանակութեան. «... Յորժամ հոգեւոր փողն հարկանի եւ դու արթնանաս (անոր ձայնէն), իսկ եւ իսկ կնքես զքեզ նշանալ խաչին յիշելով զամենասուրբ Երրորդութիւնն: ...եւ յարուցել՝ աղօթելով երթիցես ի տեղի աղօթիցս:» (2. էջ 15):

Կոչնակները կը հարուածէին մուրճի նմանող կամ ծայրը գնդաձեւ գլխով գործիքով՝ թակ-ով, այս անուամբը տարածուած էր ամենուրեք նոյնիսկ գրական հայերէնի մէջ եւ կը ծագի գրաբարի թակն ձեւէն: Աճառեան կը նշէ ուրիշ երկու օրինակներ եւս՝ թակաղ «կոչնակի թակ» եւ թակաղակ «կոչնակի փոքր թակ»: Հաճընի բարբառով կ'ըսէին թակօղ (12. էջ 307):

Մեր հաւաքած բանաւոր նիւթերը կ'ապացուցեն, թէ Վասպուրականի որոշ շրջաններ՝ ինչպէս Արտամետ, Շատախ (Ճնուկ, Միլտիկ գիւղերը), Հայոց Ձոր (Հնդստան, Կեմ, Խորզոմ գիւղերը) կը գործածէին օթակ բարբառային ձեւը, զոր արձանագրած է Աճառեան ընդհանուր «Վան» անուան տակ: Ան կ'աւելցնէ նաեւ, որ օթակ կը գործածուէր Մակուի, Ոզմի եւ Մալմաստի մէջ իսկ Ազուլիսի մէջ կը հնչէին թօկ:

\* Տեղեկատու N' 38, Բարեղամ Յովնանեան, ծնած 1900-ին, Հայոց Ձորի Խորզոմ գիւղը (Վասպուրական), դուրս եկած 1915-ին: Հաստատուած Հայաստան:

\*\* Անցեալին գիւղական տուները եւ այլ շինութիւններ ունեցած են բարդ կառուցուած ծածկոյթ: Իրարայաջորդ գանգան նիւթերը (փայտ, յարդ, եղէգ, եւ այլն) կ'աւարտէին անջրանցիկ հողէ հաստ շերտով:

\*\*\* Տեղեկատու N' 42 Arg. Լուսինէ Շատարեւեան, ծնած է Մարաշ, 1908-ին: Հաստատուած Արժանիքին:

\*\*\*\* Ատանա Քեմի-ը ցեղասպանութենէն վերապրողներու ճամբար մըն էր (Պէլրուս, Լիբանան):

\*\*\*\*\* Տեղեկատու N' 30 Arg. Աղանի Պօղոսեան, ծնած 1908-ին, Ատանա վիլայէթի Խարնըլը գիւղը, դուրս եկած 1915-ին: Հաստատուած Արժանիքին :

\*\*\*\*\* Տեղեկատու N' 7 Uruguay - Արսէն Թորոսեան ծնած 1912-ին, Եօզղաթի Պուրուն Քըշլա գիւղը: Հաստատուած Ուրուկուայ 1928-ին:

\* Տե՛ս Նոր Ջուղայի Կատարիկեան Մենաստանի հին լուսանկարները:

# Մշակուիթային կապեր Սփյուռք (Արգենտինա)

Գրական հայերէնի մէջ որոշ ժամանակ գործածուած է նաեւ թաթ (1. էջ 94):

Անշարժ կոչնակները կը հարուածէին երկու թակերով, որոնք պատրաստուած էին կոչնակի նիւթէն, այսինքն, երբ կոչնակը փայտէ էր՝ թակերն ալ փայտէ էին, իսկ եթէ կոչնակը երկաթ էր նոյնպէս թակերն ալ երկաթէ էին: Այսպէս է նաեւ ներկայիս Երուսաղէմի գործածական չորս կոչնակներուն թակերը:

Թակերուն երկու հաստ ըլլալը կը նշէ արդէն Գրիգոր Նարեկացին՝ «յընդոստ զարկուած երկուց միջնորդաց ...» (11. էջ 343), այսպէս ալ նկարագրած են մեր կողմէ հարցաքննուած բոլոր տեղեկատուները:



Կոչնակահարութեան երկու օրինակներ՝ այսպէս կը հնչեն Գայոց Պատրիարքութեան Երուսաղէմի մետաղէ կոչնակը (ծախ) եւ փայտէ կոչնակը (աջ):

## ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. Օրմանեան Մաղաքիա Արք., Ծիսական բառարան, (արեւելահայերէնի վերածում), Եր., 1992 թ.: *Ormanean Maghaqia Arq.*, Tsisakan bararan, (arewelahayereni veratsuats), Yer., 1992 th.

2. Հացունի Վարդան, Պատմութիւն Հայոց Աղօթամատուցին, Բազմավէպ, 1965 թ., Յունուար-Մարտ: *Hatzuni Vardan*, Patmuthyun Hayotz Aghothamatoytzin, Bazmavep, 1965 th., Yunuar-Mart:
3. Քոչարեան Ա. Կ., Հարկանային եւ շնչական երաժշտական գործիքները Հայաստանում, Եր, 2008 թ.: *Qocharean A.K.*, Harkanayin ew shnjakan yerazhshtakan gortsiqner' Hayastanum, Yer., 2008 th.
4. Թորգոմ Արք. Մանուկեան, Արարողութիւնը Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց Տաճարի եւ Սուրբ Տեղեաց մէջ, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 1995 թ., եւ այլն: *Torgom Arm. Manukean*, Araroghuthiunq Yerusaghejmi Srbotz Yakobeantz Tadchari ev Surb Tegheatz mej, Mayr Athor S. Ejjmiatsin, 1995 th., ev ayln.
5. Լեւոն Մինասեան, Նոր Ջուղայի եկեղեցիները, Նոր Ջուղա, 1992 թ.: *Levon Minasean*, Nor Jughayi yekeghetziner', Nor Jughha 1992 th.
6. Յարութիւն Թ. Տէր Յովհաննեան, Պատմութիւն Նոր Ջուղայի, աշխարհաբար Բ հրատարակութիւն, Հատոր Բ, Գլուխ 2: *Haruthiwn Th. Ter-Yovhanean*, Patmuthiwn Nor Jughayi, ashkharhabar B hratarakuthiwn Hator B, Glukh 2.
7. Metropolitan Museum of Art, New York, Accession Number: 89.4.2215.
8. Catalogue of the Crosby Brown Collection of Musical Instruments: Gallery 27. 1. Metropolitan Museum of Art. New York, 1901, vol I.
9. Catalogue of the Crosby Brown Collection of Musical Instruments: Gallery 27. 2. Metropolitan Museum of Art. New York, 1903, vol II.
10. "Ermakov-Armenia 1910", photography NԵ 8, 1982, S. Lazzaro, Venezia.
11. Գրիգոր Նարեկացի, Նարեկ - Մատեան Ողբերգութեան, գրաբար բնագիր եւ աշխարհաբար թարգմանութիւն Գարեգին եպս. Տրապիզոնի (Խաչատուրեան), Պուէնոս Այրէս, Արժանթին, 1948 թ.: *Ogrigor Narekatzi*, Narek - Matean Voghberguthean, grabar bnagir ev ashkhahabar thargmanuthiwn Garegin eps. Trapizoni (Khachaturean), Puejnos Ayrejs, Arzhanthin, 1948 th.
12. Պողոտեան Յ. Պ., Հանրի ընդհանուր պատմութիւն, Լոս Անճէլըս, 1942 թ.: *Poghosean Y. P.*, THadch'ni 'ndhanur patmuthiwn, Los Andchejl's, 1942 th.

**Բանալի-բառեր.** կոչնակ, ինքնահունչ, ժամահար, կրօնա-ծիսական գործիք, կոչնակահարութիւն, Երուսաղէմ, Քէսապ, Գրիգոր Նարեկացի:

**Ключевые слова:** Кочнак, самозвучающий инструмент, звонарь, религиозно-обрядовый инструмент, колокольный звон, Иерусалим, Кесаб, Григор Нарекаци.

**Key words:** Kochnak, self-sounding, bell-ringer, religious-ritual instrument, bell ringing, Jerusalem, Kessab, Grigor Narekatsi.

**Տեղեկություններ հեղինակի մասին.** ԿՆԵԱԶԵԱՆ, ԶԱԻԷՆ ԹՈՐԳՈՄԻ (ծ. 15.01.1959 թ. ք. Քուէնոս Այրէս, Արգենտինա): Գաստուո Հայկական Մշակոյթի եւ Հայոց Պատմութեան՝ Սուրբ Գրիգոր Լուսատրիչ Կրթական Հաստատութեան: Հիմնադիր եւ ղեկավար Հայկական «Մասիս» Պարախումբի: Անդամ Արգենտինայի Երաժշտագէտներու Միութեան: Հիմնական գրադմունքը հայկական աւանդական երաժշտական գործիքներու մասին է: Հեղինակ է շարք մը գործիքագիտութեան աշխատութիւններու՝ «Հայկական կրօնա-ծիսական երաժշտական գործիք՝ քշոցը» (Էջմիածին, Օգոստոս, 2000 թ.), «Մատուցի Դալիթի «սագ», «թարխան սագ» եւ «ջոջ սագ» նուագարանները» (Բազմավէպ, Վենետիկ, 2008 թ.), «Հայկական աւանդական ձեռքի կոչնակները» (Բազմավէպ, Վենետիկ, 2007 թ.), «Հայկական աւանդական «շառառ» աղեղնային նուագարանի մասին» (Բազմավէպ, Վենետիկ, 2009 թ.), «Հայկական աւանդական անշարժ կոչնակները» (Բազմավէպ, Վենետիկ, 2013 թ.), «Միջնադարեան Հայաստանի «Գուռի» ջութակ» նուագարանի մասին» (Հայկազեան Հայագիտական

Հանդես, Պէրոն, 2017 թ.), «Գրարարի «յորելեան փող», «աւագափող» եւ «ազդարարութեան փող» նուագարաններու մասին» (Հայկազեան Հայագիտական Հանդես, Պէրոն, 2018 թ.), «Բարաշամբի գաւաթի շեփորներուն առեղծուածին բացատրումը» (Հայկազեան Հայագիտական Հանդես, Պէրոն, 2019 թ.), «Հին Հայաստանի “փանդիր/բամբիր” նուագարանի մասին» (Հայկազեան Հայագիտական Հանդես, Պէրոն, 2020 թ.):

**Сведения об авторе:** КНЯЗЯН ЗАВЕН ТОРГОМОВИЧ (род. 15.1.1959. г. Буэнос-Айрес, Аргентина). Преподаватель армянской культуры и истории Армении в Образовательном учреждении Святого Григория Просветителя. Основатель и руководитель армянского танцевального коллектива "Масис". Член Аргентинской ассоциации музыковедов. Сфера научных интересов: армянские традиционные музыкальные инструменты. Является автором ряда трудов: "Армянский религиозно-ритуальный музыкальный инструмент: рипида" (/ /Эчмиадзин, август 2000), "Инструменты Давида Сасунского: «саз», «тархан саз» и «джодж саз»" (/ /Базмавеп, Венеция, 2008) "Традиционные армянские церковные ручные гонги" (/ /Базмавеп, Венеция, 2007), "Об армянском традиционном смычковом инструменте «шавар»" (/ /Базмавеп, Венеция, 2009), "Армянские традиционные неподвижные церковные гонги" (/ /Базмавеп, Венеция, 2013), "О средневековом армянском инструменте «Двинская скрипка»" (Арменоведческий журнал / /Айказян, Бейрут, 2017), "О встречающихся в grabare инструментах: «труба юбилейная», «труба великая» и «труба возвещающая»" (Арменоведческий журнал / /Айказян, Бейрут, 2018), "Раскрытие загадки изображенных на Кубке Карашамб труб" (Арменоведческий журнал / /Айказян, Бейрут, 2019), "О древне-армянском инструменте «пандир / бамбир»" (Арменоведческий журнал Айказян, Бейрут, 2020).

**Information about the author:** ZAVEN TORGOM KNIASIAN (b. 1959, Buenos Aires, Argentina). Teaches Armenian Culture and History at St. Grigor Lusavorich School. Founder and Director of the Masis Armenian Dance Ensemble. Member of the Argentine Union of Musicologists. The professional research area is Armenian traditional musical instruments. Zaven Kniazian is the author of a number of works on organology: Armenian Religious and Ceremonial Instrument Qshots (Flabellum) / /Etchmiadzin, 2000; Musical Instruments in David of Sassoun Epic: Saz, Tarkhan Saz, and Joje Saz / /Bazmavep, Venice, 2008; Kochnak, Armenian Traditional Hand Bell / /Bazmavep, Venice, 2007); Shavar - Armenian Traditional Bowed String Instrument / /Bazmavep, Venice, 2009; Armenian Traditional Stationary Bells / /Bazmavep, Venice, 2013; The 'Dvin Violin', A Medieval Musical Instrument from Armenia / /Haigazian Armenological Review, Beirut, 2017; About Trumpets of Jubilee, Trumpets for Signaling, and Big Trumpets in Grabar / /Haigazian Armenological Review, Beirut, 2018; Solving a Mystery of Karashamb Goblet Trumpets / /Haigazian Armenological Review, Beirut, 2019; Pandir / Bambir, A Musical Instrument from Ancient Armenia / /Haigazian Armenological Review, Beirut, 2020.

## Резюме

Музыковед *Завен Торгомович Князян* (Буэнос Айрес, Аргентина). - "Армянский традиционный религиозно-обрядовый инструмент кочнак (гонг)".

Научно-исследовательская статья аргентинского музыковеда армянского происхождения, известного исследованиями в области армянских традиционных музыкальных инструментов Завена Князяна посвящена армянским традиционным религиозно-обрядовым гонгам.

Примерно до X века, прежде, чем колокола получили широкое распространение, в армянской церкви использовался кочнак (или гочнаг, рус. клепало, лат. semantron), представлявший собой длинную деревянную или металлическую доску, служившую для призыва верующих к богослужению и иным религиозным церемониям. Таким образом, кочнак выполнял функцию колокола.

Появление колоколов не привело к отказу от употребления кочнаков, которые продолжали использоваться вплоть до XX века, исчезнув со сцены лишь в период между 1915-1930 годами. На сегодня сохранилось лишь несколько образцов, в том числе четыре, принадлежащие Армянскому патриархату Иерусалима. Они представляют особую ценность, поскольку это единственные инструменты, по-прежнему используемые по назначению. Кочнаки также используются в некоторых армянских селениях на северо-западе Сирии, в районе Кесаба и его окрестностях.

В своей "Книге скорбных песнопений" Григор Нарекаци, мистик X века, посвятил этому инструменту отдельную главу (92).

В Армянской церкви существует специальный обряд освящения кочнака перед введением его в пользование.

## Summary

Musicologist, *Zaven Torgom Kniasian* (Buenos Aires - Argentina). - "Armenian traditional "gochnag/kochnak" for ritual-religious use".

Until around the X century, when the use of bells was widespread, the Armenian Church use of the gochnag (or kochnak) which was a long wooden or metallic board, used for calling the worshippers to mass or other religious ceremonies, that was why they had bell-like function.

The adoption of bells did not mean the disappearance of the gochnags, which went on to be used until the XX century, disappearing from the scene between 1915-1930 years.

Today there are just a few samples among which there are four, belonging to the Armenian Patriarchate of Jerusalem, that are particularly relevant because they are the only ones that are still in actual use.

The gochnags are also used in some Armenian villages of north-west of Syria, in the region of Kessab and its surroundings.

The mystic Grigor Narekatsi of X century has dedicated an ode (N 92) to that instrument in his in his Book of Prayer, also called the Book of Lamentations.

The Armenian Church has a special ceremony for blessing and putting into use of the gochnag.

**ГРАНТ ОГАНЕСОВИЧ  
ХАЧИКЯН**

*Певец, искусствовед, медиевист  
(Женева, Швейцария)  
E-mail: hrantkha@yahoo.com*

**РЯД ПУБЛИКАЦИЙ, ПОСВЯЩЕННЫХ НЕКОТОРЫМ  
ДУХОВЫМ МУЗЫКАЛЬНЫМ ИНСТРУМЕНТАМ  
В АРМЯНСКОЙ КУЛЬТУРЕ**

**Н**стоящая работа, состоящая из четырех самостоятельных статей, объединенных под общим заглавием, посвящена разбору ряда публикаций на тему некоторых духовых музыкальных инструментов в армянской культуре. Это две статьи Арама Кочаряна: “Одноствольный сринг (свирель)” и “Музыкальные инструменты в Армении (группа духовых)”, статья Феликса Тер–Мартirosова “Каменная свирель Пана V века до Р. Х. из Драсханакерта” и статья Саркиса Оганесяна “Армянский народный духовой музыкальный инструмент дудук”.

Статья Арама Кочаряна “Одноствольный сринг (свирель)” (1 С. 67–78), опубликованная в 1962 г. на армянском языке, состоит из 12 страниц А5 и включает ряд нотных примеров (вкпе около 4 страниц). Статья имеет две основные части, которые отделены друг от друга тремя астерисками. В свою очередь, каждую из этих двух основных частей можно подразделить на несколько условных частей. В связи с тем, что сринг (свирель) еще с древних времен настолько отличался своим чарующим звучанием, что был мифологизирован, автор статью начинает фригийской мифологической историей об Аполлоне и Сириге, а также легендой, связанной с Александром Македонским и свирелью, на основании которой персидский поэт XII в. Низами написал рассказ “Искандар и пастух”. Пытаясь представить какое важное место свирель занимала в культовой и повседневной жизни древних народов, автор приводит мифологические и историко–культурологические факты из жизни ассиро–вавилонян, финикийцев, фригийцев, мидийцев, египтян, а также свидетельства таких армянских средневековых авторов, как Фавстос Бузанд (V в.) и Григор Нарекаци (X в.). В связи с тем, что свирель все же была пастушьим инструментом, автор приводит свидетельства о пастухе Эн–Люлим, играющем на “ги”, изготовленном из тростника (предположительно свирель), и о том, что пастухи играли на свирели еще в III тысячелетии до н.э. в Вавилоне.

Переходя к теме свирели в рамках армянской культуры, автор отмечает, что примеры изображения свирели можно встретить в армянских рукописях XIV,

Это позволит в полном объеме выявить многогранный облик Демурияна—музыковеда, по достоинству оценить его значение в армянской культуре, и расширит существующие представления о развитии армянского музыкознания (4. С. 61).

В основе третьей главы монографии (“Собираемое наследие Степана Демурияна”) два нотированных сборника музыканта – “Кнар” (“Лири”, Санкт-Петербург, 1907) и вышеупомянутый “Армянские народные песни и наигрыши” (см. первые два раздела третьей главы соответственно озаглавленные Нотированный сборник “Кнар” и Второй сборник Степана Демурияна “Армянские народные песни и наигрыши”), ставшие замечательным итогом, “венцом” его многолетнего и самоотверженного труда по собиранию и записи фольклора. Следует отметить тщательную источниковедческую работу, проведенную Атанасян для уточнения автора, в частности сборника “Армянские народные песни и наигрыши”, который в отличие от сборника “Кнар”, при жизни музыканта не был издан, и сохранился лишь в его архиве (5. С. 82).

Авторство Демурияна отмечалось ранее в специальной литературе (М. Брутян, Степан Демуриян), однако, нуждалось в подтверждении. Изучение и сличение архивных рукописей сборника позволило Атанасян не только разрешить проблему, но и опубликовать второй демурияновский сборник спустя сто лет после его создания.

Атанасян подробно рассматривает различные побудительные мотивы создания сборников Демурияна. Это прежде всего возникновение в XIX веке в Западной и Восточной Армении под эгидой “познай себя”, исключительного интереса к собственным, в том чис-

ле и музыкальным истокам, традициям, как носителям национальной идентичности\*.

В то же время создание сборников, как пишет Атанасян, имело важное практическое значение в педагогике Демурияна, который использовал их в качестве учебных пособий, поскольку считал воспроизведение образцов фольклора одним из основополагающих компонентов преподавания музыки в армянских школах (4. С. 69).

К тому же наличие фольклорных сборников в значительной степени способствовало певческой и хоровой исполнительской деятельности Демурияна, и следовательно, распространению и пропаганде армянской народной музыки, что, собственно, и являлось, как известно, одной из главных задач и целей его творческой жизни.

В основе сборников армянской музыкальный фольклор – преимущественно крестьянский, сосредоточенный, главным образом в сборнике “Армянские народные песни и наигрыши”, городской, а также ряд ашугских песен.

Данные сборники, как и многие подобные опусы того же времени (рукописные, изданные), составлены по принципу многожанровости. Это записанные от ин-формантов, выходцев из различных районов Восточной и Западной Армении, лирические, трудовые, эпические, обрядовые, скитальческие песни, песни—пляски, немалое количество национально—патриотических песен и т.д., отразивших жанровое, стилевое, региональное многообразие армянской народной музыки конца XIX – начала XX веков, и в которых традиционные сюжетные мотивы, образы, тесно переплелись с социально—общественными и политическими реалиями своего времени.

Атанасян отмечает особенность сборников Демурияна, которыми они значительно отличаются от современных им нотированных фольклорных “собратьев”. Как известно, на начальных этапах армянской музыкальной фольклористики, народная музыка в большинстве своем записывалась армянской нотописью. Демуриян предпочел европейскую нотопись, намереваясь сделать свои сборники достоянием гораздо более широко, и не только армянского, но и иноязычного музыкального круга.

В заключительном разделе третьей главы монографии (“Сравнение и рассмотрение вариантов армянских народных песенных типов”) Атанасян отмечает вариативность (наличие вариантов) песенных образцов, зафиксированных, в частности, в сборнике Демурияна “Армянские народные песни и наигрыши”, что не случайно. Вариативность, как известно, является основополагающим способом бытования музыкального фольклора (6. С. 47).

В то же время это одна из важнейших, актуальнейших, извечно злободневных и проблемных областей музыкальной фольклористики. В процессе исследования, отмеченного ею явления, Атанасян сравнила

\* Отметим в связи с этим учебники “Музыка”, составленные А.Пахлеванян и Ю.Юзбашяном (издательство “Зангак”, Ереван, 2008–2013 гг.), включенные в обязательную учебную программу 1–7 классов общеобразовательных школ Армении, в которых армянской и композиторской музыке отведен приоритетное место и значение. Хотелось бы видеть в учебном процессе армянского юношества и отмеченное выше учебное пособие для музыкальных школ “Армянская духовная музыка” Атанасян также.

\* Как известно, схожие процессы в то же время наблюдались и в России, Венгрии, Чехии, Польше и т.д.

сборник Демурына с аналогичными сборниками в записи его современников и музыковедов более поздних времен. Это 19 изданных, нотированных опусов С. Амадуни, Комитаса, А. Брутяна, сборник “Кнар” самого Демурына, С. Меликяна, А. Арутюняна, М. Тумаджяна, М. Саргсяна, А. Пахлеванян и А. Сарьян, А. Пахлеванян (4. С. 83), охватившие столетний период истории армянской музыкальной фольклористики, вошедшие в ее золотой фонд, образцы которых, записанные от потомственных носителей традиционного фольклора выделяются особой достоверностью музыкального материала.

Сравнительное рассмотрение отмеченных сборников позволило Атанасян обнаружить целый ряд варьированных аналогов демурыновских записей (5. С. 82–93), выявить и классифицировать при этом ту или иную степень вариативности, и различные ее проявления (4. С. 84–85), и в то же время определить найденные и зафиксированные именно Демурыном новые, неизвестные образцы.

Четвертая, последняя, самая развернутая глава монографии (“Анализ песен нотированного сборника Степана Демурына “Армянские народные песни и наигрыши””) состоит из трех разделов, соответствующим различным аспектам продланной автором скрупулезной исследовательской работы над сборником. Так, в первых двух разделах главы (“Сравнение одноименных песен”, и “Народные песни определенных регионов”), детально разрабатывается тема вариативности песен сборника, заявленная автором в предыдущей главе. Сопоставляются поэтические тексты, ладо-интонационный строй, слогоритмика, форма и иные компоненты демурыновского оригинала и его вариантов в других нотированных сборниках, привлеченных Атанасян для сравнения\*.

Автор пытается выявить наиболее распространенные в период записи образцов сборника Демурына песенные типы в армянском музыкальном фольклоре, и их различные (близкие и не особенно близкие) варианты – региональные (характерные для различных этнографических районов армян) и временные (сохранившиеся в памяти народа, передающиеся из поколения в поколение).

Третий раздел (“Новоявленные образцы”) той же главы посвящен анализу песен сборника, не имеющих вариантов, которые согласно автору “выделяются рядом особенностей и содержанием (4. С. 128)”.

Так, отмечаются переменный метр, наличие песенно-воспоминания с ее речитативно-импровизационным складом, редкий для армянской народной музыки лидийский лад и т.д.

Анализ сборника Демурына, осуществленный Атанасян, лишней раз подтверждает концепцию армянской музыкальной фольклористики о существовании стойких, “кочующих” в пространстве и во времени песенных типов в армянской народной музыке, в то же время позволяет рассматривать ее как постоянно

развивающийся, обновляющийся новыми образами организм. В свою очередь это указывает на непреходящее, художественное, научное и историческое значение сборника Демурына, появившегося “на свет” благодаря целенаправленным усилиям Атанасян.

Четырем главам монографии предпослано небольшое, содержательное “Предисловие””. Это своего рода макет монографии. Демурыан представлен в лист “деятелей, стоявших у истоков формирования армянского классического искусства нового времени (4. С. 7)”.

Приведены, и в общих чертах охарактеризованы все сферы многогранной деятельности музыканта. Отмечается необходимость многостороннего и детального изучения богатого творческого наследия Демурына. Дано описание глав монографии и т.д.

Следует особенно отметить научный аппарат монографии – четкие, подробные ссылки на источники, обстоятельные подстрочные комментарии, развернутый раздел “Использованная литература”, охвативший весь обширный, многожанровый комплекс, просмотренных автором архивных, рукописных материалов, нотированных сборников, монографий, статей, периодических изданий, различных словарей и т.д.

Завершает монографию “Приложение”, составленное из нотированных Демурыном крестьянских и изданных на слова выдающихся армянских поэтов (О. Туманяна, А. Исаакяна, Р. Патканяна и других) городских песен.

Хотелось бы добавить к монографии еще одно примечание – аналитическую карту песен сборника Демурына “Армянские народные песни и наигрыши”, разработанную Атанасян по региональной, жанровой и ладовой принадлежности данных песен и включенную ею ранее в издание сборника (5. С. 79).

Авторский текст монографии “вполне уместно” дополнен различными фотографиями из архива Демурына с концертными афишами музыканта, изображающими его с организованными им же хорами, в кругу семьи и т.д.

Заслуживает особого внимания высокая культура издания монографии, ее презентабельный вид, оформленная в приятных цветовых тонах красивая твердая обложка (оформление обложки – В.Погосян), удобные для чтения формат книги, избранный шрифт, почти полное отсутствие опечаток, облегчающие восприятие текста пробелы между абзацами (издательский редактор Л. Арутюнян). издание осуществлено издательством “Амроц груп” (основатель, многолетний и бессменный директор В. С. Хачатрян), лауреатом республиканских и международных конкурсов в номинации “Искусство”, многочисленные и разнообразные по содержанию издательские выпуски которого давно уже удостоились внимания, интереса и пользуются заслуженным успехом и среди профессионалов, и среди широкой аудитории любителей искусства.

Монография Атанасян – новое ценное издание в армянском музыковедении, и, в частности, в области изучения армянской народной музыки, деятельности

\* Список данных сборников приведен Атанасян в третьей главе ее монографии (с.83), как отмечалось выше.

ее выдающихся сподвижников. В то же время монография – это дань глубочайшего уважения к творчеству и памяти Степана Демурына – музыканта, личности, гражданина, патриота.

ПРИМЕЧАНИЯ

1. *Տաակ Ամատունի*, Нотированный сборник народных песен, /Армянские народные песни и наигрыши., том XI., Ереванская государственная консерватория им. Комитаса., кафедра армянской музыкальной фольклористики., Ер.: Амроц груп, 2014, 102 образцов. *Saak Amatuni, Natirovannyj sbornik narodnykh pesen*, /Armyskie narodnye pesni i naigryshi., tom XI., Yerevanskaya gosudarstvennaya konservatoriya im. Komitasa., kafedra armyanskoj muzykal'noj fol'kloristiki., Yer.: Amrotz grup, 2014, 102 obraztsov.
2. *Տեպան Դեմուրյան*, /Армянские народные песни и наигрыши., том IX., Ереванская государственная консерватория им. Комитаса, кафедра армянской музыкальной фольклористики, Ер.: Амроц груп, 2013, 100 образцов. Том посвящен памяти М.Брутян. *Stepan Demuryan, /Armyskie narodnye pesni i naigryshi., tom IX., Yerevanskaya gosudarstvennaya konservatoriya im. Komitasa., kafedra armyanskoj muzykal'noj fol'kloristiki., Yer.: Amrotz grup, 2013, 100 obraztsov.*
3. *Տիտակ (1975)*, книга I, /Армянские народные песни и наигрыши, том XIV., Ереванская государственная консерва-

- тория им. Комитаса, кафедра армянской музыкальной фольклористики, Ер.: Амроц груп, 2021, 148 образцов., Том посвящен 100-летию Ереванской консерватории и 50-летию кабинета народного музыкального творчества. *Spitak (1975)*, kniga, /Armyskie narodnye pesni i naigryshi., tom XIV., Yerevanskaya gosudarstvennaya konservatoriya im. Komitasa., kafedra armyanskoj muzykal'noj fol'kloristiki., Yer.: Amrotz grup, 2021, 148 obraztsov., Tom posvyaschaetsya 100-letiyu Yerevanskoj konservatorii i 50-letiyu kabineta narodnogo muzykal'nogo tvorchestva.
4. *Ատանասյան Ն. Ն.*, Степан Демурия. У истоков армянской музыкальной фольклористики., (Ереванская государственная консерватория им. Комитаса, кафедра армянской музыкальной фольклористики., Ер.: Амроц груп, 2020, 152 с., (на арм. языке, резюме на рус. и англ. языках). *Atanasyan N. N., Stepan Demuryan. U istokov armyanskoj muzykal'noj fol'kloristiki., (Yerevanskaya gosudarstvennaya konservatoriya im. Komitasa., kafedra armyanskoj muzykal'noj fol'kloristiki., Yer.: Amrotz grup, 2020, 152 s., (na arm. yazyke, rezyume na russ. i angl. yazykakh).*
  5. /Армянские народные песни и наигрыши., «Примечания». /Armyskie narodnye pesni i naigryshi., “Primechaniya”.
  6. *Քաղևանյան Ա. Ա.*, Современные проблемы армянской музыкальной фольклористики., Ер.: Амроц груп, 2018., (на арм. языке). *Pakhlevanyan A. A., Sovremennyye problemy armyanskoj muzykal'noj fol'kloristiki., Yer.: Amrotz grup, 2018., (na arm. yazyke).*

**Բանալի-բաներ** Նունե Արանասյան, Ստեփան Գեմուրյան, հայ հոգևոր երաժշտություն, ֆոլկլորագիտություն, ֆոլկլորագիտության ամբիոն, Մարգո Բրուտյան, Ալինա Քաղևանյան, մոնոդիա:

**Ключевые слова:** Нуне Атанасян, Степан Демурия, армянская духовная музыка, фольклористика, кафедра армянской музыкальной фольклористики, Марго Брутян, Алина Пахлеванян, монодия.

**Keywords:** Nune Atanasyan, Stepan Demuryan, Armenian sacred music, folklore studies, Department of Armenian Music Folklore, Margo Brutyan, Alina Pahlevanyan.

**Տեղեկություններ հեղինակի մասին** ԲԱԳԴԱՍԱՐՅԱՆ ԱՆԱՀԻՏ ՀՈՎՀԱՆՆԵՄԻ, երաժշտագետ, արվեստագիտության թեկնածու, դոցենտ, [ծ. 1947 թ. ք. Լենինական (այժմ՝ Գյումրի)]: Ավարտել է ԵՊԿ երաժշտագիտական բաժինը 1973 թ.: Մասնագիտացել է պոլիֆոնիայի բնագավառում, Գ. Չերոտարյանի դասարանում: Արվեստագիտության թեկնածու՝ «Նմանակումային կառույցները Կոմիտասի ստեղծագործություններում» թեզը, Մոսկվա (1990 թ., գիտ. դեկ. 4. Է. Խոդաբաշյան-Սարգսյան): Երաժշտատեսական և պատմական առարկաներ է դասավանդել Երևանի Ք. Քոչևարյանի անվ. 7-ամյա, Պ. Չայկովսկու անվ. ՄՄԵԳ դպրոցներում, դասախոսել է Ռ. Մելիքյանի անվ. երաժշտական ուսումնարանում, Խ. Աբովյանի անվ. ՀՊՄՀ (այժմ՝ ՀՊՄՀ), այժմ՝ է ԵՊԿ Հայ երաժշտական ֆոլկլորագիտության ամբիոնում. «Հայ հոգևոր երաժշտություն» և «Հայկական նոտագրություն» դասընթացները: Միաժամանակ ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ավագ գիտաշխատող է: Բ. գիտահետազոտական գործունեությունը կապված է հայկական ավանդական (մոնոդիկ) երգարվեստի հետ: Հեղինակ է՝ գիտական հոդվածների հայկական ժողովրդական, աշուղական, եկեղեցական երաժշտության մասին: Նրա գրչին են պատկանում նաև Կ. Խոդաբաշյանի կենսամատենագիտությունը, //«Հայ նշանավոր կին գիտնականներ», N1, Երևան, ՀՀ ԳԱԱ Գիտություն, 1999 թ., «Հայկական ժողովրդական նվագարաններ» գիրքը (հայ., ռու., անգլ. լեզուներով, համահեղինակ՝ Ա. Կիրակոսյան), Եր., Կոմիտաս, 2008 թ.): «Հայկական նոտագրության ձևերի մասին» Եր., Ամրոց Գրուպ, 2010 թ.: Բ. զբաղվում է և խմբագրական աշխատանքով: Հայկական ավանդական և կոմպոզիտորական երաժշտության մասին գեկուցումներով Բ. մասնակցել է հանրապետական և միջազգային գիտաժողովներին: Հայ երաժիշտների մասին և այլ բնույթի հրապարակախոսական հոդվածներով հանդես է եկել հանրապետական մամուլում (//Սովետական Հայաստան, //Երեկոյան Երևան, //Ավանգարդ, //Կոմունիստ, //Հայաստանի Հանրապետություն, //Գոլոս Արմենի, //Новое Время և այլ թերթերում, //Սովետական արվեստ, //Երաժշտական Հայաստան ամսագրերում և այլն):

**Сведения об авторе:** БАГДАСАРЯН АНАИТ ОГАНЕСОВНА (род. в 1947г., г. Ленинакан, ныне Гюмри, РА) - музыковед, кандидат искусствоведения, доцент. Окончила ЕГК им. Комитаса (1973), специализация “Полифония”, дипл. раб. “Фуга в сонатно-симфонических циклах Бетховена” (класс Г. М. Чеботарян). Канд. дисс. “Имитационные структуры в произведениях Комитаса” М., 1990. (научн. рук. К. Э. Худобашиян-Саркисян). Преподавала в музыкальных школах им. Кушнаряна, СМСШ им. П. Чайковского, муз.училище им. Р. Меликяна, в Армгоспединст. им. Х. Абовяна. Препоает на кафедре армянской музыкальной фольклористики ЕГК: “Армянская духовная музыка”, “Армянская нотопись”. Старший научный сотрудник ИИ НАН РА. Научно-исследовательская деятельность Багдасарян связана с армянской традиционной (монодической) музыкой: “Попеременное пение в армянских крестьянских песнях” (/Традиции и

современность, кн. 2., Ер.: НАН РА Гитутюн., 1996, С. 200-208); “О некоторых музыкально-поэтических особенностях народных песен о геноциде армян” (на арм. яз.) Ер., НАН РА Институт музей геноцида армян, 2002; “Арам Кочарян и армянская ашугская музыка”. (на арм.яз.), Ер.: НАН РА Гитутюн., 2004; “Армянская ашугская национально-патриотическая песня в Александрополе” (на арм. яз.), Ер.: НАН РА Гитутюн., 2009); “Духовная песня “Утро-свет” (“Аравот Лусо”) с точки зрения типологии армянской духовной музыки” (на арм. яз.), Св. Эчмиадзин., 2000; “Айтнян-Бем, Песнопения св. Патарага” (на арм.яз.), Вена-Ереван: Издательство Мхитаристов., 2012; и т.д. Перу Б. принадлежат также: Биобиблиография К. Э. Худабашян (на арм. и рус. яз.), //“Армянские выдающиеся женщины-ученые” # 1., Ер.: НАН РА Гитутюн., 1999; Армянские народные инструменты (на арм., англ., рус. яз., соавтор А. Киракосян)., Ер.: Комитас, 2008; Пособие по армянской нотописии Ер.: Амроц Групп, 2010. Б. отредактированы два сборника духовных песнопений - “Избранные армянские духовные песни”., Ер.: Зангак 97., 2010, “Записанные песнопения св. Патарага”., Ер.: Амроц Групп, 2012; “Ашугские любовные сказы”, Ер.: Амроц Групп, 2014. Участвует в республиканских и международных научных конференциях, в радио и телепередачах, сотрудничала с республиканской прессой (//Коммунист, //Голос Армении, //Новое Время и т.д.).

**Information about the author:** BAGHDASARYAN ANAHIT HOVHANNES - (b. in Leninakan (Gyumri) in 1947), musicologist, Ph.D. in Arts, Docent. In 1973 she graduated from YSC with a specialization in Polyphony (G. Chebotaryan's class), with graduation work on The Genre of Fugue in Beethoven's Sonata Symphonic Cycles. In 1990 she completed her postgraduate studies under the guidance of K. Khudabasyan-Sarkissyan with thesis on The Imitation Structures in Komitas' Works. A. Baghdasaryan has been teaching at Kushnaryan Music School, Tchaikovsky Special Music School, R. Melikyan Music College, and Kh. Abovyan State Pedagogical University. Presently she is a lecturer on Armenian Sacred Music and Armenian Music Notation at the Department of Folk Music at YSC. She is a Senior Researcher at the Institute of Arts of the NAS of RA. Her field of research is Armenian traditional monodic music, in which she has numerous publications, such as Alternate Singing in Armenian Peasant Songs (Tradicii I Sovremennost, Book 2, Yerevan, 1996); Some Musical Poetical Features of Folk Songs about Armenian Genocide (in Armenian), Yerevan, 2002; Aram Kocharyan and Armenian Ashugh Music (in Armenian), Yerevan, 2004; Armenian Ashugh National-patriotic Songs in Alexandropol (in Armenian) Yerevan, 2009; The Aravot Luso Chant in Terms of Typology of Armenian Sacred Music (in Armenian), St. Etchmiadzin, 2002; Aydnian - Bohm: the Hymns of the Holy Patarag (in Armenian), Vienna-Yerevan, 2012; and many others. A. Baghdasaryan also wrote Bio-bibliography of K. Khudabashyan //Prominent Armenian Women Scientists, N1, Yerevan, 1999; Armenian Folk Music Instruments (co-authored with A. Kirakosyan), Yerevan, 2008; A Guidebook on Armenian Music Notation, Yerevan, 2010. Baghdasaryan is an editor of two collections of Armenian hymnography - Selected Armenian Sacred Chants, Yerevan, 2010 and The Recorded Hymns of the Holy Patarag, Yerevan, 2012, as well as of the Ashugh Lyrical Tales, Yerevan, 2014. Anahit Baghdasaryan is a participant in international research conferences; she takes part in television and radio broadcasts and co-operates with local newspapers (Kommunist, Golos Armenii, Novoye Vremya, etc.).

## Ամփոփում

Երաժշտագետ, արվեստագիտության թեկնածու, Երևանի Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիայի դոցենտ, **Անահիտ Հովհաննես Բաղդասարյան**. - «Նոր արժեքավոր հրատարակություն»:

Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի գիտական խորհրդի որոշմամբ լույս է տեսել արվեստագիտության թեկնածու, դոցենտ Նունե Աթանասյանի «Ստեփան Դեմուրյան: Հայ երաժշտական ֆոլկլորագիտության ակունքներում» խորագրով մենագրությունը (Երևան, 2020, «Ամրոց գրուպ» հրատարակչություն, 152 էջ, ամփոփումը՝ ռուսերեն և անգլերեն լեզուներով):

Աթանասյանը մերօրյա մեզանում առավել եռանդուն, բազմակողմանի և արդյունավետ գործող երաժշտագետներից է: Բազմիցս հանդես է գալիս զեկուցումներով գիտաժողովներում, հոդվածներ հրատարակում գիտական պարբերականներում հայ ժողովրդական, հոգևոր երաժշտության, հայ երաժշտական ֆոլկլորագիտության դասականների մասին և այլն: Հեղինակել է «Ձեռնարկ հայ հոգևոր երաժշտության» (Եր., 2010 թ.), վերջինիս տեսության և պատմության առաջին և դեռևս միակ դասագիրքն է հայ արդի երաժշտագիտության, որն արդեն իսկ հաջողությամբ ընդգրկվել է կոնսերվատորիայի տարբեր բաժինների ուսումնական ծրագրերում: Հեղինակել է նա «Հայ հոգևոր երաժշտություն, ուսումնական ձեռնարկ» երաժշտական դպրոցների համար (Եր., 2020 թ.): Աթանասյանը կազմում և պատրաստում է հրատարակության հայ սվանդակյան (ժողովրդական, աշուղական) երաժշտության ձայնագրյալ ժողովածուներ, ժամանակին կազմակերպել և ղեկավարել է ազգագրական երգի և պարի երևանյան ամենամյա փառատոնները, երաժշատեսական տարբեր առարկաներ է դասավանդում կոնսերվատորիայում և այլն:

## Резюме

Musicologist, PhD in Arts, Docent of YSC **Anahit Hovhannes Baghdasaryan**. - “A New Authoritative Publication”.

By a decision of the Academic Council of Yerevan Komitas State Conservatory a new book by PhD in Arts History, Docent Nune Atanasyan has been published. The book is entitled Stepan Demurian. The Origins of Armenian Music Folkloristics (Yerevan, 2020, Amrots Group, 152 pages, annotations in Russian and English). Nune Atanasyan is one of the most active, broadly educated, and productive musicologists of this day. She presents papers at conferences, publishes articles in scientific periodicals on Armenian folk and spiritual music, on Armenian folklore classics, etc. She is the author of the Manual on Armenian Sacred Music (Yerevan, 2017), the first and only textbook on history and theory in this field, which has already been successfully included in the curricula of various departments of the Yerevan Conservatory. She is also the author of the Textbook for Armenian Sacred Music for music schools (Yerevan, 2020). Atanasyan has compiled and edited collections of recordings of Armenian traditional music (folk, and ashugh). She has also organized and directed annual festivals of national song and dance in Yerevan. She teaches various music theory disciplines at the Yerevan Conservatory. The presented monograph is dedicated to the life and versatile activities of Stepan Demuryan (1872-1934), the famous Armenian folklore musician, teacher, choirmaster, singer, composer, musical and social figure, who has been undeservedly neglected for a long time. The book is the result of the author's diligent and consistent work for many years. For the first time, Demuryan's voluminous and diverse personal archive (kept at

## Ամփոփում

Ներկա մենագրությունը նվիրված է տարիներ շարունակ անարդարացիորեն մոռացության մատնված հայ նշանավոր երաժիշտ՝ երաժշտագետ-ֆոլկլորագետ, մանկավարժ, խմբավար, երգիչ, կոմպոզիտոր, երաժշտական-հասարակական գործիչ Ստեփան Դեմուրյանի (1872-1934) կյանքին և բազմաբեղուն գործունեությանը: մենագրությունը հեղինակի երկարամյա, քրտնաջան, հետևողական և նվիրյալ աշխատանքի արգասիքն է: Առաջին անգամ մանրակրկիտ կերպով ուսումնասիրվել, և գործի է դրվել երաժշտի մեծածավալ, բազմաբնույթ, անձնական ամբողջ արխիվը (կենտրոնացած է Ե. Չարենցի անվ. ԳԱԹ-ում): Արխիվային ձեռագիրն նյութերի հիմքով հրատարակվել է «Հայ ժողովրդական երգեր և նվագներ» դեմուրյանական անտիպ ժողովածուն (Երևան, 2013 թ.), որը համարյեց և հարստացրեց հայ ժողովրդական երգաստեղծության ձայնագրյալ ժողովածուների դասական ֆոնդը:

Մենագրությունը բաղկացած է Առաջաբանից, նաև չորս տարբեր բովանդակության, սակայն անբակտելիորեն կապված գլուխներից: Դրանց միջոցով հաջորդաբար ներկայացվում են.

Գլուխ Ա. («Հայ երաժշտական ֆոլկլորագիտության ծագման և զարգացման առաջին քայլերը»)՝ հայ իրականության ԺԹ դարի և Ի դարասկզբին ազգային ինքնագիտակցության և բուռն վերելքի գաղափարներով տոգորված միջավայրը, որը մեծապես նպաստեց Դեմուրյան-Երաժշտի ստեղծագործական ձևավորմանը: Գլուխ Բ. («Ստեփան Դեմուրյանի ստեղծագործական դիմանկարը»)՝ Դեմուրյանի կյանքը և բազմաոլորտ երաժշտական գործունեությունը: Գլուխ Գ. («Ստեփան Դեմուրյանի բանահավաքչական ժառանգությունը»)՝ Դեմուրյանի ստեղծագործական գլխավոր՝ երաժշտաֆոլկլորագիտական ասպարեզը: Գլուխ Դ. «Հայ ժողովրդական երգեր և նվագներ» ձայնագրյալ ժողովածուի վերլուծությունն ըստ ժողովածուում ընդգրկված նմուշների տարածքային և ժամանակային երգատիպերի, նորահայտ երգերի կառուցվածքային հատկանիշների և այլն:

Հարկ է հատկապես նշել մենագրության գիտական ապարատը՝ աղբյուրների ճշգրիտ հղումները, դիտարկվող երևույթը հնարավորինս հավելող և պարզաբանող տողատակի ծանոթագրությունները, օգտագործված գրականության ծավալուն բազմաժանր շարքը (արխիվային անտիպ նյութեր, նուստային գրականության, ձայնագրյալ ժողովածուներ, մենագրություններ, հոդվածներ, պարբերականներ, բառարաններ):

Մենագրության հեղինակային խոսքը տեղին լրացնում են «Հավելվածը»՝ հայ ժողովրդական երգերի (գեղջկական, քաղաքային) Դեմուրյանի նոտագրություններով, նաք երաժշտի արխիվից քաղված լուսանկարները:

Նշելի և դրվատանքի է արժանի մենագրության հրատարակչական բարձր մակարդակը՝ գրքի գեղեցիկ ձևավորումը (հեղինակ՝ Վ. Պողոսյան), ներկայանալից տեսքը, տեքստի ընթերցելի, գրեթե առանց վրիպակների շարվածքը (հրատարակչական խմբագիր՝ Լ. Հարությունյան): Մենագրությունը հրատարակվել է «Գեղարվեստ» հանրապետական և միջազգային մրցանակաբաշխությունների մրցանակակիր «Ամբոց գրուպ» երևանյան հայտնի հրատարակչությունում (հիմնադիր և երկարամյա տնօրեն Վ. Խաչատրյան):

Նույն Աթանասյանի մենագրությունը արժեքավոր ներդրում է հայ երաժշտագիտության մեջ: Միաժամանակ, այն մեծազույն հարգանքի և երախտի դրսևորում է Ստեփան Դեմուրյանի՝ երաժշտի, անհատի, քաղաքացու և հայրենասերի գործունեության և հիշատակի հանդեպ:

## Резюме

the Charents Museum of Literature and Arts) was thoroughly studied. Demuryan's previously unpublished collection "Armenian Folk Songs and Melodies" (Yerevan, 2013) was published based on archival materials, thus enriching the classical collection. The monograph consists of a Foreword and four chapters, different in content while still inextricably linked. Thus, the chapters respectively, describe the following: Chapter I - The Beginnings and the First Steps of Armenian Music Folkloristics. The chapter describes the atmosphere of Armenian reality in the 19<sup>th</sup> and the early 20<sup>th</sup> centuries filled with ideas of national self-consciousness, and its rapid development, which greatly contributed to the creative growth of Demuryan the musician. Chapter II, Stepan Demuryan's Creative Profile, describes Demuryan's life and his manifold musical activities. Chapter III, The Ethnographic Heritage of Stepan Demuryan, is devoted to the main field of Demuryan's work. Chapter IV, Armenian Folk Songs and Melodies, presents an analysis of the recorded samples from Demuryan's collection by region and chronology, structural characteristics of the recently discovered samples, etc.

The scholarly apparatus of the monograph deserves special attention with its precise references to the sources, detailed additions and explanations to the main material provided in footnotes to the text, a voluminous list of used multi-genre literature (unpublished archival materials, musical literature, ethnographic records, monographs, articles, periodicals, dictionaries). The main text of the monograph is supplemented by Appendices, consisting of samples of Armenian folk songs (peasant and urban) notated by Demuryan, as well as photographs from the musician's personal archive. The high printing quality of the monograph, its attractive design (by V. Poghosyan) and the presentable, almost typo-free text (by L. Harutyunyan, editor) also deserve attention and praise. The monograph was published by the well-known Yerevan Amrots Group publishing house, awarded Gegharvest republican prize, along with other international prizes (the founder and long-time director of the publishing house V. Khachatryan). Nune Atanasyan's monograph is a significant contribution to Armenian musicology. At the same time, it is an expression of deep respect and appreciation for Stepan Demuryan - musician, personality, citizen, and patriot, for his activities and memory.

**ՕԼՅԱ ՅՈՒՐԻԿԻ  
ՆՈՒՐԻՋԱՆՅԱՆ**

**Երաժշտագետ, արվեստագիտության թեկնածու,  
Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի դոցենտ**  
E-mail: nurijanyanolya@gmail.com

**«ՕՐՓԵՈՍ ԵՎ ԷՎՐԻԴԻԿԵ» - Ն  
ԿՈՆՍԵՐՎԱՏՈՐԻԱՅԻՆ**

«Պետք էր իսկական խիզախություն և խորը համոզմունք, որ գեղեցիկը՝ գեղեցիկ է, որպեսզի չերկյուղել ունայն գլուխների կանխակալ կարծիքներից, հնապաշտների նախապաշարմունքներից, ովքեր տարբեր կողմերից ըմբոստանում էին այսքան խիզախ փորձի դեմ... Ավելին սահմանափակ միջոցներով պետք էր հասնել ճշգրիտ, ոգեշունչ, կենդանի կատարմանը ...»

**Հեկտոր Բեռլիոզ «Գլուկի «Օրփեոս»-ը  
Լիրիկական թատրոնում», 1862 թ, Փարիզ**

Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի 100-ամյակին ընդառաջ Ղազարոս Սարյանի անվան օպերային ստուդիան նվաճեց ամենահամարձակ ու առաջին հայացքից անիրականանալի թվացող բարձունք՝ ուսումնական ու ժամանակակից կատարողական, ստեղծագործական ուժերով ներկայացնել ամբողջական երաժշտաթատերական բեմադրություն, որը դարձավ մեր այսօրվա կյանքի մշակութային վճռական իրադարձությունը...

Հեկտոր Բեռլիոզը «Օրփեոս և Էվրիդիկե» օպերան բնորոշել էր որպես «թատերական մեծագույն երաժշտության հրաշք ու Գլյուկի վեհ երկ», որի Երևանյան բեմերը կայացավ 2021 թվականի հուլիսի 16, 17, 19 և 20-ին Ղ. Սարյանի անվան օպերային ստուդիայի (գեղարվեստական ղեկավար՝ Հասմիկ Պապյան) և Հայաստանի Ազգային ֆիլհարմոնիկ նվագախմբի (գեղարվեստական ղեկավար և գլխավոր դիրիժոր Էդուարդ Թովչյան) ստեղծագործական համագործակցությամբ: Հայաստան էին հրավիրվել դիրիժոր Սուրեն Շահիջանյանը (Ֆրանսիա), ռեժիսոր Վոսա Կարապետյանը (Ֆրանսիա), նկարիչ Տիգրան Ջիթոցյանը (ԱՄՆ), նախագծին միացել էր խորեոգրաֆ Արման Բալմանուկյանը:

Բեմելու չորս օրերի ընթացքում դիրիժորական երկու մեկնաբանումը, որն սկսվեց Էդուարդ Թովչյանի մուտքով (առաջին և չորրորդ օրերին) գնում էր Գլյուկին ու մինչդասական բնորոշվող ժամանակին աստիճանաբար մոտենալու ուղով: Է. Թովչյանի մեկնաբանմամբ շեշտվում էին հոգեբանական դրամայի գծերը՝ առաջին

պլան բերելով լեզենդի եղերեգական ողբն ու նուրբ ընդգծված զսպվածությունը: Սուրեն Շահիջանյանի ընթերցմամբ (երկրորդ և երրորդ օրեր) հընչում էր այուժե-ի կենսական ջերմությունը, բաբախող լարումը: Թե՛ գործիքային, թե՛ վոկալ համարներում շեշտվում էին ըստ իրավիճակների զարգացող զգացմունքներն ու կրքերը զուգորդվող թեմաներով: Հիշենք, լիբրետոիստ Ռանիերի դե Կալցարիջի հետ Գլյուկն արիաներն անվանում էր արիա-գործողություններ (*d'azione*): Ունկնդրի ուշադրությունը Ս. Շահիջանյանը բեռնում է օպերային մեծ ռեֆորմատորի երաժշտության անվրեպությունն առավել շատ մարմնավորող արտահայտչամիջոցի՝ ռիթմի վրա: Հեռացող բարրկոյի և վաղ կլասիցիզմի այս գլուխգործոցը մի քանի դար ապշեցնում է իր հզոր ոճով ու միաժամանակ խստությամբ: Այն զուսպ, կենտրոնացած ողբ է, որտեղ հաղթում է մարդկային զգացմունքի ուժը և Երևանյան պրեմիերայում այդ ամենի երաժշտական բացառիկ խորհրդանշիչը դարձավ երկրորդ գործողությունում Ելիսեյան դաշտերում հնչող թախծող Էվրիդիկեի մտորումներն արտահայտող մեղեդի-մնջախաղի տեսարանը, այստեղ բալետային ու մենակատարային փոխյուսված մեկնաբանման մեջ չորս օրում քառակի անգամ դահլիճի սիրտը շուտ բերեցին Ազգային ֆիլհարմոնիկ նվագախմբի առաջին ֆլեյտահար Նարեկ Ավագյանի մենակատարումն ու պարող Օրփեոսի ու Էվրիդիկեի «երգող» աղաչոն:

Բարրկո-կլասիցիզմի եզրագծին կանգնած հսկայի՝ Քրիստոֆ Վիլբալդ Գլյուկի օպերա-ողբերգությունը կոնսերվատորիական բեմին ներկայացավ վիեննական, ֆրանսիական, **Ricordi** հրատարակչության տարբերակների միասնությամբ՝ ստեղծելով ինքնատիպ՝ երևանյան խմբագրություն: Ինչպես նշված է Լիլիթ Բլեյանի աշխատասիրությամբ հայալեզու թարգմանված լիբրետո-ուղեցույցում, ռեժիսորական լուծում է ստացել առաջին գործողությունում Օրփեոսի երազում ստվերի ձևով Էվրիդիկեի մուտքը և երրորդ գործողությունում ներառված Գլյուկի «*Die Sommernacht*» երգը (Ամռանի դերակատարմամբ):

Մեներգիչների, երգչախմբի ու բալետային խմբի պատանեկությունը թարմության նոտա է հաղորդում ամբողջ ներկայացմանը, որտեղ միգուցե որոշիչ է ռեժիսորի՝ 23-ամյա Վոսա Կարապետյանի ջանքերն ու ջինջ խառնվածքը: Վերջինս կարևորում է լուսավոր Օրփեո-

Ղ. ՍԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԵՊԿ ՕՊԵՐԱՅԻՆ ՄՏՈՒԳՐԱՅԻՆ ԲԵՄԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ-ԵՐԱՇՅՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ



Տեսարաններ Ք. Վ. Գլյուկի «Օրփեոս և Էվրիդիկե» օպերայից

սի՝ կորստից հետո, խավարի մեջ խորտակված մտորումները՝ մարդկանց աշխարհ, դժոխք, դրախտ հանգրվաններով: Ռեժիսորը նշում է, որ սիրելի Էվրիդիկեին կորցնելուց հետո աստվածների երգչի կյանքն ու հոգին մթնել է. նա չի տեսնում երկրային աշխարհը, Էվրիդիկեն տարել է իր լույսը... մինչև կգա գթության քաղցր պահը: Ք. Վ. Գլյուկի «Օրփեոս»-ը մեծ ու շքեղ տեսարանների կոթող է, հետևաբար պահանջում է մեծ տարածություն, ձգտում է վեհ ու շքեղ տեսարանների, որտեղ այսօրվա տրամադրության մեջ լուծում է ստացել ներկայացման բեմանկարչությունը:

Բեմադրության ղեկորատիվ ձևավորման գլխավոր արտահայտչաձևը երկհարկանի պոլիկարբոնատային կիրառմամբ կուլիսների ստացվող բեկված կիսադեմ սավերների պատկերային լայնմոտիվն է: Այն ամբողջ բեմադրության ընթացքում խիստ ու միաժամանակ եթերային մի «կտավ» էր հիշեցնում, որի վրա «շնչավորվում էին» Տիգրան Զիթողյանի հեղինակած տեսապատկերները: Տարիներ առաջ ժիր հրաշամանուկ նկարիչ ու այսօր սեփական, ճանաչելի ձեռագիր ունեցող արվեստագետ Զիթողյանի համար այս օպերան բեմանկարչական առաջին աշխատանքն էր, որտեղ ստեղծված էր տեսաշարային երկու առանցքային, հակադիր լուծում: Առաջինի դեպքում նա, ասես իր հուշե-

րի, մանկության շրջանի նկարչական անցյալի մեջ է. պահպանվել են հայրենիքի տաք գույները՝ մտաբերելով իր կյանքի վաղ ստեղծագործական շրջանի աշխատանքների գունային աշխարհը: Երկրորդում՝ այսօրվա Տիգրան Զիթողյանի վրձնին հատուկ՝ սև - սպիտակի համադրությամբ լուծված պարողների իմպրովիզացիայի սավառնող տեսաշարն է, ի դեպ, կարող ենք նշել, որ գունային այդպիսի սեղմ, չափավոր լուծմամբ նկարիչն արձագանքում է երաժիշտ Գլյուկի արվեստին հատուկ պարզ, բնական սկզբունքներին: «Օրփեոս և Էվրիդիկե»-ի բեմադրությունը սկսվում է Տիգրան Զիթողյանի ինքնատիպ կտավ-նախաբանով (ցանց-վարագուրի վրա նախագծվում է առաջին տեսապատկերը)... Այն «հնչում է» տեսախցիկի վեր բարձրացող հայացքով, որի կենտրոնում նկարչի աշխարհի համար առանցքային էակն է՝ կինը, այս դեպքում՝ երանելի Էվրիդիկեն, իսկ հաջորդաբար՝ երևում են խաղաղ ծովը, տաք ավազը, շարժում ստեղծող եղեգները՝ կերպավորելով գունային ու ֆակտուրային բնագիծ-պատկերներից կազմված մի կտավ: Նման սահմանանիշ է ուրվագծում նաև Գլյուկի երաժշտությունը, որտեղ հանդիպում են ու միայն բարձր թռիչքից են երևում բարրոկո - ռոկոկոկո-կլասիցիզմ գեղարվեստական ժամանակների «իզմ»-երը: Տիգրան Զիթողյանի բեմանկարչական

տեսապատկերի մյուս խմբի հերոսը Օրփեոսն է՝ չորս կուլիս-պատերին հայտնված իր մեկ կամ մի քանի ստվերով՝ բեմական մենապարհն զուգահեռ դառնալով շարժման, թռիչքի ու անվերջ մտորումի վիզուալ զուգահեռ խորհրդանիշ, իսկ գեղարվեստական ու տեխնիկական առումներով ավելի բարձրացնելով ու արդիականացնելով անտիկ թեմայով ողբերգական բալետի արտահայտչաձևը:

Բալետային բեմադրիչ Արման Բալմանուկյանին ու իր գեղարվեստական ղեկավարությամբ գործող «Բալմանուկյան պարային նախագծի» արտիստներին տեսնելով, պետք է բարձրաձայնել՝ օրհնվի այն պահը, երբ ԵՊԿ ռեկտոր Սոնա Հովհաննիսյանի վճռական առաջարկով մեծանուն երգչուհի ու եզակի հայուհի Հասմիկ Պապյանը համաձայնեց լինել Օպերային ստուդիայի գեղարվեստական ղեկավարը, ով հրավիրեց կառավարիչ ու օպերային երգիչ, այժմ արդեն օպերային ստուդիայի տնօրեն Հայկ Վարդանյանին, ով միանգամից նկատեց խորեոգրաֆիկ խմբի օժտվածությունը՝ փորձերի հարթակ տրամադրելով ապագա վերակազմվող բեմում և ...ավելին, օրհնվի այն ժամանակը, երբ 1774 թվականին ծագումով ավստրիացի Ֆրանսիայի թագուհի Մարիա Անտուանետան իր հայրենակցին՝ Գլյուկին աջակցեց հասնել Փարիզ և հատուկ ֆրանսիական բեմի համար ծնվեցին «Օրփեոս և Էվրիդիկե» օպերայի նոր հատվածները՝ Ելիսեյան դաշտերում մենանվագ ֆլեյտայի մեղեդի-պանտոմիմը և մի քանի ծավալուն բալետային համարներ, որոնց արտահայտիչ ուժն ու նրբագեղությունը «Բալմանուկյան պարային նախագիծը» փոխանցեց երևանյան բեմելի չորս օրվա ընթացքում՝ ավելի ու ավելի, օրեցօր: Բալետի արտիստները պարտիտուրն էին պատկերում, անէանում ու շատերին արցունքով թրջված ժպիտ բերում հենց հաղորդած խորեոգրաֆիկ ընթացքամբ: Ինչպիսի նազելիությամբ են զգացել, լսել, բեմադրել հիանալի անտիկ պոեմն ու հանճարեղ Գլյուկի երաժշտությունը: Նրանց բեմադրության առանցքը վեհությունն է, որը սիրո իդեալ է, այն ամբողջությամբ երկնային գեղեցկություն է, քնքշություն: Բալետ-մնջախաղի յուրաքանչյուր դրվագն օդ ու տարածություն բորբոքեց, թևերը լայն բացած՝ բարձր թռիչք ու լայն թափ տվեց բեմադրությանն ու ամբողջ օպերային: «Օրփեոս և Էվրիդիկե»-ի երաժշտական ենթատեքստը լրացվեց, հատկապես, նրանց մասնակցության բեմական իրադարձություններով՝ հաստատելով Ռոմեն Ռոլանի այն հանճարեղ գնահատականը, որ այստեղ երաժշտությունն անցավ գործողության:

Օպերային ռեֆորմատոր Գլյուկը թատերական երգչախմբի երգիչներից բարձր կատարողական պրոֆեսիոնալիզմ է պահանջում, իսկ «Օրփեոս»-ում ստիպում է երգչախմբին շարժվել, տարափոխվել՝ ստանալով ամենատարբեր կերպար-գույներ (սգացող մարդիկ, ուրվականներ ու ֆուրիաներ, Ելիսեյան դաշտերի երկնային հոգիներ, ցնձացող պալատականներ): Վռամ Կարապետյանի բեմադրությամբ դրամատիկական ամբողջականության համար երգչախումբը հնչում է բեմի ստեղծած բազմաստիճան տեսանելի ու ծածուկ հարթակներից, խմբերգային տեսարանների ցեզուրայնությունը

հնարավորություն տվեց միացնել պարային բաղադրիչը (հատկապես՝ դժոխքի տեսարանում): Խմբավար Գալանե Սահակյանի ղեկավարությամբ ներկայացած ԵՊԿ «Կոմիտաս» ուսումնական երգչախմբի մեկնաբանման մեջ կարևորվում էին բազմաձև խմբերգերի համայնապատկերի վեհ ու հանդիսավոր կերպարները, իսկ հոմոֆոն-հարմոնիկ, գլխավորապես ակորդային հյուսվածքի վրա կառուցված պարտիտուրում շատ համոզիչ էր Գլյուկի խմբերգերին հատուկ ընդգծված խոշոր կանտիլենան:

Երկրորդ գործողությունն օպերայի սիմֆոնիկականացման բարձրակետն է՝ դժոխքի ու դրախտի հակադրությունն ու հաջորդականությունն է: Այն բալետային ու ռեժիսորական լուծումների կենտրոնն է: Եթե առաջին գործողությունում գլխավոր հերոսի հետ փոխազդեցությունը «աստիճանակերպ» ղեկորացիայից հնչող երգչախումբն է, ապա երկրորդում՝ ստվերները ոչ միայն ձայնով, այլ նաև պարով են դիմադրում Օրփեոսին՝ ու այստեղ նվագախումբը դիրիժորական խիստ անհատական մեկնաբանմամբ ստանում է զգացմունքի, էմոցիայի, դրվագի կոնկրետ ենթատեքստի ու պրեկլյասիցիզմի ոճի նյարդը հաղորդելու հրաշալի հարթակ: Այստեղ է, որ խորեոգրաֆը լեզենդի գեղարվեստական չափազանց համոզիչ ընթերցմամբ նվագախումբն ամբողջությամբ ենթարկում է օպերային լիբրետտոյի դրամատուրգիական զարգացմանը: Պարը փոխակերպվում է մնջախաղի, որով և պարը դառնում է բալետային թատրոն: Գլյուկի երաժշտությունը հնարավորություն է տալիս մենակատարներին արտահայտվել ճշմարիտ մանուալ տեխնիկայով ու միմիկայով:

Հայտնի է, որ Գլյուկը հերոսներին մեկնաբանում է որպես հզոր ներքին կամային լարումով համակված անհատներ, այլ ոչ արտաքին ժանրային ֆիգուրներ: Արդյունքում ԵՊԿ օպերային ստուդիայի «Օրփեոս և Էվրիդիկե» ներկայացման երկու կազմի արտիստները դառնում են միևնույն կերպարի զգացմունքային երանգների մարմնացումներ, որոնք իրագործվում են տարբեր աստիճաններով՝ կախված մեներգչի սեփական ներաշխարհի հարստությունից:

Նեկտոր Բեռլիոզը գրել է, որ Օրփեոսն այն դերերգերից, որոնց մարմնավորումը չի ընդունում ոչ մի թերի, խղճուկ բան: «Կերպարն անձնավորելու համար անհրաժեշտ է երաժշտության խորն իմացություն, կանտիլենայի արվեստի տիրապետում, պարզ ու խիստ ոճի լրիվ տիրապետում, ուժեղ ու ազնվաբարո ձայն, զգացմունքի խորություն, արտահայտիչ միմիկա, ժեստի գեղեցկություն ու բնականություն, վերջապես Գլյուկի երկի գերազանց ըմբռնում ու իմաստավորված սեր» (1. էջ 236-237): Այսպիսի համադրությունն ամբողջությամբ ընկալելի էր կոնսերվատորիայի շրջանավարտ ու հատուկ նախագծի համար հրավիրված մեներգչուհի Սոֆյա Թումանյանի Օրփեոսի կերպարում: Նրա համար Էվրիդիկեի կորուստը մարդկային ապրումի ճշմարտությունն ուներ, Սոֆյա-Օրփեոսը գուսպ, արքայական, տղամարդկային կեցվածք է որդեգրել և սկզբից սարսափեցնող, հետո՝ աստիճանաբար փափկող ֆուրիաների խմբերգի տեսարանում առավել գորեղ էր նրա

Օրփեոսի հնազանդեցնող երգեցողությունը:

Տիգրան Քախվեջյանի Օրփեոսի մեկնաբանման մեջ առանձնանում էին սիրտ պատռող աղաչանքները, իսկ թավջութի ձայնի ու արական արտաքինով կերպարի համադրությամբ ծնված բնականությունն, անշուշտ, պետք է լրացվեր մարմնով խոսելու հմտությամբ:

Հեղինե Խաչատրյանն ու Լիլիթ Դավթյանը Էվրիդիկե կերպարի տարբերվող ընթերցում-խառնվածքներ են ստեղծել: Հեղինե Խաչատրյանի Էվրիդիկեն կամային դիցուհու մեկնաբանում էր ստանում, հիշեցնելով ռոմանտիկական օպերաների կերպարները ու ցույց տալով այն հաջորդակալությունը, որ Գլյուկի օպերային արվեստից գնում է դեպի XIX դար: Էվրիդիկեի դերը Հեղինե Խաչատրյանն անձնավորում էր հաստատակամ արտաքինով, իսկ դետալներում՝ կենտրոնացումը գնում էր դեպի վոկալ: Կարևոր է, որ ջերմություն, հուզում, շարժում հաղորդելու մեջ արտահայտումն ու ապրումը միավորվեն պարզության ջատագով Գլյուկի օպերայում:

Լիլիթ Դավթյանի Էվրիդիկեի կերպարը լուսավորում էր բնությամբ պարզ և ստացած, ունկնդրի սրտերը գերող, արտաքինն՝ արտիստական բնականությամբ: Էվրիդիկեն այս դեպքում ներդաշնակ էր Լիլիթ Դավթյան երգչուհու գողտրիկ խառնվածքին, բացի այդ նա ամբողջությամբ փոխանցում էր ռեժիսորական լուծումները և թատերական գործողությունն ապրում դարձնում, որը հատկապես ցայտուն էր երրորդ գործողությունում: Ուսանող երգչուհին գտել էր Օրփեոսի հետ սրտով խոսելու արվեստը և զգացում ու ճշմարտություն էր դնում այնտեղ, որտեղ պերճախոսություն կար:

Գեղեցկության կայսրությանը ծառայող երկու Ամոնները՝ երգչուհիներ Վարդուհի Թորոյանը և Սիրանուշ Օվսիյանը, ներկայացան կերպարի երանգային ու խառնվածքային տարրեր մեկնաբանությամբ. Սիրանուշ Օվսիյանն իր Ամոնին մեկնաբանում է խիզախ ու

պինդ կեցվածքով, իսկ Վարդուհի Թորոյանի դեպքում կերպարը հաղորդվում է սրանչելի ճշմարտությամբ: Ինչ հանձարեղ է գրել Բեռլիոզը, թե բավական չէ տիրապետել տաղանդի, որպեսզի ճշմարիտ արտահայտել Գլյուկի կանանց... այստեղ պետք է ունենալ բարձր հոգևոր հատկանիշներ, ինչպիսին են սիրտ, ձայն, կերպար ու կեցվածք, որ առանց չափազանցնելու ասել՝ այդ դերերը, բացի գեղեցկությունից, պահանջում են... հանձարեղություն:

Մասնագիտական ու մարդկային բացառիկ առաքինության մթնոլորտում ծնված այս բեմադրությունն Օպերային ստուդիայի նորագույն տարեգրության կարևոր մուտքն է, իսկ վարչական ու ստեղծագործական թիմն արդեն շարունակում է իր ճանապարհը դեպի նոր երաժշտաթատերական հանգրվաններ՝ սրտում ու սեպտեմբերի խաղացանկում պահելով Քրիստոֆ Վիլիբալդ Գլյուկի «Օրփեոս և Էվրիդիկե»-ն:

«Եթե արվեստագետն ստեղծել է գործ, որը բոլոր ժամանակներում ունակ է նուրբ ընկալմամբ ու մտքի մշակույթով առանձնացող մարդկանց հայտնի մասի սրտերում ծնել վեհ զգացմունքներ, շատ գեղեցիկ կլրքեր, այդպիսի արվեստագետը հանձար է և հիասքանչըն ստեղծելու համար արժանի է փառքի: Այդպիսին Գլյուկն էր» (1. էջ 236-237):

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

- 1. Берлиоз Г., “Орфей” Глюка в лирическом театре., Избранные статьи., М., 1956. Berlioz G., “Orfej” Glyuka v liricheskom teatre., Izbrannye stati., М., 1956.

**Բանալի քառեր.** Գլյուկ, Օրփեոս և Էվրիդիկե, Արման Բալմանուկյան, կոնսերվատորիա 100-ամյակ, Ղազարոս Սարյանի անվան օպերային ստուդիա, Հեկտոր Բեռլիոզ, Սուրեն Շահիջանյան, Էդուարդ Թոփչյան:

**Ключевые слова:** Глюк, Орфей и Эвридика, Арман Балманукян, 100-летие консерватории, оперная студия им. Газароса Сарьяна, Гектор Берлиоз, Сурен Шахиджанян, Эдуард Топчян.

**Keywords:** Gluck, Orpheus and Eurydice, Arman Balmanukyan, Ghazaros Saryan Opera Studio, 100<sup>th</sup> Anniversary of YSC, Hector Berlioz, Suren Shahijanyan, Eduard Topchyan.

**Տեղեկություններ հեղինակի մասին.** ՆՈՒՐԻՋԱՆՅԱՆ ՕԼՅԱ ՅՈՒՐԻԿԻ (ծ. 21.04.1978, Երևան), երաժշտագետ, արվեստագիտ. թեկն. (2011): Ավարտել է Երևանի Պ. Չայկովսկու անվ. ՄՄԵԴ-ի տեսության բաժինը (1996), Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիայի երաժշտագիտության բաժինը (2001, դեկավար՝ Ջ. Տեր-Ղազարյան), նույն ԲՈՒՀ-ի ասպիրանտուրան (2004, գիտ. դեկավար՝ Ա. Արևշատյան): Աշխատել է Երևանի Պ. Չայկովսկու անվ ՄՄԵԴ-ում, վարել է Երաժշտության տեսության բաժնի առարկաները (2001-2005), 2001-ից աշխատում է ԵՊԿ Չայնադարանում, Գրադարանում: 2004-ից ԵՊԿ Երաժշտության պատմության ամբիոնի դասախոս է, կարդում է «Արտասահմանյան երաժշտության պատմություն», «Վոկալ արվեստի պատմություն», «Հայ վոկալ արվեստի պատմություն» դասընթացները: Ավարտել է Հենուստա և Ռադիոհաղորդավարների դպրոցը և ձեռք է բերել հաղորդավարի մասնագիտություն, դասընթացի դեկավար՝ Սուսաննա Ալեքսանյան (2006): 2006-2019 թթ. աշխատել է դասական երաժշտության «Վեմ» ռադիոկայանում (2008-2019թթ.՝ երաժշտական խմբագիր), վարել է «Հայ կոմպոզիտորներ և կատարողներ» հեղինակային հաղորդաշարը, աշխատել է ուղիղ եթերում (2014-2018 թթ.): Անցել է “Deutsche Welle” - Akademie-ի կազմակերպած «Ռադիո-հարցազրույց» թեմայով մարզումները (2011): Գիտական հետաքրքրությունների ոլորտը ներառում են հայ երաժշտության պատմությունը և արևմտաեվրոպական երաժշտությանն առնչվող հարցերը: Գիտական գեկուցումներով մասնակցել է հանրապետական և միջազգային գիտաժողովներում: 2019թ-ից Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի գիտական քարտուղարն է:

**Сведения об авторе:** ОЛЯ ЮРЬЕВНА НУРИДЖАНЫАН (род. 21 апреля 1978, Ереван) музыковед, кандидат искусствоведения (2011). Окончила музыковедческое отделение ЕГК им. Комитаса (2001, рук. З. Тер-Газарян), аспирантуру ЕГК (2004, научный рук. А.Аревшатян). Работала: в ереванской Специальной музыкальной школе им. Чайковского преподавателем музыкально-теоретических предметов (2001-2005), в кабинете звукозаписи, библиотеке ЕГК (с 2001). С 2004-го года преподаватель кафедры Истории музыки ЕГК. Ведет курсы “История зарубежной музыки”, “История вокального искусства”, “История армянского вокального искусства”. Окончила Школу теле-радиоведущих по специальности ведущая (руководитель курса Сусанна Алексанян, 2006). С 2016-2019 гг. Работала на радиостанции “ВЭМ” (2008-2019 гг., музыкальный редактор), вела авторскую радиопередачу “Армянские композиторы и исполнители”, работала в прямом эфире (с 2014-го). Прошла тренинг “Радио-интервью”, организованный «Deutsche Welle» - Akademie (2011). Сфера научных интересов – вопросы, связанные с историей армянской и западноевропейской музыки. Участвовала в республиканских и международных конференциях. С 2019-го года является ученым секретарем Ученого совета ЕГК.

**Information about the author:** OLYA YURI NURIJANYAN (b. in 1978 in Yerevan) is musicologist, has PhD of Arts (2011). She graduated from the Theoretical Department at the Yerevan Tchaikovsky Special Music School (1996). Graduated from the Department of Musicology at the Yerevan State Komitas Conservatory (2001, research supervisor Z. Ter-Ghazaryan), and completed her post-graduate studies at the same conservatory (2004, research supervisor A. Arevshatyan). In 2001-2005 she was teaching music theory at the Tchaikovsky Special Music School in Yerevan. Since 2001, she is working at the Sound Archive and the Library of the YSC. Since 2004 she is the lecturer at the Department of Music History at the YSC. She teaches courses on History of Foreign Music, History of Vocal Arts, and History of Armenian Vocal Arts. She graduated from the School of TV and Radio Presenters, majoring in Presenters (course instructor Susanna Alexanyan, 2006). In 2016-2019, she worked at VEM radio station (2008-2019, music editor), hosted the authored program "Armenian Composers and Performers" as well as worked on the live broadcast (since 2014). She completed a training course on radio interviewing, organized by Deutsche Welle Akademie (2011). The field of her research interests is the history of Armenian and Western European music. Olya Nurijanyan has participated in republic and international conferences. Since 2019 she is the Academic Secretary of the Academic Council of the Yerevan State Komitas Conservatory.

## Резюме

Музыковед, кандидат искусствоведения **Оля Юрьевна Нуриджанян**. – “**Орфей и Эвридика**”.

В честь славного 100-летнего юбилея ЕГК Оперная студия им. Л. Сарьяна впервые в Армении представила оперу К. В. Глюка “Орфей и Эвридика”. Премьерные спектакли состоялись 16, 17, 19 и 20 июля 2021 года. Для участия в постановке по инициативе художественного руководителя оперной студии Асмик Папян были приглашены как отечественные исполнители, так и исполнители-армяне, проживающие за границей. Для осуществления проекта были приглашены Армянский национальный филармонический оркестр и “Танцевальный проект Балманукян”. В спектаклях, подготовленных двумя составами, приняли участие хор и певцы-солисты (студенты и выпускники) ЕГК.

## Summary

Musicologist, PhD of Art, Docent of YSC **Olya Yuri Nurijanyan**. - “**Orpheus and Eurydice**”.

Honoring the glorious 100<sup>th</sup> anniversary of the Yerevan State Conservatory, the Lazar Saryan Opera Studio presents for the first time in Armenia Orpheus and Eurydice by C. W. Gluck. The premiere performances were held on July 16, 17, 19, and 20, 2021. Hasmik Papyan, Artistic Director of the Opera Studio, had invited both singers from Armenia and Armenians living abroad to take part in the production. The Armenian National Philharmonic Orchestra and Balmanukyan Dance Project were invited to collaborate on the project. Two casts took part in the performances, produced by the choir and soloists (students and graduates) of the Yerevan State Conservatory.



«Ռոստամ և Ջոհրաբ»-ի հիմքը «Շահնամե»-ի ամենահայտնի ողբերգական պատումներից է, որտեղ առկա է առասպելական մտածողության շերտերում ձևավորված արխետիպային մոտիվներից մեկը՝ հոր և որդու ճակատագրական հանդիպումը և որդու ողբերգական մահը: Այն մոտիվին ներհյուսված է նաև դյուցազուն Ռոստամի և գեղեցկուհի Թեհմինեի սիրո պատմությունը:

«Ռոստամ և Ջոհրաբ» օպերայի վրա կոմպոզիտորն ընդմիջումներով, նոր խմբագրումներով ու նոր սկզբունքներով աշխատել է 2ուրջ 30 տարի և ավարտել 2004թ.: Այն բազմիցս բեմադրվել և համերգային կատարումներով հնչել է Թեհրանում և Երևանում: Նշենք, որ կոմպոզիտորի հետ ունեցած հարցազրույցի ժամանակ նա ընդգծել է նաև իր մեծ հետաքրքրությունը իրանական դյուցազնավեպի՝ «Շահնամե»-ի և դրա ավանդական կատարումների, մասնավորապես, Ջուրխանայի ավանդույթի նկատմամբ: «Սա Իրանում առաջին օպերան է, որը ես սկսել եմ գրել 1961 թվականին: Հիշում եմ, որ երիտասարդ տարիքում ավելի շատ էի տարված Ջուրխանայի արվեստով, Ջուրխանայի երաժշտությամբ և մշտապես հետևում էի Թեհրանի ռադիոյով հեռարձակվող Շիրխողայի կատարումներին Ջուրխանայում: Անչափ շատ էի ուզում լավ ընկալել և պատկերացնել ժողովրդական, ինչպես նաև իրանական հոգևոր երաժշտությունը, այդ պատճառով աստիճանաբար սկսեցի գրի առնել տարբեր մեղեդիներ ու ռիթմեր...»: Անշուշտ, դրանք իրենց անդրադարձն են գտել օպերայի երաժշտական լեզվի մեջ: Ժողովրդամասնագիտացված կատարողական ավանդույթի, տիպական մեղեդային ու ռիթմական կառույցների լուրջ ուսումնասիրության արդյունքում կուտակված գիտելիքը մեծապես օգնել են կոմպոզիտորին իր կարևոր նախաձեռնության՝ Իրանի առաջին օպերայի իրականացման գործում: Այս պարտավորեցնող և պատվաբեր գաղափարի նկատմամբ ունեցած խստապահանջ մասնագիտական մոտեցման վկայականն են օպերայի 8 մշակված և վերախմբագրված տարբերակները: Օրինակ՝ Ռոստամի և Ջոհրաբի կովի տեսարանում մի դեպքում հեղինակը կիրառել է միայն հարվածային գործիքի զարկերն ու «գուրխանայի» տիպական ռիթմական դարձվածքները, իսկ մեկ այլ խմբագրված տարբերակում օգտագործել է նաև ձայներ:

Օպերայի լիբրետտոյի հիմքում ընկած է Ֆիրդուսու «Շահնամեի» բանաստեղծական տեքստը: «Շահնամեի» երգվող հատվածներից, ինչպես նշել է հեղինակը, չկան ուղղակի մեջբերումներ. կերպարային ու բովանդակային արտահայտչականությունը պայմանավորված է իրանական ավանդական երաժշտության բնորոշ ինտոնացիոն, ռիթմական տարրերի կիրառությամբ:

Օպերան ունի 2 գործողություն՝ յուրաքանչյուրը բաղկացած 4 տեսարաններից: Մեզ չի հաջողվել ձեռք բերել այս օպերայի կլավիրը և մեր դիտարկումները հիմնականում հիմնված են օպերայի ձայնագրությունների և առանձին հրատարակված փոխադրությունների պատահիկների վրա: Օպերայի լիբրետտոն ծավալվում է էպիկական ոճով՝ ներկայացնելով դյուցազուն Ռոստամի

հերոսական արարքները, նրա համբավը, Ռոստամի և Թեհմինեի սիրո պատմությունը և ճակատագրական հանդիպումն իր որդու՝ Ջոհրաբի հետ ճակատամարտի դաշտում, որը ստեղծագործության վերջին և ամենադրամատիկ տեսարանն է: Այն ներկայացնում է գլխավոր հերոսների մենամարտը: Ջոհրաբն ուզում է իմանալ հակառակորդի անունը, սակայն անպատասխան է մնում: Կովի ավարտին Ռոստամին հաջողվում է տապալել Ջոհրաբին, որը մահվան գրկում ասում է. որ իր հայրը՝ Ռոստամը, վրեժխնդիր կլինի: Դաժան ճըշմարտությունը բացահայտվում է Ռոստամի համար և նա ողբում է որդու մահը: Լուրը հասնում է Ջոհրաբի մորը՝ Թեհմինեին, նա գալիս է մարտի դաշտ և, վշտին չդիմանալով, նույնպես մահանում է:

Օպերայի տարբերակներից բացի, Լ. Ճզնավորյանն ստեղծել է նաև «Ռոստամ և Ջոհրաբ» օպերայի 7 մասանի նվագախմբային Սյուիտը:

Ընդհանուր առմամբ, լսելով օպերայի ձայնագրությունը, կարելի է ասել, որ կոմպոզիտորի երաժշտական լեզուն օրգանապես միահյուս է իրանական ավանդական երաժշտությանը: Թեև իր իսկ հավաստմամբ, ուղղակի մեջբերումներ և փոխառություններ իրանական ժողովրդական, հոգևոր կամ ժողովրդապրոֆեսիոնալ երաժշտությունից չկան, այսուհանդերձ այն ներթմված է իրանական ազգային ելեկտրոնով: Հատկանշական է, որ օպերան սկսվում է հենց «Շահնամե»-ի առաջին տողով: Իրանական էպոսին բնորոշ չափը II վանկանի մութաքարիբն է, որը պահպանվում է ողջ պոեմի ընթացքում: Հեղինակը հիմնականում առաջնորդվել է I հնչյուն 1 վանկ սկզբունքով, ասես ընդօրինակելով Շահնամե-խվանի՝ Շահնամե ասացողի կատարողական ոճը (3. էջ 68-77) :

Օրինակ

The image displays a musical score for the opera 'Rostam and Sohrab'. It features a vocal line with lyrics in Armenian and English, and a piano accompaniment. The lyrics are: 'Be na-me kho-da van-de dja-no kha-rad, ka'. The score includes dynamic markings like 'p' and 'Eng. Hn.' and is numbered with '9' and '13'.

Երաժշտության հիմքում ընկած է ազգային պատմողական ավանդույթում հաստատված նաղդայի (պատմող, ասացող) ասերգային սկզբունքը: Ինչպես վկայում են գրավոր աղբյուրները, Իրանի պատմողական արվեստում առանձնանում են հստակ մասնագիտական

թեքում ունեցող կատարողներ: Եթե նաղդալ տերմինը կիրառվում է ասացողների նկատմամբ, որոնք հատուկ առողջանությանը են ներկայացնում էպիկական պատմությունները, ապա Շահնամեն ունի միայն իրեն հատուկ վարպետ-կատարող՝ Շահնամե-խվան, որ այդ էպիկական ժանրի կրողն ու պահպանողն է:

Օպերայի երաժշտաճական առանձնահատկությունները բնութագրելիս, բացի իրանական ազգային մեղեդային մտածողությունից, անհրաժեշտ է նշել նաև հայ դասական կոմպոզիտորական արվեստում ձևավորված ազգային մելոսի մեկնաբանություններն ու կառուցվածքային սկզբունքները. մասնավորապես, նկատի ունենք մոնոդիկ նմուշների հիմնական ռիթմա-ելեկտային (ինտոնացիոն) տարրերի տարբերակային ստեղծագործական զարգացումներն ու փոխակերպումները թեմատիկ նյութի շարադրման ընթացքում (5. էջ 27-49) : Մեղեդիական գծերի հիմքում ընկած են գերազանցապես հարմոնիկ, փոյուզիական ձայնակարգերին բնորոշ ելեկտային դարձվածքները, մաժոր-մինոր հարաբերակցությունները՝ հատկապես պարային բնույթի հատվածներում: Օպերայի առաջին գործողության գործիքային նախասնվագում՝ պրելյուդում գերիշխում են հարմոնիկ ձայնակարգի կամ դրա համարժեք իրանական չարգահի երկարաշունչ մեղեդային ծավալումները, որոնք մերթ ընդ մերթ փոխակերպվում են միևնույն ձայնակարգում ընթացող Շալախտ պարի տիպական մեղեդիական և ռիթմական դարձվածքների: Երաժշտությունը որոշակիորեն մտազուգորդվում է Արմեն Տիգրանյանի, Անուշե օպերայի հնչյունային ոլորտին և մեղեդու ծավալման սկզբունքներին: Օպերայի բազմաշերտ հյուսվածք-ներում զգալի դեր են կատարում նաև գործիքային օստինատոների ֆոնին հնչող մեներգիչների և երգչախմբի համատեղ ծավալում դրվագները՝ ստեղծելով հարուստ հնչողություն:

Օպերայի մեղեդային հենքի ու թեմատիկ նյութի զարգացման սկզբունքներն ընդհանուր առմամբ կարելի է դիտարկել որպես արևելյան դասական պրոֆեսիոնալիզմի դրսևորում՝ խարսխված ազգային երաժշտալեզվական միասնական կառուցվածքին:

Եթե «Ռոստամ և Ջոհրաբ» օպերայից որոշ հատվածներ հասանելի են նուսային փոխադրություններով, ապա «Սիմորդ» բալետի վերաբերյալ մեր նկատառումներն ամբողջությամբ հիմնված են ձայնագրությունների վրա:

«Սիմորդ» բալետի հիմքում նույնպես ընկած է իրանական առասպելական մոտիվներից մեկը՝ առաջին անգամ արտացոլված Ֆիրդուսու «Շահնամե»-ում: Բալետը Լ. Ճգնավորյանն սկսել է գրել 1961-ին: Այդ շրջանում կոմպոզիտորն առանձնապես տարված էր իրանական երաժշտական ֆոլկլորի ուսումնասիրությամբ, ինչպես նաև ազգային երաժշտական նվագարաններով, որոնք հավաքել և ներկայացրել էր իր կազմակերպած ցուցահանդեսում: Կոմպոզիտորի հետաքրքրությունը ազգային նվագարանների նկատմամբ

ցայտուն արտահայտություն է ստացել «Սիմորդ» բալետում: Այն գրվել է հատկապես ազգային նվագարանների անսամբլի համար և հիմնված է իրանական երաժշտության մեղեդային-ելեկտային և ռիթմական տարրերի վրա՝ որպես ավանդական պատումին համարժեք և հարազատ երաժշտարտահայտչական նկարագիր: Ազգային ինտոնացիայի արտահայտչականությունն ընդգծված է նաև որոշակի երաժշտառիթմական տարրերի կիրառությամբ: Այս երկում, կոմպոզիտորի վկայությամբ, իրանական ազգային գործիքներն առաջին անգամ ստացել են նվագախմբային պոլիֆոնիկ և կոնտրապունկտային հնչողություն\*:

Ստեղծագործությունը գրելիս, հեղինակը չի բավարարվել Ֆիրդուսու «Շահնամե»-ի տարբերակով: Կոմպոզիտորն օգտագործել է նաև գրական այլ աղբյուրներ, այդ թվում անվանի միստիկ բանաստեղծ, մտածող Աթթար Նիշապուրի (XII դ.) «Թռչունների գրոյցը» (Բոլբոլ-նամե) պոեմից, պարսկական զրադաշտական ու սուֆիական գրականությունից և այլն:

«Սիմորդ» բալետն առաջին անգամ բեմադրվել է Ռուդաքի համերգասրահում 1973-ին, ինչպես նաև ձայնագրվել է Արվեստի և մշակույթի նախարարության ստուդիայում, ապա ցուցադրվել նաև հեռուստատեսային էկրանավորմամբ: Բալետի տեսարանների համար ստեղծվել են շուրջ 30 բեմանկարներ, որոնց հեղինակը նկարչուհի, բանաստեղծուհի Սաֆա Մոյանին է: «Սիմորդ» բալետի հայերեն լիբրետտոն գրել է Լյուդվիգ Դուրյանը:

Լորիս Ճգնավորյանի այս երկը հաջողությամբ բեմադրվել է Լոնդոնում, Հոնգկոնգում, բազմաթիվ այլ քաղաքներում: 1983-ին ներկայացվել է նաև բալետային պոլիտր՝ փողային սեսայտետի, դաշնամուրի և կոնտրաբասի համար:

Բալետը կազմված է 12 պատկերավոր տեսարաններից՝ նվիրված սիրո փառաբանմանը և չարի կործանիչ ուժին: Ահրիմանը՝ սատանան սիրահարվում է գեղեցկուհի Փարիին, սակայն անպատասխան սիրուց խենթացած ոչնչացնում է նրան: Ահրիմանի երկատված կերպարում պայքարում են չար և բարի ուժերը: Իր կործանիչ ճանապարհին Ահրիմանը փորձում է ոչնչացնել նաև «Վարդի ու Սոխակի», «Թիթեռի ու ճրագի» ռոմանտիկ սիրերգը սիրո, որոնք Արևելքի բանաստեղծական ավանդույթում կայունացած այլաբանական մոտիվներից են: Այդ ավերիչ ուժի արդյունքում վարդը պատվում է փշերով ու սպանում սոխակին, իսկ կուրացած թիթեռն այրվում է կրակի լեզուներում: Ի վերջո, Ահրիմանը ճանաչում է իրական սիրո զգացմունքը, որի դեմ անգոր է որևէ չարություն գործել: Նա տեսնում է Փարիի տեսիլքը դրախտում և հասկանում, որ հավերժ կորցրել է իր սերը: Սրանով ամփոփվում են սիրո խոհերի, չարի ու բարու հավերժ պայքարի և կյանքի իմաստի որոնման տեսարանները:

\* Լորիս Ճգնավորյանի խոսքը ներառված է օպերայի սկավառակների հետ թողարկված ընդգրկուն գրքույկում (պարսկերեն), որը լույս է տեսել 2011 թ., հեղինակ և խմբագիր՝ դիփոմ-երաժշտագետ Ռ-ազմիլ Օհանյան:

\* Այդ մասին գրված է Լ.Ճգնավորյանի երկերի խոսակալականների ժողովածուին կցված գրքույկում:

«Գյուղացիների մահը» կոչվող իններորդ մասում Ահրիմանի տառապանքի արցունքները լցվում են աղբյուրի մեջ և թունավորում բոլոր գյուղացիներին: Ահրիմանը, տեղեկանալով, որ ինքն այդքան մարդկանց մահվան պատճառ է դարձել՝ որոշում է ինքնասպան լինել: «Կրակի պարը» կոչվող 11-րդ մասում խենթացած Ահրիմանն իր դիվային պարով հրդեհում է ամբողջ աշխարհը և կործանում բոլորին:

«Վերածնունդ մոխրից» եզրափակիչ տեսարանը բալետի խորհրդանշական ավարտն է: Այստեղ, կոմպոզիտորը ելնելով պարսկերենում («սիմորդ») բառի երկակի նշանակությունից, հնարամիտ լուծում է գտել. սիմորդը փյունիկն է՝ մեռնող և հարություն առնող թռչունը, որը բառացի նշանակում է նաև 30 թռչուն: Բալետի վերջին մասում մոխիրներից դուրս են ելնում հրդեհից փրկված 30 թռչունները և միավորվելով ընդունում են սիմորդի կերպարանքն ու թռչում դեպի լույս:

**ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

1. Ջանաբի Ա. Վ., Ֆիրդուսու «Շահնամե»-ի մարմնավորումներն Իրանի պրոֆեսիոնալ երաժշտարվեստում, //Երաժշտական Հայաստան, Եր., 2021թ.: Janabi A. V., Firdusu “Shahname”-i marmnavorumnern Irani profesional yerazhshtarvestum, //Yerazhshtakan Hayastan, Yer., 2021 th.
2. Երնջակյան Լ. Վ., Աշուղական սիրավեսպը Մերձավորարևելյան երաժշտական փոխառնությունների համատեքստում, Եր., Գիտություն, 2009 թ., էջ 64–66, նաև Ջանաբի Ա. Վ., «Շահնամե»-ի երաժշտականարողական ավանդույթը Ջուրխանայում, /Կանթեղ, Գիտական հոդվածների ժողովածու, Եր., 2016 թ., էջ 263–270: Yernjakyan L. V., Ashughakan siravep’ Merdzavorarevelyan yerazhshtakan pokharnchuthyunneri hamatextum, Yer., 2009 th., ejj 64–66., naev Janabi A. V., “Shahname”-i yerazhshtakataroghakan avanduyth’ Zurkhanayum, /Kanthegh, Gitakan hodvatsneri Zhoghovatsu, Yer., 2016 th., ejj263–270.

3. Ериджакян Л. В., О бытовании иранских эпических мотивов в Армении и музыкальной традиции исполнения “Шахнаме”. Тraditcii i sovremennost’, Voprosy arмянской музыки, книга 2., Ер., 1996, сс. 68–77: Yernjakyan L. V., O bytovanii iranskikh epicheskikh motivov v Armenii i muzykal’noj traditzii ispolneniya “Shakhname”. Traditzii i sovremennost’, Voprosy armyanskoj muzyki, kniga 2., Yer., 1996., ss. 68–77.
4. Երնջակյան Լ. Վ., Աշուղական ..... էջ 29–30: Yernjakyan L. V., Ashughan .....
5. Ջուրաբյան Ժ. Պ., Մոնոդիան հայ կոմպոզիտորների գործիքային ստեղծագործություններում, Եր., 2014 թ.: Zurabyan Zh. P., Monodian hay kompozitorneri gortsiqayin steghtsagortsuthyunnerum, Yer., 2014 th.

**Բանալի բառեր.** Իրան, Լորիս Շեքնավորյան, օպերա, բալետ, էպոս, Շահնամե, արևելյան ձայնակարգեր:

**Ключевые слова:** Иран, Лорис Чкнаворян, опера, балет, эпос, Шахнаме, Восточные лады.

**Keywords:** Iran, Loris Tjeknavorian, opera, ballet, Epic, Shahnameh, oriental modes.

**Տեղեկություններ հեղինակի մասին.** ԱՄՂԱՐ ՋԱՆԱԲԻ ՎԱՀԱԲ (ծ. 21.03.1984 թ., Իրան): Ավարտել է՝ 2010-ին օպերային երգեցողության բաժինը, (բակալավրականը և մագիստրոսականը՝ Վ. Ա. Հարությունյանի դասարան), 2011-2012 թթ. ԵՊԿ Կատարողական և ստեղծագործական բարձրագույն վարպետություն լրացուցիչ կրթության լրիվ դասընթացը, 2011-2014 թթ. ԵՊԿ հայցորդ՝ «Երաժշտությունը Ֆիրդուսու Շահնամեում» թեմայով, գիտական ղեկավար՝ արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր՝ Լիլիթ Երնջակյան: 2010-2013 թթ. հաճախել է Նոդար Անդրյաձեի (Վրաստան, Թիֆլիս) վարպետության դասերին: Աշխատել է՝ 2020-ից Թավրիզի իսլամական արվեստի պետական համալսարանում՝ որպես դասախոս (սոլֆեջո), 2020-ից՝ Փոլյան (Թեհրան) երաժշտական ինստիտուտի դասախոս (վոկալ, սոլֆեջո), 2016-ից առ այսօր՝ Վոկալ արվեստի («Հոնար» ավագ) մասնավոր ակադեմիայի տնօրեն և դասախոս, Քարաջ: Հեղինակ է՝ Երաժշտության դերը «Շահնամե»-ում, Իրանցի ուսանողների 1-ին միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Եր, ՀՀ-ում ԻԻՀ դեսպանատուն, 2011թ (պարսկերեն), Օպերայի ոսկեդարն Իտալիայում, Բելկանտո, /Երաժշտական արվեստ ամսագիր, Թեհրան, 2011 թ., N 11-12, Երաժշտությունը «Շահնամե»-ի նկարագրողումներում, /Երիտասարդ հայ արվեստաբանների գիտական տասներորդ մտաշրջանի նյութերի ժողովածու, Եր., Գիտություն, 2016 թ., էջ 239-248, «Շահնամեի» երաժշտականատարողական ավանդույթը Ջուրխանայում, /Կանթեղ գիտական հոդվածներ, N 2 (67), Եր., Ասողիկ, 2016, էջ 263-270, Music and musical instruments in Shahname, Der Pharmacia Lettre, 2017, 9 [8]:77-82 (Available online at www.scholarsresearchlibrary.com):

**Сведения об авторе:** АСХАР ДЖАНАБИ ВАХАБ (р. 1984, Иран). Окончил: подготовительные курсы отделения “Оперное пение” ЕГК (2004), магистратуру отделения “Оперное пение” (2010) вокально-теоретического факультета ЕГК, класс В. Арутюняна (2010); дополнительные высшие курсы исполнительского и творческого мастерства (2012). В 2011-2012 был соискателем ЕГК по теме «Музыка в поэме “Шахнаме” Фирдоуси» (научный руководитель – доктор искусствоведения Лилит Ернджакян). В 2010-2013 участвовал в мастер-классах Нодара Андгуладзе (Тбилиси, Грузия). С 2020 преподает сольфеджио в Государственном университете исламского искусства в Тевризе, а также ведет классы вокала и сольфеджио в Музыкальном институте Пульян (Тегеран). С 2016 года – директор и преподаватель в частной Академии вокального искусства «Хонаре Аваз» в Кередже. Составитель Сборника материалов Первой международной научно-исследовательской конференции иранских студентов «Роль музыки в поэме Шахнаме» (Ереван, Изд-во посольства ИРИ, 2011, на перс. яз). Автор статей: «Золотой век оперы в Италии, бельканто» в журнале “Музыкальное искусство”, Тегеран, 2011, № 11-12; “Музыка в иллюстрациях к поэме Шахнаме”, Сборник материалов Десятой научной сессии молодых армянских искусствоведов, Ереван, 2016, с.239-248; «Музыкально-исполнительская традиция поэмы “Шахнаме” в Зурханэ» Сб. научных статей /Кантех, №2 (67), Ереван, 2016, с. 263-270; 2016, с. 263-270; Music and Musical Instruments in Shahnameh, Der Pharmacia Lettre, 2017, 9 [8]:77-82 (www.scholarsresearchlibrary.com).

**Information about the author:** ASGHAR JANABI VAHAB (b. 1984, Iran). In 2003-2004 he studied at the preparatory courses of the Department of Opera Singing at the YSC, and in 2010 he graduated with a Master’s degree from the Department of Opera Singing at the YSC (class of V. Harutyunyan). In 2011-2012 he graduated from the Higher Courses in Performing Arts. In 2011-2012 he was a postgraduate student at the YSC researching “Music in Shahnameh poem by Ferdowsi” (Senior Adviser Lilit Yernjakyan, Doctor in Art Sciences). In 2010-2013 he participated in Master-classes by Nodar Andguladze (Tbilisi, Georgia). Since 2020, he is teaching solfeggio at the State University of Islamic Arts in Tevriz and singing, and solfeggio at the Pulian Music Institute (Tehran). Since 2016, he is a director and teacher at the private Academy of Vocal Art “Honare Avaz” in Keredzha. He compiled the proceedings of the First International Research Conference of Iranian Students “The Role of Music in Shahnameh” (Yerevan, Publishing House of the Iranian Embassy, 2011, in Persian). He is also the author of the following articles: “The Golden Age of Opera in Italy, Bel Canto” / “The Art of Music” magazine, Tehran, 2011, No. 11-12; “Music in Illustrations to Shahnameh” / Proceedings of the Tenth Research Session of Young Armenian Art Critics, Yer., 2016, pp. 239-248; “Music and Performing Tradition of “Shahnameh” in Zurkhane” / Kantekh Collection of Research Articles No. 2 (67), Yer., 2016, pp. 263-270; “Music and Musical Instruments in Shahnameh”, Der Pharmacia Lettre, 2017, 9 [8]: 77-82 (available at www.scholarsresearchlibrary.com).

## Резюме

Певец, соискатель Института Искусств НАН РА Асхар Джанаби Вахаб. - “Иранский эпос в произведениях Лориса Чкнаворяна: опера «Рустам и Сухраб» и балет «Симург»”.

Среди деятелей, сыгравших значительную роль в развитии иранского классического музыкального искусства Лорису Чкнаворяну отведено достойное место. Темы из иранского эпоса и народных сказаний нашли широкое отражение в его многожанровом творческом наследии. В статье представлены два широко масштабных произведения композитора – опера «Рустам и Сухраб» и балет «Симург», которые свидетельствуют о большом интересе Чкнаворяна к иранской национальной культуре, а также о его глубоких знаниях и оригинальных замыслах в этой области.

Мифические сказания национального эпоса - поэмы Фирдоуси «Шахнаме», обрели разнообразное жанровое воплощение в профессиональном музыкальном искусстве Ирана. «Рустам и Сухраб» стала первой оперой, созданной в Иране, в которой использованы мелодико-ритмические особенности, характерные для иранской народной, духовной и народно-профессиональной музыки. Композитор не использует прямых цитат, однако музыкальный материал развивается в русле национального музыкального мышления.

В балете «Симург» композитор включил в симфонический оркестр национальные музыкальные инструменты, тем самым обнаружив заложенный в них самобытный потенциал полифонического звучания.

Наблюдая за общими тенденциями в современной европейской музыке, Лорис Чкнаворян в рассматриваемых сочинениях, как и в других музыкально-сценических произведениях сохранил и развил традицию творческого обращения к особенностям национального музыкального искусства.

## Summary

Postgraduate Student Institute of Arts at the NAS RA Asghar Janabi Vahab. - “The Iranian Epic in the Works of Loris Tjeknavorian: Opera «Rostam and Sohrab» and «Ballet Simorgh»”.

Loris Tjeknavorian occupies a significant place among the artists who have played a considerable role in developing Iranian classical music. In his multi-genre artistic heritage, he widely reflected themes from the Iranian epic and folk legends. The article presents two large-scale works by the composer, the opera "Rustam and Sohrab" and the ballet "Simurgh," which testify to Tjeknavorian's great interest in Iranian national culture, as well as his deep knowledge and original concepts in that field.

The mythical tales of the national epic, the Shahnameh by Ferdowsi, have acquired a variety of genre embodiments in the professional music of Iran. Rustam and Sohrab was the first opera composed in Iran to use the melodic and rhythmic features characteristic of Iranian folk, religious and folk-professional music. The composer does not employ direct quotations. However, the musical material develops in line with national thinking.

In the ballet Simurgh, the composer included national musical instruments in the symphony orchestra, thereby discovering the unique potential for polyphonic sound inherent in them.

Following the general trends in contemporary European music, Loris Tjeknavorian in the examined works, as well as in his other music and stage works, preserved and developed the tradition of creative reference to specific features of national music.

# Խ մ ք ա գ ր ա կ ա ն ն ո թ մ ե ր ե ւ պ ա հ ա ն ջ ն ե ր

## ՆՄԲԳԲԱԿԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԷԹԻԿԱ

1. Խմբագրական և մասնագիտական էթիկան վերաբերում է խմբագրական գործարար հարաբերություններին, գլխավոր խմբագրի, ինչպես նաև հեղինակի ձեռագրի պատմական, գիտական արժեքը գնահատելու կանոններին, գրագողության հայտնաբերման մեթոդներին, որոնք կարգավորվում են համապատասխան էթիկայի չափանիշները:

### 2. Խմբագրության աշխատակիցների հետ հեղինակի փոխհարաբերությունների էթիկական չափանիշները

Յուրաքանչյուր խմբագիր պետք է՝

- հեղինակին վերաբերվի հարգանքով՝ խոսելով նրա հետ բացառապես բարյացակամ տոնով, նամակագրության կամ գրավոր տեքստերում օգտագործելով, բարեգուսպ, բարեկիրք արտահայտություններ.
- ձեռագրի բովանդակային կողմը դիտարկելիս, չպետք է սահմանափակվի քննադատական դիտողություններով, ներթափանցելով հեղինակի գաղափարների և իմանալով նրա մտադրությունը, միասին և նրա համաձայնությամբ պետք է ձևակերպվեն առանձին արտահայտություններ, ձևակերպումներ, վավերացումներ, փաստեր և հայտարարություններ.
- խմբագրի մեկնաբանությունների հետ հեղինակի անհամաձայնության դեպքում, ոչ թե հռչակի սեփական կարծիքը, այլ հեղինակին խելամիտ փաստարկներ բերելով, փորձի ապացուցել բերված մեկնաբանությունների ճշմարտացիությունը:

### 1. 2 Հեղինակի աշխատանքի գաղտնիությունը

Չի թույլատրվում՝

- նյութի հրատարակման նախապատրաստության մասին որևէ մեկին տեղեկացնել առանց հեղինակի համաձայնության
  - որևէ մեկին տեղեկացնել բացի հեղինակից, բացասական կարծիքի կամ գրախոսության բովանդակության մասին
  - հեղինակի նամակագրության բովանդակությունը բացահայտել:
- Բոլոր նյութերը պետք է ուղարկվեն խմբագրական էլ.փոստին՝ YerazhshakantHayastan@gmail.com կամ MusicalArmenia@gmail.com 0001, Երևան, Մարկ Գրիգորյան 2, 103 սենյակ.  
Յուրաքանչյուր էջի վրա հեղինակի (ների) ստորագրությամբ:

## ՆՈՐՄԵՐ ԵՎ ՊԱՇՏՆՋՆԵՐ

«Երաժշտական Հայաստան» միջազգային գիտական ամսագրում ներկայացվող հոդվածների

### 1. Հրատարակման ընդհանուր պահանջները

«Երաժշտական Հայաստան» գիտական միջազգային ամսագրում տպագրվող հոդվածներն ընդգրկում են 070 100 «Երաժշտական արվեստ» մասնագիտության ուսումնասիրությունների բոլոր բնագավառները, ինչպես նաև միջդիսցիպլինար մասնագիտացումներ, ինչպես նաև երաժշտության հետ առնչված:

Սույն պահանջները սահմանվում են ՀՀ ԲՈԿ որոշումների, «ԵՊԿ հրատարակչության» Կանոնակարգով, ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված կարգով: Հրատարակչությունում տեքստի առանձնացման համար օգտագործվում են շեղատառը (*italic*), ընդգծումը (underline) և թավատառը՝ չեն թույլատրվում: Ցրիվ շարվածքի համար չի թույլատրվում տառերը անջատելով (*space*) օգտագործումը:

Հայերեն տեքստերն ընդունվում են KDVin ծրագրի Arial LatArm, Dallak Time, Times LatArm նմանատիպ տառատեսակներով, միայն ոչ Unicode:

Փակագիծ նշանի համար ընդհանուր առմամբ ( ), իսկ մեջբերման դեպքում [ ] ներսում սովորական ( ): Չակերտների նշանի համար < >:

Ռուսերեն հոդվածներում, մեջբերումը՝ չակերտները՝ "", իսկ մեջբերման ներսում <>:

Ռուսերենում անջատման գիծ "тире" նշանի համար օգտագործվում են [Ctrl+Alt+միմուս] ստեղծների կոմբինացիա; "կարճ" անջատման գիծ "дефис" նշանի համար՝ [Ctrl+միմուս]– կոմբինացիա:

Ստեղծագործությունների անվանումները գրվում են սովորական տառատեսակով, մեծատառով (եթե ծրագրային է և չակերտներում), եթե անվանումը և ժանրը համընկնում է նույնպես: Ժանրերի անվանումները փոքրատառով: Միմիջոցակետի, կոմպոզիցիայի, կոմպոզիցիայի, սոնատների հերթական համարները գրվում են արարական թվերով գծիկով և վերջածանցով (օրինակ՝ 1-ին կամ 2-րդ Սոնատ) կամ տառերով:

Ստեղծագործության *op.* նշիկն չի առանձնացվում ստեղծագործության անվանումից ստորակետով (դաշնամուրի *C-dur* 2-րդ Կոնցերտ *op.29*):

Տոնալությունը գրվում է լատիներեն, սովորական տառատեսակով Times New Roman (*C-dur, g-moll*), հնչյունների անվանումները լատիներեն տառերով, շեղատառով (*h, G*).

Թվականները նշվում են արարական թվերով և վերջածանցը կամ թվականը և կետ (օրինակ՝ 1998-ին կամ 1998 թ.), տասնամյակները՝ արարական (90-ականներին), դարերը և հազարամյակները՝ հռոմեական (XX դար, II հազարամյակ).

Չի թույլատրվում հռոմեական թվերը նշելու համար ռուսերեն "X", "Y", "M", "D" տառերի օգտագործումը:

Տեքստում գրվում է մատենագիտական ցուցակի տվյալ աղբյուրի հերթական համարը, մատենագիտական ցուցակը տեղադրվում է հոդվածի վերջում այբբենական կամ հերթական կարգով, սկզբից տրվում է մայրենի լեզվով գրված հրատարակումները:

Տվյալներն անջատվում են ստորակետով՝ հայերենում, կետ և ստորակետով՝ ռուսերենում և այլ լեզուներում:

Գրականությունն արձանագրել հետևյալ հաջորդականությամբ՝ հեղինակը (ազգանվան, անվան և հայրանվան սկզբնատառերը), աշխատության անվանումը, հրատարակման տեղը, հրատարակչությունը, թվականը, էջերի ընդհանուր քանակը:

Ժողովածուի դեպքում՝ հեղինակի տվյալները, հոդվածի անվանումը, Ժողովածուի պայմանական նշանը / ամսագրի և թերթի դեպքում՝ երկու գծիկ // անվանումը տարբերվել, Ժողովածուի դեպքում՝ վերնագիրը, փակագծերում՝ կազմողը (կազմող ...), , հրատարակման տեղը, հրատարակչությունը, թվականը, էջերի ընդհանուր քանակը և տվյալ հոդվածի էջերը:

Գրականության վկայականները տեքստում տրվում է սկզբնաղբյուրի համարը, օգտագործած էջը կամ էջերը փոքրատառով (12. էջ 71-72 կամ 12. էջ 5) մատենագիտական ցուցակում ցույց տվող թվերի օգնությամբ կյոթ փակագծերում, հայերենում միջակետով տարանջատել ռուսերենում կետով (12. C. 71-72) և այլ լեզուներով կետով և գլխատառերով, օրինակ՝ անգլերենում (12. P 71-72):

Նոտային օրինակները և պատկերագրողները ներկայացվում են առանձին ֆայլերի տեսքով tiff կամ jpg (grayscale – 300 dpi, bitmap – 600 dpi):

Հոդվածի ներսում նոտային օրինակի և պատկերագրողման վկայականները տրվում է փակագծում առանձին պարբերությամբ.

(Օրինակ 1)

(Պատկերագրողում 3)

Ձեռագիրը պետք է համապատասխանի հոդվածների ձևավորման պայմաններին:

### 2. Տեխնիկական պահանջները

Ամսագրում ընդունվում են.

- հոդվածի սկզբում գրվում է վերնագիրը (գլխատառերով),
- հաջորդ տողում՝ հեղինակի անուն, հայրանուն, ազգանունը (գլխատառերով), նաև անգլերեն տառադարձությամբ,
- հեղինակները պետք է ներկայացնեն.  
ա. իրենց գիտական աստիճանն ու կոչումը, աշխատանքի վայրը (լրիվ անվանումը և տեղը), պաշտոնը, հեռախոսահամարը և էլեկտրոնային փոստի անվանումը (հեռախոսահամարը և էլեկտրոնային փոստի անվանումը տպագրվում է),  
բ. հակիրճ ինքնակենսագրությունը (մինչև 1000 նիշ) հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով, որը պետք է հրատարակվի,  
գ. հանգուցային կամ բանալի բառերը հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով,  
դ. հոդվածները կարող են ներկայացվել բնագրերով՝ հայերեն, ռուսերեն, անգլերեն կամ եվրոպական որևէ լեզվով. դրանք պետք է ունենան մյուս երկու լեզուներով ամփոփումներ (մինչև՝ 600 նիշ հայերեն և ռուսերեն, 1000 նիշ անգլերեն լեզվով):
- հոդվածները և աղբյուր նյութերը ընդունվում են էլ-փոստով (մեկ ֆայլով նոտային և պատկերները յուրաքանչյուրն առանձին ֆայլով (ֆայլի անունը բաղկացած է հեղինակի անուն-ազգանունից և պատկերների համարների անվանումից) կամ էլեկտրոնային կրիչներով, ֆայլի անունը հանդիսանում է հեղինակի անուն ազգանունը.  
- Ա4 ֆորմատով,  
- տեքստը տպված Ա4 թղթով, հանձնելով առանձին ֆայլով .doc  
- տեքստը հավաքած առանց Tab ստեղծն օգտագործելու և նոր պարբերությամբ,

# Խ մ ր ա գ ր ա կ ան ն ո ղ մ ե ռ ե ի պ ա հ ա ն ջ ն ե ռ

- տեքստի լուսանցքները. վերև 2.5 սմ, ներքև 2.5 սմ, աջ՝ 1.5 սմ, ձախ՝ 3 սմ, հայերեն, անգլերեն, ռուսերեն,
  - հիմնական տեքստով, տառաչափը՝ 12,
  - միջտողայինը՝ 1.5,
  - նկարները՝ մինչև 12.5սմ,
  - նոտաները, աղյուսակները և գրաֆիկան՝ սև սպիտակ,
  - ծավալուն հոդվածները կարող են ընդունվել խմբագրական խորհրդի որոշմամբ,
  - տողատակը՝ տեքստի էջում աստղանիշով, առանց ավտոմատ հրահանգի, անմիջապես\* հետո հաջորդ տողում՝ 10 տառաչափով:
  - աղբյուրի հեղինակը, վերնագիրը, հատորը, փակագծում՝ կազմողը կամ խմբագիրը, հրատարակության տեղը, հրատարակչությունը, տարեթիվը (մամուլի դեպքում նաև համարը, թերթերի դեպքում՝ տողատակում), էջը:
  - ծանոթագրությունը վերջում, համարակալումը՝ միջանցիկ:
  - հոդվածների ծավալը 0.5-1.0 մամուլ (20000-40000 նիշ և հղումները ներառված տեքստի ծավալում):
- առանց տողադարձի, առանց էջում տողատակերի,
- հղումները ներկայացնելով տառադարձությանը ռուսերենը տե՛ս՝ համապատասխան պահանջներում ստորև տե՛ս՝ հղումների հայրենի տառադարձությունը.

ա - a	ե - e	թ - th	խ - kh	ձ - dz	յ - ey	չ - ch	ս - s	ց - tz	ք - q
բ - b	զ - z	ժ - zh	ծ - ts	ղ - gh	ն - n	պ - p	վ - v	ու - u	և - ev
գ - g	է - ej	ի - i	կ - k	ճ - dch	շ - sh	ջ - j	տ - t	ւ - w	օ - o
դ - d	ը - ‘	լ - l	հ - h	մ - m	ն - vo	ր - r’	ր - r	փ - ph	ֆ - f

- հոդվածի առանձնահատկություններից ելնելով համաձայնացնելով խմբագրական խորհրդի հետ հնարավոր է նշված ծավալն ավելացնել:

### 3. Հոդվածներում ամփոփումների պահանջները

Ամփոփման գրելանքը համապատասխան բնագավառի ազատ է, որտեղ պետք է արտահայտվի ներքոհիշյալ տեսանկյունները որպես գիտական աշխատանքի բնութագրիչ հիմք.

- գիտական հիմնախնդիրը, հեղինակի լուծումը և նրա գիտական նորույթը,
- հիմնախնդրի արդիականությունը,
- ուսումնասիրության տեսական և գործնական նշանակությունը,
- նրա հետաքննարկը (արդիականությունը և նշանակությունը դիտարկվող ժամանակաշրջանում),
- հիմնախնդրի շարադրման մակարդակը (ոչ ակնհայտ լուծումները, տեսական փնտրտուքների անհրաժեշտությունը, գործնականում դժվարությունների հաղթահարում),
- հեղինակի դրույթների և եզրահանգումների համապատասխանությունը կամ անհամապատասխանությունը դիտարկվող աշխատանքի տվյալ բնագավառում գոյություն ունեցող ժամանակակից գիտական շարադրանքում,
- դիտարկվող հիմնախնդրի առաջարկվող հեղինակային լուծումները,
- աշխատանքի գնահատականը լեզվի, տրամաբանության, նյութի շարադրման, հիմնավորման, ընդհանրացումների և եզրահանգման տեսանկյուններից:

### 4. Հոդվածը քննելու և հրատարակելու կարգը

Հոդվածները կարող են ամսագրի խմբագրությանը հանձնվել հոդվածի հրապարակման թույլտվության նախնական որոշման դեպքում ամբիոնների երաշխավորմամբ համապատասխան խորհրդակցությունների կամ գիտատեղիների արդյունքներում (ամբիոնի նիստ քաղվածք) և հանձնվում են մասնագետների (2 գրախոս՝ 1-ին՝ գիտական աստիճան ունեցող երաժշտագետ, 2-րդ՝ համապատասխան ամբիոնի պրոֆեսոր, կամ դոցենտ) գրախոսության համար:

Գրախոսը որոշում է հոդվածի հրապարակման նպատակահարմարությունը, հնարավոր է նյութի լրացուցիչ մշակումից և խմբագրումից հետո: Էական փոփոխությունների անհրաժեշտության դեպքում հոդվածը հեղինակային լրացուցիչ մշակումից հետո կրկին ուղարկվում է գրախոսության նույն մասնագետին: Արվեստագիտության թեկնածուների, դոկտորների հոդվածները երաշխավորում են «Երաժշտական Հայաստան» ամսագրի Խմբագրական խորհրդի անդամների որևէ մեկի կողմից:

Գրախոսությունները պահվում են խմբագրությունում և ըստ ՀՀ ԲՈՒԿՄ պահանջի ներկայացվում:

Հոդվածները խմբագրությանը տրվում են անհատույց. ձեռագրերը չեն վերադարձվում:

## ПРАВИЛА НАПРАВЛЕНИЯ, РЕЦЕНЗИРОВАНИЯ И ОПУБЛИКОВАНИЯ НАУЧНЫХ СТАТЕЙ В ЖУРНАЛЕ "МУЗЫКАЛЬНАЯ АРМЕНИЯ" (ПАМЯТКА ДЛЯ АВТОРОВ)

Журнал "Музыкальная Армения" принимает к публикации не издававшиеся ранее (в том числе, в электронном виде) статьи, а также рецензии на научные и нотные издания. Проблематика научных статей, публикуемых в журнале "Музыкальная Армения", охватывает все области исследования, относящиеся к специальности музыкальное искусство. Объем текста статьи - 0,5-1,0 п.л. (от 20 до 40 тысяч знаков с учетом пробелов и текста библиографических ссылок), количество нотных примеров и/или иллюстраций - не более 10. В связи со спецификой материала статьи возможно превышение указанного объема одного из компонентов (текст, нотные примеры, иллюстрации) за счет остальных (по согласованию).

Статьи большого объема могут быть приняты в виде исключения по решению редакционной коллегии. Авторам необходимо также предоставить:

- 1) краткие сведения о себе: Ф.И.О., домашний адрес, контактный телефон, e-mail (будет опубликован), место работы (полное наименование и адрес), должность, наличие ученой степени, учебного звания, фамилия и инициалы в английской транслитерации;
- 2) краткую биографию (до 1000 знаков) на русском и английском языках, которая будет опубликована;
- 3) перевод названия статьи на английский язык;
- 4) ключевые слова на русском и английском языках;
- 5) краткая аннотация статьи (до 600 знаков на русском языке и до 1000 знаков на английском языке). Статьи и сопровождающие материалы принимаются по электронной почте или на электронном носителе. Именем файла является фамилия автора.

Текст статьи и все сопровождающие публикацию текстовые материалы присылаются в одном файле. Нотные примеры и иллюстрации присылаются каждая единица отдельным файлом (имя файла состоит из фамилии автора и номера примера/иллюстрации).

Текст предоставляется в электронном виде на диске с приложением распечатки, которая точно соответствует электронной версии. В электронной версии каждая статья дается отдельным файлом. Файлы пронумерованы в соответствии с порядком следования статей в сборнике.

ПРОГРАММА НАБОРА: Word for Windows (файлы: doc).

ШРИФТ: RusAria.

КЕГЛЬ: в основном тексте - 12, в сносках - 8.

МЕЖСТРОЧНЫЙ ИНТЕРВАЛ: в основном тексте и в сносках - полудторный.

СНОСКИ (включают как примечания, так и библиографические ссылки): постраничные, ставятся с использованием функции "сноска" в программе Word.

НУМЕРАЦИЯ СНОСОК: сквозная в пределах отдельной статьи.

ЗНАК СНОСКИ: арабская цифра с верхним регистром.

МЕСТО УСТАНОВКИ ЗНАКА СНОСКИ: перед запятой или точкой, но после вопросительного, восклицательного знаков и многоточия.

АБЗАЦЫ отмечаются отступом в 1 см, но не с помощью табуляции или пробелов (Формат - Абзац - Первая строка - Отступ); интервал между абзацами обычный.

ШРИФТОВЫЕ ВЫДЕЛЕНИЯ: курсив.

КАВЫЧКИ: так называемые типографские: «», кавычки внутри цитат: "".

ЦИТАТЫ: даются обычным шрифтом (не курсивом), в кавычках.

НАЗВАНИЯ. Оригинальные названия музыкальных, литературных произведений, фильмов и т. п. - как русские, так и иноязычные - везде даются обычным

шрифтом, с прописной буквы, в кавычках. Жанровые названия - без кавычек. Порядковые номера симфоний, концертов, сонат даются словами (не цифрой). Обозначения опусов не отделяются от названия запятой. Например: Прелюдия h-moll, op. 7 № 2, Второй фортепианный концерт op. 29.

ИНИЦИАЛЫ: даются полностью (двойные у русских персон, одинарные или двойные у иностранцев) и через неразрывные пробелы (комбинация клавиш

Ctrl+Shift+пробел): С. В. Рахманинов, И. Гайдн.

ТОНАЛЬНОСТИ записываются по-латыни: *C-dur, g-moll*.

НАЗВАНИЯ ЗВУКОВ записываются латинскими буквами и выделяются курсивом: *h, F, a<sup>2</sup>*.

ДАТЫ обозначаются цифрами: века - римскими, годы и десятилетия - арабскими. Использование русских букв "X", "У", "Ш", "П" в написании римских цифр, буквы "О" вместо цифры "ноль" не допускается. Слова "год(ы)", "век(а)" пишутся без сокращений.

СПЕЦИАЛЬНЫЕ МУЗЫКАЛЬНЫЕ ОБОЗНАЧЕНИЯ пишутся на языке оригинала: *staccato, rubato, diminuendo*.

НОТНЫЕ ПРИМЕРЫ. Каждый нотный пример предоставляется на диске отдельным файлом в двух видах: в формате tif с разрешением 600 точек на дюйм (при размере на весь формат - шириной 11 см) и в формате тиз (нотный набор в программе Finale). В виде распечатки примеры предоставляются на отдельных листах, прилагаемых к статье. В текст статьи нотные примеры не вставляются: в тексте дается ссылка на номер нотного примера, который соответствует номеру на прилагаемой распечатке и номеру в названии файла на диске. Нумерация нотных примеров внутри статьи сквозная.

Помимо нотного набора, необходимо также представить сканированные оригиналы нотных текстов, с которых делается набор.

ИЛЛЮСТРАЦИИ. Предоставляются на диске отдельными файлами в формате tif черно-белые - с разрешением 600 точек на дюйм, цветные - с разрешением не менее 300 точек на дюйм (при сканировании: сканирование осуществляется в размере оригинала - 100%). В виде распечатки иллюстрации предоставляются на отдельных листах, прилагаемых к статье. В текст статьи иллюстрации не вставляются: в тексте дается ссылка на номер иллюстрации, который соответствует номеру на прилагаемой распечатке и номеру в названии файла на диске.

ССЫЛКИ НА ЦИТАТЫ: Фамилия автора дается курсивом. При первом упоминании приводится полное библиографическое описание источника (см. Приложение 1). При повторном упоминании указывается только имя автора, название работы и цитируемая страница. Если ссылки на один и тот же источник даются подряд, то оформлять их следует так: Там же. С. 30. Если цитируемое издание иноязычное, то: *Ibid*. P. 79.

## ПРИЛОЖЕНИЕ 1. ТРАНСЛИТЕРАЦИЯ ПРИМЕЧАНИЙ ЛАТИНСКИМИ БУКВАМИ

a-a	г-g	ë-eo	и-i	л-l	о-o	е-s	ф-f	ч- ch	ь- <sup>‘</sup>	э-ej
б-b	д-d	ж-zh	й-j	м-m	п-p	т-t	х-kh	ш-sh	ы-y	ю-yu
в-v	е-e	з-z	к-k	н-n	р-r	у-u	ц-tz	щ-shch	ъ- <sup>‘‘</sup>	я-ya

## ПРИЛОЖЕНИЕ 2. ОБРАЗЦЫ БИБЛИОГРАФИЧЕСКИХ ОПИСАНИЙ

Авторская монография	<i>Покровский Б. А.</i> , <i>Моя жизнь - опера.</i> , М.: Музыка., 2000., - 200 с. <i>Pokrovskij B. A.</i> , <i>Moja zizn' - opera.</i> , M.: Muzyka., 2000., -200s.
Издание в нескольких томах	Переписка М. А. Балакирева со В. В. Стасовым., Т. 1., М.: Советский композитор., 1935. <i>Perepiska M. A. Balakireva s V. V. Stasovym., T. 1., M.: Sovetskij kompozitor., 1935.</i>
Сборник	<i>/Воспитание музыкального слуха., Вып. 4 (сост. Л. Н. Логинава), М.: Музыка.,1999. /Vospitanie muzykal'nogo slukha., Vyp.4 (sost. L. N. Loginova), M.: Muzyka., 1999.</i>
Статья из сборника	<i>Петров И. А.</i> , <i>О моем Учителе (воспоминания о Я. И. Заке).</i> , /Профессора исполнительских классов Московской консерватории., Вып. 1 (ред.-сост. А. М. Меркулов), М.: Музыка., 2000.
Статья из периодического издания	<i>Копен В. Дж.</i> , <i>Легенда и правда о джазе.</i> //Советская музыка., 1955 № 2. <i>Konen V. Dj.</i> , <i>Legenda I pravda o djaze.</i> , //Sovetskaya muzyka., 1955 № 2.
Статья из энциклопедии	<i>Орелович А. А.</i> , <i>Оперетта.</i> , Музыкальный энциклопедический словарь (гл. ред. Ю. В. Келдыш), М.: Музыка., 1991.
Диссертация	<i>Польдьева Е. Г.</i> , <i>Русский музыкальный авангард 10-х годов: к вопросу об истоках "новой музыки": дис. ... канд. иск. СПб., 1993.</i>
Автореферат	<i>Польдьева Е. Г.</i> <i>Русский музыкальный авангард 10-х годов: к вопросу об истоках "новой музыки": автореф. дис. ... канд. иск., М., 1993.</i>
Иностранное издание	<i>Perle J</i> <i>Serial composition and atonality, Berkeley.</i> , 1977. P. 232.
Архивный источник	ОР РНБ. Ф. 416. Оп. 1. Д. 26. Ед. хр. 14. Л. 1.
Электронный ресурс	Российская книжная палата: сайт. URL: <a href="http://www.bookchambe.ru">http://www.bookchambe.ru</a>

## ПРИЛОЖЕНИЕ 3. ТАБЛИЦА НЕКОТОРЫХ СОКРАЩЕНИЙ

<i>Сокращаемые слова и словосочетания</i>	<i>Сокращения</i>	<i>Сокращаемые слова и словосочетания</i>	<i>Сокращения</i>
до нашей эры	до н. э.	номер, номера	№ (Vol., Н. -в иностранном изд.)
и так далее	и т. д.	страница, страницы	с. (не стр. !)
и тому подобное смотри	и т. п. см.	столбец, столбцы цифра, цифры	стб. Ц.
сравни	ср.	такт, такты	т.
прочие (ее)	пр.	опус	ор.
другие (ое)	др.	доктор	д-р

